# ԷՍՊԻՏԵՐ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

# VII-VIII

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | էջ |
|---|---|
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Համազգային մեծ սուգը | 3 |
| Երջանկաճիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի կենսագրությունը | 7 |
| ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Տեսակցություն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանի հետ | 20 |
| Հայ եկեղեցու արտասահմանյան գործիչները Սովետական Հայաստանում | 22 |
| Հ. ԱՐԱՄՅԱՆ.— Վեհափառը | 27 |
| Ֆ. ԲՈՌՋԱՆՅԱՆ.— Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մանվան առթիվ | 31 |
| Հ. ՉԱՄՉԻԿՅԱՆ.— Վերջին հրաժեշտի մի քանի խոսք հանգուցյալ Հայրապետին | 33 |
| ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ | 35 |
| Արտասահմանյան նյութերի ռադիոելույթները | 38 |
| ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ | 45 |
| Հայ հավատացյալ ժողովուրդը ողբում է երանաշնորհ Գեորգ Զ. Կաթողիկոսի մահը | 51 |
| Վահան Թոշիկյան | 58 |
| Աղավնի Մեսրոպյան | 59 |
| Բ.— Համառոտ ամփոփում պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» խորագրով ուսումնասիրության | 61 |



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ՍՍՍՌԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

*Երևան, 1954 թ.*

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՍՈՒԳԸ

Երանաշնորհ և աստվածարյալ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ Նորին Ս. Ծնություն Տ. Տ. Գևորգ Զ. Կարողիկոսի մահը արժանավոր և անկեղծ վշտով ողբաց հայ հավատացյալ ժողովուրդը և՛ Հայրենիքում, և՛ ամեն տեղ «ի ծագս աշխարհի», ուր կար հայ մարդ ու հայ սիրտ:

Հայ ազգային-եկեղեցական կյանքից մեծ ու անկրկնելի, իմացական ու բարոյական հազվագյուտ ձիրքերով հարուստ մի անձնավորություն ընկավ ու գնաց հավերժի գիրկը:

Մեծ ու անչափելի է արդարև այն բափուրը, որ հանգուցյալ հավետ անմոռանալի երջանկահիշատակ Հայրապետը թողեց Իրենից հետո:

Հանգուցյալ Վեհափառի մահվան առթիվ ստացված տխուր հեռագրերն ու նամակները, թղթակցությունները ու գրությունները պերճախոս վկա են հանդիսանում հայության կրած ու ապրած մեծ վշտի:

Երանաշնորհ Հայրապետի մահը խորը սգի, տրտմության է մատնել ողջ հայ հավատացյալ ժողովրդին: Մեր բոլոր նվիրապետական Աթոռներում, եկեղեցական թեմերում կատարվել են պատշաճ ու հարգալից հոգեհանգստյան սուրբ պատարագ ու կարգ, փակվել են բոլոր հայ ծխական ու թեմական դպրոցները, սրտառուչ ու զգացված դամբանականներով հանդես է եկել հայ հոգևորականությունը: Հայ մամուլը լայնորեն է արձագանքել հայության մեծ վշտին: Քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական ու հասարակական գործիչներ, հավասար չափով բաժանել են հայ հավատացյալ ժողովրդի համազգային մեծ վիշտը:

Եվ այս ամենը պատահականություն չէր երբեք, որովհետև մեր սիրելի և պաշտելի Հայրապետի բանկագին անունն ու գործը սերտորեն առնչված են եղել հայ ժողովրդի պատմության ազգային-քաղաքական մեծ իրադարձությունների հետ: Ավելի քան 60 տարիների վրա տարածված Վեհափառի կրթական, առաջնորդական, գրական, եկեղեցական գործունեությունը մի՛շտ էլ ընթացել է հանուն հայ ժողովրդի շահերի, հանուն Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ազգային ու քրիստոնեական նկարագրի պահպանության, հանուն հայ ազգային-եկեղեցական դարավոր օրենքների և ավանդությունների պաշտպանության, հանուն Հայ դատի և վերջապես հանուն լուսաշող ու պայծառ, վերածնված Սովետական Հայաստանի:

Երանաշնորհ հանգուցյալ Հայրապետը, Իր անկաշառ հայրենասիրությամբ, ժողովրդանվեր գործունեությամբ, Իր առաքինազարդ և անբասիր կենցաղով, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նկատմամբ ունեցած Իր անսահման սիրով ու նվիրվածությամբ, դասական հոգևորականների տեսիլքով և կերպարով, արդարև բացառիկ և անկրկնելի մի

արժէք էր հայ ազգային-եկեղեցական նորագոյն պատմության մէջ և գործիչների շարքերում: Անա թէ ինչո՞ւ ողջ հայությունը իր գլուխն է խոնարհել նրա դագաղի առաջ, վշտով, հարգանքով, նվիրվածությամբ, որովհետև նա իր ողջ գիտակցական կյանքով հայ հավատացյալ ժողովրդի վշտի և ուրախության բարգմանն է հանդիսացել, ապրել ու ստեղծագործել ժողովրդի սիրով, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու գաղափարով: Նա հշմարիտ Հայր էր «ճանուրց հայության»: Եվ բովանդակ հավատացյալ հայ ժողովուրդն անկեղծ վշտով ողբաց իր Հոր, մեր օրերի նոր Հայրիկի, հայ հավատի Լուսավորչի, Հայ աղոտ դատի անենկուն և անվեհեր պաշտպանի մահը:

Երանաշնորհ Հայրապետի անունը ոսկի տառերով է գրվելու հայ նորագույն ազգային-եկեղեցական պատմության մէջ և հայ հավատացյալ ժողովրդի հոգում: Նա իր գործերով այս աշխարհում Իր անմահությունը կերտեց և լուսավոր ու անմոռաց հիշատակ բոդեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կյանքում: «Երանի՜ մեռելոցն, որք ի Տէր ննջեցին... զի գործք իւրեանց չոգան զհետ նոցա» (Յայտ., ԺԴ 13):

Գեորգ Զ.ը չի մեռել... Նա ապրում է հայ հավատացյալ ժողովրդի հոգում և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կյանքում, ինչպես չեն մեռել Լուսավորիչն ու Ներսես Մեծը, Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը, Նարեկացին ու Շնորհալին, Տաթևացին ու Կոլոտը, Աշտարակեցին ու Խրիմյանը: Չի մահացել նաև նրանց արժանավոր հաջորդը: «Հայոց Հայրապետությունը,— գրել է Նա,— հայի զգայուն սիրտն է եղել, որ դարեր շարունակ ապրել է նրա անհուն վշտերով և սակավ ուրախություններով: Հայոց Հայրապետությունը՝ հայի ստեղծող միտքն է եղել... վեհ գաղափարների մի փունջ, որ հյուսվել է հայոց մեծ հայրապետների ձեռքով. եթե հիշենք հայոց հայրապետների շարքը, որպիսի՜ պատկառելի դեմքեր կտեսնենք, որոնց առաջ հակամայից կխոնարհի մեր գլուխը... ո՞վ չի հանաչում Հայաստանի առաքելանման Լուսավորչին... ո՞վ չի հիշում երախտագետ սրտով Ս. Սահակին ու Ս. Մեսրոպին... ո՞վ իրավունք ունի մոռանալու Հայաստանյայց Առաքելական եկեղեցու իմքնուրույնության համար մաքառող, ներքին կռիվների ժամանակ համերաշխության կապ հանդիսացող, արտաքին բռնակալների բարկությունը մեղմող, հայրենի երկիրը կորստից փրկող, նուսահատ հայ ժողովրդին հույս ներշնչող անձնվեր հայրապետներին», որոնցից մինը հանդիսացավ նաև հանգուցյալ Հայրապետը. «ճշմարտապէս և ոչ կարծեօք»:

Արդարև, մեր անցյալի մռայլ և ճակատագրական օրերին, մեր անմահ նախնիքներն են առաջնորդել հայ հավատացյալ ժողովրդին. նրանք իրենց հավիտենական ինարաներից խոսել, խանգավառել ու առաջնորդել են սերունդներին, հայրենասիրության, եկեղեցասիրության և խաղաղ ստեղծագործ աշխատանքի պատգամներ են ավանդել հայության:

Մեր սրբազան և անմահ նախնիքների անունն ու նվիրական հիշատակը, սուրբ գործը այսօր էլ ոգեշնչում են հայ հավատացյալ ժողովրդին՝ բարձր պահելու հայրենասիրության սրբազան դրոշը, անաղարտ պահպանելու հայ ազգային-եկեղեցական նվիրականությունները, հայ ժողովրդի ազգային միասնության սուրբ պատգամները:

Այդ հավատով է ապրել, ստեղծագործել ու աշխատել հանգուցյալ Վեհափառ Հայրապետը: Այդ հավատով է ապրել նաև հայ հավատացյալ ժողովուրդը: Այդ հավատով է անցել նա իր արյունոտ ու փշալից հանապարհը և հասել այսօրվա լուսապայծառ իրականության: ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՐԲԵՔ ՉԻ ՄՈՌԱՑԵԼ ԻՐ ՄԵԾ ՆԱԽՆԻՔՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ, նա պայծառ աչքով, անսասան հավատով է նայել ապագայի հուսալի աչքերին: Վա՜յ այն ժողովրդին, որ կմոռանա իր մեծ մեռելներին:

Մեր սրբազան նախնիքների հոգիներին միացավ նաև Գեորգ Զ.ը: Հայաստանյայց Առաքելական եկեղեցու պատմությունը Գեորգ Զ.ի գանձակալությամբ հարստացել է մի մեծ անունով և գործով: Վեհափառը մարմնով է բաժանված Իր հոտից, Իր եկեղեցուց. նրա սուրբ հոգին, ազնվական հոգին, հավիտենական լուսեղեն խորանների կայքից կշարունակի հովվել Իր ժողովրդին...

Հանգուցյալ Վեհափառի մահվան առթիվ արտահայտված համազգային մեծ սուգը ար-

դյուն էր առանձնապես, որքան Վենափառի բարձր անձնավորության և արժանիքներին, նույնքան և ընդհանրապես՝ հայ ժողովրդի դեպի Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետությունն ունեցած որդիական նվիրումի, երախտագիտության, մեծ սիրո և խորունկ հարգանքի: ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ «ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ,— գրել է Վենափառը,— անա թե ո՛ւր է գաղտնիքը այն դյուրիչ զորության և հրապույրի, որ ունեցել են Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Հայրապետությունը դարեր շարունակ հայ ժողովրդի աչքում: Հայոց Հայրապետը՝ Լուսավորչի հինավուրց Գահի վրա բազմած, հովվական ցուպը ձեռքին և մխիթարիչ խոսքը բերնին՝ չի խոսում որպես անհատ, այլ որպես ներկայացուցիչ մեծ հաստատության՝ Ամենայն Հայոց Հայրապետության: ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՆՁ Չէ, ԱՅԼ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՐՄՆԱՑՈՒՄ» (բոլոր ընդգծումները խմբագրությանն են): Եվ հանգուցյալ Հայրապետը, «Հայրապետության գաղափարի ամբողջական երկար շղթայի վերա մի նոր օղակ ևս ավելացնելով՝ ձուլվել է հայրապետության գաղափարի մեջ»: Արդարև, հայ հավատացյալ ժողովրդի սրտառուչ հավատի և վառ զգացմունքների համար, Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետությունը, Գահն ու Գահակալը, միաձուլվել ու կազմել են մի ներդաշնակ ամբողջություն, հանդիսանալով մի անսպառ աղբյուր ներշնչումի, կորովի, հավատի, հայրենասիրության և եկեղեցասիրության:

Հայ հավատացյալ ժողովրդի կրոնական ու ազգային գիտակցության համար Ս. ԷՋՄԻԱԾԻՆՆ ՈՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑԵԼ ԵՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ: Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետությունը հայ ժողովրդի ազգային-եկեղեցական զգայուն կենտրոնն են, հայ ազգային ինքնագիտակցության, ինքնուրույնության, ազգային պահպանման հիմնական ազդակը: Ս. Էջմիածնի կաթողիկեին է նայել ու աղոթել, կռվել ու ստեղծագործել, սիրել ու գոյատևել հայ ժողովուրդը:

Այս զգացմունքն ու գիտակցությունը դարերով, Լուսավորչի անմար ու միշտ պայծառ կանթեղի նման, վառ են եղել հայ հավատավոր ժողովրդի հոգում: Ահա թե ինչո՛ւ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության հետ կապված յուրաքանչյուր ուրախ կամ տխուր իրադարձություն, անվերապահորեն առաջացնում է մի հսկայական ու ծավալուն, ժողովրդական ցույց, համաժողովրդական սիրո, մեծարանքի, երախտագիտության և կամ սգի, վշտի, տրտմության՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դարավոր ու պատմական կենտրոն Ս. Էջմիածնի հանդեպ: Ամենայն Հայոց Հայրապետությունը աշխարհում ցրված հայ ժողովրդի համար հանդիսացել է «վէմն հաստատութեան, անշարժութեան և սիրեն հրեղէն», որ առաջնորդում էր Իսրայելին դեպի Ավետյաց երկիրը՝ անապատի թափառումների տարիներին: Հայ հավատացյալ ժողովուրդը, իր դարավոր ու պատմական կենսափորձով, գիտի և հավատում է իր հոգու բովանդակ ուժով՝ Ս. Էջմիածնի կաթողիկեին և Ս. Լուսավորչի Աջի զորության:

Այսօր, ավելի քան մի այլ ժամանակ, հայ հավատացյալ ժողովուրդը, իր համազգային մեծ վշտի այս օրերին, գիտակցությամբ, համոզմունքով, երախտագիտությամբ ու վաղվա նկատմամբ պայծառ հուսով ու հավատով համախմբվում է Ս. Էջմիածնի շուրջ, Լուսավորչի Աթոռի շուրջ:

Կանցնեն համազգային սգի, վշտի, տրտմության այս ծանր օրերը, սգի սև շղարշը կվերանա այրիացած Մայր Աթոռի և հայ հավատացյալ ժողովրդի սգակիր սրտի վրայից և նորից կենչեն Ս. Էջմիածնի Մայր Տաճարի պատմական կամարների տակ զվարթ այելուներն ու հաղթական օրհներգությունները, և բոլոր հայ հավատավոր սրտերում կարձագանքի Հայաստանյայց Առաքելական եկեղեցու շարականը՝ «Եկայք, շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»:

Համազգային մեր մեծ վիշտը վերածե՛նք Ս. Էջմիածնի նկատմամբ սիրո, երախտագիտության, որդիական հնազանդության, ազ-

գային-եկեղեցական կուռ և գործուն միասնության վառ ապացույցի, Ս. Էջմիածնի շուրջ համախմբվածության դրական գործի: Ապրում ենք ազգովին, մանավանդ Սփյուռքում, քաղաքական բարդ ու դժվարին պայմաններում. հարկ է հանդես բերել քաղաքացիական արիություն, սկզբունքայնություն, քաղաքական զգոնություն, շրջահայեցողություն:

Ուշադրության արժանի է պառակտիչ այն գործունեությունը, որ այժմյանից ծավալել են հայ ժողովրդի միասնության թշնամիները: «New-York Times» թերթը, մայիսի 13-ի համարում, տպագրել է Մոսկվայի իր թղթակցի հոդվածը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մասին մասին և չարամտորեն նշել, որ իբր նոր Կաթողիկոսի ընտրությունը կովի և պառակտման դուռ է բաց անելու հայ հավատացյալների միջև: Ֆրանսիական «Paris Match» թերթը, վերջերս Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության մասին մի շարք անճիշտ տեղեկություններ հաղորդելուց հետո, ավելացնում է. «Ամերիկայի հայերը պահանջելու են, որ ընտրությունը տեղի ունենա Սովետական Միությունից դուրս»: Դրեթե նույն ոգով արտահայտվել է նաև անգլիական «Times» թերթը:

Վերև բերված թերթերի խմբագրականները, ինչպես երևում է, ծանոթ չեն հայ ժողովրդի կուռ միասնականության հետ և անհերթ հայտարարություններ են անում, սակայն այս բոլորը պատավորեցնում են մեր հավատացյալների լայն շրջանին՝ լինել վերին աստիճանի զգույշ և շրջահայաց:

Թո՛ղ համազգային այս մեծ սգի օրերին մի անգամ ևս դրսևորվի հայ ժողովրդի կամքի, ձգտումների, գործողությունների միասնությունը: Ա՛յդ են պահանջում մեզանից ո՛չ միայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահը, ժամանակի ոգին ու պատմական հանգամանքները, այլ նաև բոլորիս սիրելի ու հավետ անմոռանալի հանգուցյալ Հայրապետը, որի ողջ կյանքն ու գործունեությունը հանդիսացել է խաղաղության, համերաշխության, ազգային-եկեղեցական միասնության սրտառուչ քարոզ:

Համազգային վշտի այս օրերին, այս դասն է տալիս ողջ հայության հանգուցյալ Հայրապետը: Վեհափառի սուրբ հիշատակը պահանջում է մեզանից՝ կատարել Նրա վերջին սուրբ կամքը:

Ուխտե՛նք մեծ Հանգուցյալի բարձ հոգակույտի և խնկելի հիշատակի առաջ՝ վառ պահել մեր հոգիներում, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում Նրա վեհ պատգամները:

Ուխտե՛նք ապրեցնել Նրա մեծ գործը Ս. Էջմիածնում:

Այդ կլինի լավագույն և դրական արտահայտությունը համազգային մեծ վշտի և տրտմության:

# ԵՐՋԱՆԿԱՀԻԾԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Կազմել հանգուցյալ Վեհափառի կենսագրությունը—բավականին դժվար մի աշխատանք է, քանի որ նրա բազմամյա գործունեությունը սերտորեն կապված է եղել հայ հասարակական կյանքի հետ, իսկ Վեհի գործունեության ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական կյանքը պատշաճ լրջությամբ չի ուսումնասիրված և պատմական դեպքերն ու շատ իրադարձություններ դեռ չեն դասել իրենց անաչառ գնահատականը։ Բացի այս, Էջմիածնի Սինոդի, կաթուղիկոսական և անհատական մի շարք արխիվներում կան Վեհի գործունեության այս կամ այն կողմը արտացոլող հազարավոր վավերագրեր, որոնք դեռ չեն ուսումնասիրված—այդ նյութերը դրական-գիտական շրջանառության մեջ չեն դրված։ Ուստի և Վեհի ներկա կենսագրականի կազմողը իր առջև համեստ մի խնդիր է դնում—ձեռքի տակ եղած նյութերի հիման վրա կազմել լուսահոգի Վեհափառի կենսագրության ստվերագիրը միայն, որը, կարծում ենք, հետագայում կարող է օգտակար լինել Վեհափառի ընդարձակ և անթերի կենսագրություն կազմելու ժամանակ և որպես աստաղձ կարող է օգտագործվել։*

*Վեհափառը, ըստ Էջմիածնի Գեորգյան Ճեմարանի ուսանողական գործում եղած վկայագրի, ծնվել է 1868 թվականի նոյեմբերի 2-ին Նոր-Նախիջևան (Դոնի վրա) քաղաքում։ Այս վկայագրում ասված է,*

## ՎԿԱՅԱԳԻՐ

*Աշակերտ ծխական դպրոցի Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ Նոր-Նախիջևան քաղաքի Գէորգ Խաչատրեան Զէօրէքճեան, Նախիջևանի մէշչանտոյ որդի, ծնեալ ի Նոր-Նախիջևան քաղաքի 1868 ամի ի 2 յամսեան նոյեմբերի, յաջողութեամբ ուսաւ յընթացս երից ամաց պամենայն ուսմունս աւանդեալս ի յիշեալ դպրոցին, որոյ վասն և տուաւ նմա վկայագիրս այս եկեղեցական կնքով դպրոցին, յամին 1879, ի 18 սեպտեմբերի, Նոր-Նախիջևան։*

Տեսուչ ծխական դպրոցաց՝
ՄԻՆԱՍ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՖԱԼԵԱՆ

Ուսուցիչք՝
Կրօնուսոյց՝ ՅՈՎԱՆԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆ

Ուսուցիչ ռուսաց լեզուի և թուաբանութեան՝
Յ. ՏԷՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ուսուցիչ նայոց լեզուի՝
Մ. ՏԷՐ-ԹԱԴԷՈՍԵԱՆՑ»։

Ծննդյան ներկա թվականը, ինչպես կարելի է նկատել, մեկ տարով մեծ է, քան Վեհափառի մինչ այժմ մեզ հայտնի և պաշտոնական ճանաչված ու անձնագրում գրանցված 1869 թվականի դեկտեմբերի 2-ը։ Այս տարբերության մասին, Վեհափառի կենդանության ժամանակ, խոսք է եղել և նա հետևյալ բացատրությունն է տվել. Ճեմարան սովորելու գործուղվելիս աշակերտական տարիքը մեկ տարով փոքր է եղել, ընդունելության ժամանակ դժվարությունների չհանդիպելու համար, ծննդականում մեկ տարով մեծացրել են։ Ուրեմն, ըստ Վեհի տված բացատրության, նրա ծննդյան ճիշտ թվականը պիտի համարել 1869 թվականը, իսկ վերև բերված երկու տարբեր ամսաթվերից ճիշտը նոյեմբերի 2-ն է և ոչ դեկտեմբերի 2-ը։

Այս վկայագրում Վեհափառի ծնողները ներկայացված են որպես «մեշչան», այսինքն՝ քաղաքացի։ Վեհափառի Իրեն, ինչպես և նրա ծնողներին ծանոթ անձնավորությունների վկայությունից (Ե. Ա. Շահազիզ և ուրիշները) հայտնի է, որ Վեհի հայրը և պապը արհեստավորներ են եղել, օրվա պարենն իրենց արդար աշխատանքով ձեռք բերող համեստ փականագործ (սլեսար) արհեստավորներ։ Այդ մասին Ռուբեն սրբազանը, Վեհի Իր խոսքերից առնելով, գրում է. «Նրա (այսինքն՝ Վեհի) հայրը՝ խաչատուր Աբրահամի Զորեքչյանը, փականագործ էր և այդ արհեստը սովորել էր հոր՝ Աբրահամի մոտ։ Զորեքչյան ընտանիքը մի քանի սերունդ պահպանել է արհեստավորի կյանքը, և արհեստը ժառանգաբար ուսուցանել հաջորդներին» («Էջմիածին», 1950 թ., էջ 14)։ Այս տեղեկության հիման վրա Ռուբեն սրբազանը շատ ճիշտ եզրակացնում է. «Միանգամայն հասկանալի է, որ արհեստավորական հոգեբանությամբ պարուրված ընտանիքում մնալով և մեծացող մանուկ Գեորգը կարող էր ժառանգել և յուրացնել ժողովրդականություն և աշխատավորությանը հատուկ ուրույն հոգեբանություն և ձգտումներ»։

Վեհի սոցիալական ծագման մասին բերված վավերագրում «մեշչան» հիշվելը շատ պարզ բացատրություն ունի. այն ժամանակ քաղաքի արհեստավորները դասվում էին քաղքենիների շարքը։ Այդ նպատակով էլ, Վեհի ծննդյան վկայականը կազմողները, ցանկանալով օգնել մանուկ Գեորգին ընդունվելու Գեորգյան Ճեմարան, նրա ծնողներին դասել են քաղքենիների շարքը։

Մանուկ Գեորգը, ինչպես պատմում էր Վեհը Իր հիշողությունների ժամանակ, ընտանիքում ամենից շատ սիրվել է և խնամվել պապի՝ վարպետ Աբրահամի կողմից։ Նա է վերցրած եղել նաև երեխայի գաստիարակության գործը։ Վեհի պապը և ծնողները, լինելով վերին աստիճանի պարզ, հավատացյալ և հայրենասեր անձնավորություններ, իրենց ազդեցության խորը կնիքն են դրել մանուկ Գեորգի վրա։ Դաստիարակության գործում առանձնապես մեծ ազդեցություն է թողել նրա վրա իր մայրը՝ Կատարինեն, որը բնիկ Նոր-Նախիջևանցի է և մեծ ժողովրդականություն է վայելել որպես բարի, առաքինի, աղքատասեր և ավանդապահ մի կին։ «Մոր ժողովրդականությունը, կարոտյալներին օգնելու և մխիթարելու ամենօրյա ջանքերը, եկեղեցասիրությունը և անսահման հավատքը,— գրում է Ռուբեն սրբազանը,— խորը տպավորություն թողին մանկան հոգում» («Էջմիածին», 1950 թ., էջ 4)։

Մանուկ Գեորգը տարրական կրթությունը ստանում է Նոր-Նախիջևանի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոցում, Մինաս քահանա Փախալյանի տեսչության օրոք, որի տված վկայականը գտնվում է Վեհի Գեորգյան Ճեմարանի աշակերտական գործում։ Նա այստեղ սովորելով և ավարտելով եռամյա դասընթացը, մտնում է տեղական հոգևոր սեմինարիայի առաջին դասարանը։ Սակայն նրա առջև շուտով բացվում են կրթության և զարգացման նոր և լայն ուղիներ։

Նոր-Նախիջևանի հայ համայնքը Էջմիածնի Գեորգյան Հոգևոր Ճեմարանում մշտապես տնեցել է հինգ թուշակառու ուսանողի տեղ, որոնց համար յուրաքանչյուր տարի վճարելիս են եղել 1.500 ռուբլի։ 1879 թվականին Հոգևոր Ճեմարանում սովորող այդ հինգ թոշակառու ուսանողներից մեկը՝ Մարտիրոս Պալասլեխյանը ինչոր պատճառով հետ է վերադառնում, չի սովորում, և ահա նրա փոխարեն առաջարկվում է Գեորգի թեկնածությունը։ Հանդուցյալ Վեհափառի Ճեմարանի անձնական գործում մնացել է Նոր-Նախիջևանի քաղաքապետարանի 1879 թվականի սեպտեմբերի 19-ի № 835 գրությունը, որով միջնորդում է նա Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի տեսչության առջև՝ Պալասլեխյանի դիմաց Ճեմարանում որպես թոշակառու ուսանող ընդունել Գեորգ Խաչատուրի Զորեքչյանին։

Պատանի Գեորգը Ճեմարան է ընդունվում 1879—1880 ուսումնական տարում և

դասարանական կրթությունն ավարտում 1886 թվականին։ Այնուհետև շարունակում է սովորել լսարաններում, որտեղ նոամյա մասնագիտական հայեցի լավ կրթություն է ստանում և ավարտում 1889 թվականին։

## ՄՐՑԱԴԻՐ

Ուսումնական խորհուրդ Հոգևոր Ճեմարանի Հայոց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի վկայէ, զի Գէորգ սարկաւագ Խաչատրեան

Վեճափառի մայրը՝ տիկին Կատարինե

Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի տված վկայականից երևում է, որ նա Ճեմարանն ավարտել է ուսման լավ ցուցանիշներով։ Ներում ենք ավարտական վկայականի տեքստը.

Զկսրկքլեան, ծնեալ ի 1868 ի Նոր-Նախիջևան Քեմին Բեսարաբիոյ, յամի 1886 աւարտեալ ղընթացս ուսմանց ի Հոգևոր գպրոցի Ճեմարանիս, աշակերտեցաւ մասնագիտական բաժնի նորին յամի 1886 և յոյժ գովելի վա-

*ռուք կատարեալ զընթացս ուսմանց երից ամաց, եցոյց ի վերջին հարցաքննութեան յամսեանն մայիսի 1889 ամի յառաջդիմութիւն այսպիսի.*

| | |
|---|---|
| *Բնական աստուածաբանութիւն* | *յոյժ գովելի* |
| *Տեսական աստուածաբանութիւն* | *յոյժ գովելի* |
| *Բարոյական աստուածաբանութիւն* | —— |
| *Քննաբանութիւն Ս. Գրոց* | *յոյժ գովելի* |
| *Մեկնաբանութիւն Ս. Գրոց* | —— |
| *Բացատրութիւն Ս. Գրոց* | *գովելի* |
| *Սրբազան բեմբասացութիւն* | *գովելի* |
| *Եկեղեցական մատենագրութիւն* | *յոյժ գովելի* |
| *Եկեղեցական պատմութիւն* | *յոյժ գովելի* |
| *Տրամաբանութիւն* | *գովելի* |
| *Հոգեբանութիւն* | *յոյժ գովելի* |
| *Բարոյական իմաստասիրութիւն* | *գովելի* |
| *Մանկավարժութիւն* | *գովելի* |
| *Գիտութիւն դասաւանդութեան* | *գովելի* |
| *Մատենագրութիւն հայոց* | *յոյժ գովելի* |
| *Ընդհանուր մատենագրութիւն* | *յոյժ գովելի* |
| *Ֆրանսերէն լեզու* | *գովելի* |

*Այլ և քննեալ զշարադրութիւնն, զոր մատոյց նա ըստ նշանակեալ բնաբանի, ուսումնական խորհուրդս, ի ԺԸ դումարման իւրում ի 1-ն յունիսի 1889 ամի, սահմանեաց ճանաչել զԶՀՕՐԷՔՉԵԱՆ արժանի այսմ մրցագրի՝ դրոշմելոյ կնքով Ճեմարանիս յ—18 յուլիսի 1889 ամի, ի Ս. Էջմիածին։ Մ 115*

Տեսուչ Հ. Ճեմարանի՝
(Ա. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ)

Ուղիղ է ընդ իսկանին
Քարտուղար խորհրդոյ՝
Ռ. ՌՈՒԲԻՆԵԱՆ։

*(Ստորև՝ դիպլոմ ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով)։*

*Ճեմարանում այն ժամանակ դասախոսում էին իր ժամանակի աչքի ընկնող եկեղեցականները և հայագետները։ Իր ուսուցիչներից Վեհափառի վրա մեծ ազդեցություն է թողել Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, որին հանգուցյալ Վեհափառը հաճախ էր հիշում իր զրույցների ժամանակ՝ Իրեն համարելով նրա հետևողական աշակերտը։*

*Ճեմարանի ուսման տարիներին ուսանող Գեորգ Չորեքչյանն աչքի է ընկնում իր անուշ ձայնով և երաժշտական բացառիկ ընդունակություններով։ Բարձր դասարաններում սովորելիս նրան կարգում են դասապետ։ Հայտնի է, որ 1888 թվականի դեկտեմբերի 8-ին, Մակար կաթողիկոսի անվանակոչության օրը, Գեորգ Չորեքչյանի և Գեորգ Ահարոնյանի ղեկավարությամբ Ճեմարանի խմբի հաջող ելույթների համար Չորեքչյանին և նրա ընկերոջը նվեր է տրվում մեկական ժամացույց («Արարատ», 1888 թ., էջ 786)։ Հանգուցյալ Վեհափառը, Կոմիտասի հետ միասին, մի քանի տարի Մայր Տաճարում դասապետություն են անում։*

*Ճեմարանն ավարտելուց հետո, հանգուցյալ Վեհափառը որոշում է նվիրվել հոգևոր ասպարեզին և այդ ճանապարհով օգտակար լինել Իր Ազգին և Եկեղեցուն։ Ի դեպ, լուսահոգի Վեհափառը բացառություն չէր. 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին մի շարք մտավորականներ այդ ճանապարհով ասպարեզ ընտրեցին ծառայելու ժողովրդին։*

*Վեհափառը սարկավագական աստիճան է ստացել 1889 թվականի հունիսի 17-ին։ Նրա հետ միասին սարկավագ են ձեռնադրվել Ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետյանը, շրջանավարտ Կարապետ Տեր-Մկրտչյանը և Մեծի Տանն Կիլիկիո հանգուցյալ Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը։*

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Սինոդը վերև հիշյալ անձանց սարկավագություն թույլ տալու մասին հետևյալ որոշումն է կայացրել.*

*«Ի 16 յունիսի 1889 ամի, ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին Ամենայն Ռուսաց և լուսաւորչական հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի, յուսն զկոնդակ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց ի 15-ն սուն յունիսի № 258, յորում գրի այսպէս. «Ընդ սմին առաքելով յատեան դորին զխնդիր պատուելի տեսչի Հոգևոր Ճեմարանի Սրբոյ Աթոռոյս Արշակայ Նահապետեան և երից ուսումնասարտ աշակերտաց այնր Ճեմարանի, Կարապետի Տէր Մկրտչեան ցղնեցւոյ, Գէորգայ Չորեքճեան Նոր-Նախիջևանցւոյ և Գարեգնի Յովսէփեան մարաղեցւոյ, պատուիրեմք զմին այժմէն իսկ ընդունել զնոսին ի կարգս միաբանից Սրբոյ Աթոռոյս սոքա ընկալցեն զաստիճան սարկաւագութեան ի տասն և ութներորդում ատուր ներկայ ամսոյս, իսկ առաջինն ի նոցանց ընկալցի զկարգ կուսակրօն քահանայութեան և արեղայութեան ի տասն և ութներորդում ատուր այնր ամսոյ, կայով մնալով ի տեսչական պարտաւորութեան իւրումն։*

*Սահմանեցին. նախ՝ համաձայն կոնդակի Նորին Վեհափառութեան, զտեսուչն Ճեմարանի Աթոռոյս զպ. Արշակն Նահապետեան, և զերիս ուսումնասարտ աշակերտսն այնր Ճեմարանի՝ զԿարապետն Տէր Մկրտչեան ցղնեցի, զԳէորգն Չորեքճեան Նոր-Նախիջևանցի և զԳարեգինն Յովսէփեան մարաղեցի այժմէն իսկ ընդունել ի կարգս միաբանութեան Աթոռոյս Ս. Էջմիածնի, յորոց*




Գեորգ Սահակյանի վկայականը Լայպցիգի թագավորական կոնսերվատորիայից

զառաջինն թողով յիւրումն տեսչական պարտաւորութեան։ Զորմէ ծանուցանելով վանական կառավարութեան վանիցս, պատուիրել հողալ զամենատեսակ սիլոսոյս սննդեան նոցա ի կարդի միաբանից։ Ի երկրորդ՝ անդամոյ Սինոդիս դերապատիւ Ներսէս եպիսկոպոսի յանձնել հրամանաւ ի տասն և ութներորդում աւուր ամսոյս վերածել զվերոյիշեալ շրջեսին անձինսն յաստիճան աւագ սարկաւագութեան, և ի հետևյալ աւուր ի 18-ն ամսոյս վեր ածել զտառաջինն ի նոցունց, այն է զնահապետեանցն ի կարգս կուսակրօն քահանայութեան և աբեղայության և զվկայականսն ձեռնադրութեան մատուցանել ի հաստատութիւն Սինոդիս։

Ատենապետ Սինոդի՝
ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Ա ն դ ա մ ք՝
ԹԱԴԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԵՓՐԵՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ»։

«Արարատ» ամսագիրը Ճեմարանի տեսչի և շրջանավարտ երեք ուսանողների ձեռնադրության այդ փաստը առանձին ուշադրությամբ է նշել. «Ամսույս 17-ը և 18-ը հունիս (1889 թ.) նշանավոր օրեր էին։ Այդ օրերը կատարվեցին ի վաղուց ցանկալի ձեռնադրությունք Ս. Գայանեի վանքում՝ սրբազործությամբ գերաշնորհ Ներսես եպիսկոպոսի։ Ս. Էջմիածնի Ճեմարանը հնգետասանամյա երկունքից ետքը ի վերջո տվեց նրախայրիքը Հայ Եկեղեցուն և Ազգին։ 17-ին առավոտյան սարկավագության աստիճան ստացան Ճեմարանի տեսուչ մեծահարգ Արշակ Նահապետյանը և Ճեմարանի ուսումնավարտ պ. պ. Կարապետ Տեր-Մկրտչյան և Գեորգ Զորեքչյան ու Երրորդ լսարանի ուսանող Գարեգին Հովսեփյանը։ («Արարատ», 1889 թ., էջ 353)։

Իրենց սիրելի ուսուցիչը՝ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն այդ ձեռնադրության ժամանակ ներկա չի եղել։ Լսելով այդ մասին, նա 1889 թվականի հունիսի 29-ին շնորհավորական նամակ է գրել իր ուսանողներ Գեորգին, Գարեգինին և Կարապետին, ողջունել է նրանց կատարած քայլը, նրանցից յուրաքանչյուրին ուղարկել է իր նկարը և հանձնարարել է, որ նրանք ևս փոխադարձաբար իրեն ուղարկեն իրենց նկարները որպես հիշատակ։

Ճեմարանի տեսչությունը, տեսնելով վերև հիշված երեք սարկավագների բացառիկ ընդունակությունները, միջնորդում է Մակար կաթողիկոսի առջև՝ նրանց մասնագիտական կրթության ուղարկելու Գերմանիա, որը և իր համաձայնությունն է տալիս։ Գերմանիա դրժուղվող ուսանողների ծախսն իր վրա է վերցնում Թիֆլիսի Քամոյան եկեղեցու հոգաբարձու Գ. Աճեմյանը՝ հանձն առնելով յուրաքանչյուր տարի այդ նպատակի համար հատկացնել 1.680 ռուբլի։ Այդ մասին «Արարատ» ամսագիրը նշում է. «Նորին Վեհափառությունը բարեհաճելով ընդունել այդ նպաստը (1.680 ռ.), օրհնելով պ. Աճեմյանին և ժողովրդին իր հայրապետական օրհնությամբ և հրամայեց նոր ձեռնադրած շնորհունակ Կարապետ և Գեորգ սարկավագներին արտասահման ուղարկել, ուր և նոքա շարունակում են յուրյանց ուսումը, համաձայն պատվերի Նորին Սրբության, ըստ հրահանգության ուսումնական խորհրդո Ճեմարանիս» («Արարատ», 1889 թ., էջ 628)։

Գեորգ սարկավագը սովորելու է գնում Գերմանիայի Լայպցիգի համալսարանը՝ միաժամանակ հետևելով երկու ֆակուլտետների՝ Աստվածաբանական և Փիլիսոփայական, և մեկ տարի նախապատրաստությունից հետո ընդունվում է սովորելու Լայպցիգի կոնսերվատորիայում։

Լայպցիգում եղած տարիներին էջմիածնում գտնված իրենց մտերիմ բարեկամներին Գեորգ սարկավագի և իր ընկերների ուղարկած նամակներից երևում է, որ Գեորգ սարկավագը նյութական որոշ կարիքի մեջ է գտնվել։ Այսպես, Կարապետ սարկավագն իր 1892 թվականի հունիսի 13-ին էջմիածին գրած նամակում խնդրում է իր բարեկամներից մեկին, որ նա միջնորդի Վեհափառի առջև՝ Գեորգ սարկավագի թոշակն ավելացնելու համար. «Թող մի քիչ աւելացնէ թոշակը. տարեկան մոտ 200 մ. կոնսերվատորիայի ավել ծախս ունի նա և փողի այս ընկած ժամանակ ստիպված է խիստ նեղ ապրելու։

Երեք տարի սովորելուց հետո, էջմիածնի վանական կառավարությունը որոշում է Գերմանիայից հետ կանչել Գեորգ սարկավագին՝ ցանկանալով նրան հանձնել Ճեմարանում երաժշտության դասավանդումը։ Այս որոշման դեմ մեզ բողոք ունի գրած (1893 թ. մարտի 10-ին) նրա ուսման ընկերը՝ Գարեգին սարկավագը, որն անհրաժեշտ ենք համարում քաղվածարար մեջ բերել այստեղ.

«Հուսով եղեք, մեզանից ոչ ոք այնպես չի լինի, որ ուղարկողներին զլխման առիթ տա, Կարապետը և Գեորգը լավ են աշխատել...

Գեորգը երաժշտությունից մեծ հառաջադիմություն է արել, բայց քիչը երկու տարի ժամանակ է հարկավոր կոնսերվատորիայում քննություն տալու համար։ Ափսոս է այն

աշխատանքը, այն ծախսը, որ մինչև այժմ եղել է, եթե կիսատ հետ կանչեն։ Հենց այսօր պատմեց ինձ, թե ուսուցչապետը ինչպիսի գովասանքով է խոսեցել յուր երաժշտական շարադրության համար։ Ինչպես ամեն դիտություն, առավելապես երաժշտությունը, կա՛մ կատարյալ պիտի սովորել կա՛մ ամենևին ոչ։ Գիղարվեստը կատարելություն է պահանջում և այդ կատարելությունը ձեռք բերելու ժամանակը չպետք է խնայել։ Ինչ ասել կուզի, որ երաժշտությունը մեր եկեղեցու անհրաժեշտ կարիքներից մեկն է, իսկ կիսատ կրթությամբ ո՛չ միայն այդ պակասը լրացնել չի կարելի, այլ գուցե վնասակար է։

Գեորգ սարկավագը Լայպցիգի համալսարանն ավարտում է 1894 թվականին և վերադառնում էջմիածին՝ պաշտոնավարելով Ճեմարանում որպես երաժշտության դասատու։ Այստեղ նա մնում է միայն մեկ տարի, և 1895 թվականին տեղափոխվում է հայրենի Նոր-Նախիջևան քաղաքը և նշանակվում տեղի հոգևոր սեմինարիայում երաժշտության, եկեղեցական պատմության և բարոյագիտության դասատու։

Գերմանիայից վերադառնալուց հետո, շատ մեծ հեղինակություն է ստեղծվում Գեորգ սարկավագի շուրջը որպես պատրաստված, լեզուներ գիտցող և խոհուն անձնավորություն։ Այս մասին է վկայում 1884 թվականի դեկտեմբերի 29-ին Հուսիկ վարդապետ Զոհրաբյանի մի նամակը՝ Սուչավայի ազգային հոգաբարձության՝ իրենց մոտ հոգևոր հովիվ հրավիրելու Գեորգ սարկավագին, որն անհրաժեշտ ենք համարում մեջ բերել.

«...Ասա, ի Նախիջևան քաղաքի, հանդիպեցայ սարկաւագի ումեմն ի միաբանից Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Զօրէքչեան


Der Rector und Senat

Universität Leipzig

Georg Tscheorekchian

Գեորգ սարկավագ Զորեքչյանի ստացած վկայագիրը Լայպցիգի համալսարանի Փիլիսոփայության և Աստվածաբանության ֆակուլտետներից

Գէորգ անուն։ Սարկաւագ այդ հնգօք ամօք լուսաւոր աւարտեալ զընթացս ուսման ի Ճեմարանի Մայր Աթոռոյ ըստ տնօրէնութեան Վեհափառ Հայրապետին Հայոց Տեառն Մակարայ Ա. կաթողիկոսի, առաքեցաւ ի Գերմանիա լուսանիլ անդ եւրոպական երաժշտութիւն։ Եկաց նա ի Լայպցիգ զամս չորս և զամիսս վեց և յայսմ ամի դարձ արար ի Ս. Էջմիածին, իսկ այժմ գտանի ի Հայրենիս իւր՝ ի տես ծնողաց եկեալ։ Գիտելով, զի սարկաւագն քաջ հմուտ է եկեղեցական երգեցողութեան մերում, գիտէ և զեւրոպական երաժշտութիւն՝ ուսեալ ի Լայպցիգ, խօսի գերմաներէն, կոչեցի զնա առ իս և յայտնեցի զցանկութիւն ժողովրդեան տեղւոյդ. նա յօժարեցաւ՝ եթէ լիցի համաձայնութիւն երկուստեք. մնայ նմա ձեռնադրիլ վարդապետ և գալ այդր։ Վասն սարկաւագիդ վկայեմ, զի է նա հմուտ հայերեն լեզուի, եկեղեցական կարգաց, ևս և հայկական և եւրոպական երաժշտութեանց։ Ի բերանոյ նորա վկայեմ՝ զի նա, ի լինելն ի Լայպցիգ, լուեալ է դասախօսութիւն լաստուածաբանական ֆակուլտետի համալսարանին։ Այլն երևի հանդարտաբարոյ և ամաց իբրև 26-ից։

Այս վավերագիրը, որ այժմ Ռումինահայ կենտրոնական մատենադարանի սեփականութիւն է հանդիսանում, անվիճելի ցույց է տալիս երիտասարդ Գեորգի բարձր բարեմասնութիւնների մասին, որը նկատել էին ժամանակակիցները նրա մոտ աշխատանքի վաղ տարիներին։

Գեորգ սարկավագը, Նոր-Նախիջևանում պաշտոնավարութեան իր տարիներին, չի խնայում իր ջանքերը՝ օգտակար լինելու տեղի հայ համայնքին։ Նա կազմակերպում է Արդչախումբ և ղեկավարում է նրան, խորհուրդներով օգնում է տեղի թեմական առաջնորդին՝ կառավարության հետ վարած բանակցութիւնների ժամանակ, համախմբում է հայ մտավորականներին հայկական հասարակական կազմակերպութիւնների մեջ, ազդում է մեծահարուստ հայերին՝ օգնելու եկեղեցուն, որբերին, գաղթականներին և այլն։ Իսկ այս ամենն ավելի են բարձրացնում նրա հեղինակութիւնը։ Երիտասարդ Զորեքչյանն այնքան է սիրվում տեղի հայ հավատացյալների կողմից, որ նրանք 1913 թվականին դիմում են Ամենայն Հայոց Հայրապետության՝ ձեռնադրելու նրան վարդապետ և ուղարկելու իրենց մոտ որպես առաջնորդական փոխանորդ։ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.ի հրամանով Զորեքչյանը Նոր-Նախիջևանից կանչվում է Էջմիածին. Վեհը առաջարկում է նրան վարդապետ ձեռնադրվել։

Ուշագրավ է այն խոսակցությունը, որ տեղի է ունեցել Գեորգ սարկավագի և Գեորգ Ե. Կաթողիկոսի միջև, որը լուսահոգի Վեհի հիշողություններից առնելով, «Էջմիածին» ամսագրում տպագրված իր հոդվածում մեջ է բերել Իուբեն սրբազանը։

Երբ Զորեքչյանը Նոր-Նախիջևանից գալիս է Էջմիածին և ներկայանում է Գեորգ Ե.-ին, Վեհը դիմում է նրան հետևյալ խոսքերով.

— Քեզ հրավիրել եմ հատուկ գործի համար, սակայն պիտի խոսք տաս՝ առաձև կատարել և եթե կխոստանաս, նոր միայն կհայտնեմ կանչելուս նպատակը։

— Այն օրը, երբ ես թողեցի Ճեմարանը և վանք մտա, Հայոց Հայրապետին հավատարմություն ուխտեցի. հրամայեցե՛ք, կկատարեմ,— ըմբռնելով գործի էությունը և առանց տատանվելու պատասխանում է Զորեքչյանը։

— Որոշել եմ քեզ վարդապետ ձեռնադրել և առաջնորդական փոխանորդ նշանակել Նոր-Նախիջևանում։ Ասում էին, որ դու քո հարմարությունները չես թողնի ու գա,— շարունակում է Կաթողիկոսը։

— Ուրիշ որ ասել են, այդ թերել է նրանց համոզմունքը, իսկ իմ համոզմունքը ես հայտարարեցի,— պատասխանում է սարկավագ Զորեքչյանը։

Այնուհետև, Զորեքչյանը հարցնում է Վեհափառից, թե որքա՞ն նպատակահարմար կլինի առաջնորդական փոխանորդ նշանակվել մի վայրում, ուր ինքը երկար տարիներ եղել է քահանաներին ստորադաս սարկավագ։

— Քո մասին իմ ստացած տեղեկություններն այնքան դրական են, որ ամենևին չեմ կասկածում, որ դու պատվով կկատարես քո պաշտոնը, թե՛ քեզ և թե՛ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար,— հայտնում է Կաթողիկոսը («Էջմիածին», 1950 թ., էջ 16)։

Գեորգ Ե.ը Գեորգ սարկավագի հավանությունն առնելուց հետո, կայացնում է իր որոշումը՝ հանձնարարելով Հուսիկ արքեպիսկոպոսին ձեռնադրել նրան արեղա, որը և տեղի է ունենում 1913 թվականի հունիսի 20-ին։

Մայր Աթոռի պաշտոնական ամսագիր «Արարատում» այդ մասին կարդում ենք. «Նորին Սրբություն Ազգիս Վեհափառ Հայրապետի հրամանով Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը... հունիսի 20-ին արեղա ձեռնադրեց Մայր Աթոռի միաբան Գեորգ սարկավագ Զորեքչյանին։ Տ. Գեորգ արեղան Գեորգյան Հոգևոր Ճեմարանի ընթացավարտներից է, որ 1889 թվին սարկավագության աստիճան ստանալուց հետո ուղարկվել է արտասահման, մասնագիտորեն երաժշտություն ուսել

և վերադարձից հետո մինչև այժմ պաշտոն վարել Նոր-Նախիջևանի հոգևոր դպրոցում» («Արարատ», 1913 թ., էջ 676).

Այս ձեռնադրությունից հետո, Ամենայն Հայոց Հայրապետությունը դիմում է Ռուսաստանի Ներքին գործոց նախարարությանը

ի 25/26 հոկտեմբերի 1913 թ. Նորին Կայսերական Մեծության Ամենայն Ռուսաց Ինքնակալի հրամանով Ս. Էջմիածնի Սինոդում լսեցին Վեհափառ Կաթողիկոսի այս տարվա հոկտեմբերի 25-ի № 1.640 կոնդակը, որով ուղարկելով Ներքին գործերի տ.

Վենափառի ուսուցիչը՝ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան

և նրա համաձայնությունն առնելուց հետո, Գեորգ արքեպիսկոպոսին նշանակում է Նոր-Նախիջևանի թեմի առաջնորդական փոխանորդ։ Էջմիածնի Հոգևոր Սինոդը Գեորգ վարդապետի նշանակման այդ ակտը ձևակերպել է ստորև բերված որոշման մեջ.

նախարարի այս հոկտեմբերի 15-ի № 9.402 գրության պատճենը, հայտնում է, թե ստանալով Ներքին գործերի տ. նախարարի հաճությունը, առանձին կոնդակով նշանակել է Գեորգ վարդապետ Զորեքչյանին Նոր-Նախիջևանի փոխանորդ, որպիսի կարևոր պաշտո-

նը երկար ժամանակից ի վեր մնացել էր թափուր։ Հայտնելով վերոգրյալը, Նորին Սրբությունը պատվիրում է շտապով տնօրինել ինչ որ արժան է՝ Տ. Գեորգ վարդապետին յուր նոր պաշտոնատեղին ուղարկելու, նույնպես և նրա փոխանորդական ռոճիկի մասին, որ ստանալու է առաջիկա նոյեմբեր ամսի մեկից։

Հրամայեցին։— Ճանաչել Տ. Գեորգ վարդապետ Չորեքչյանին Նոր-Նախիջևանի փոխանորդ համաձայն Վեհափառ Կաթողիկոսի կոնդակի և պատվիրել Մայր Աթոռի գանձապահին կարճել նրա ռոճիկը այստեղ նոյեմբերի 1-ից և առաջադրել Բեսարաբիայի կոնսիստորիային տալ նրան նույն թվից փոխանորդական ռոճիկ և ճանապարհածախս, համաձայն Սինոդիս որոշած չափի։ Այս մասին տեղեկացնել Մայր Աթոռի գանձապահին և Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի կոնսիստորիային։

Նախագահ Սինոդի՝
ԳԵՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Անդամներ՝
ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԵՓՐԵՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԲԱԲԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ»։

Մեծ աշխատանք էր սպասում երիտասարդ Գեորգ վարդապետից թեմը. անհրաժեշտ էր մտածված, խելոք աշխատանք՝ թեմի անկազմակերպ վիճակին վերջ դնելու համար, որը կապված էր պաշտոնյաների տեղաշարժելու և նրանց իրավունքներն ու պարտականությունները ճշտելու խնդրի հետ։ Գեորգ վարդապետը, իր ձեռնադրության նախօրյակին գրած նամակներից մեկում (1913 թ. հոկտ. 20-ին) Բեսարաբիայի և Նոր-Նախիջևանի թեմի վիճակի մասին խոսելիս հետևյալն է նշում. «Գալով մեր եկեղեցու ներքին վարչությանը՝ պիտի ասեմ, որ այնքան անկազմակերպ եղածը չգիտեի. ո՛չ մի օրենք, ո՛չ մի կարգ, անորոշություն պաշտոնյաների իրավունքների և պարտականությունների։ Այս բոլորից հետո դժգոհություններ բնական է, որ տեղի կունենան, կարողացածին չափ պետք է աշխատեմ կարգեր սահմանելուն նպաստելու»։

Թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնավարությունն ժամանակ է, որ Գեորգ վարդապետ Չորեքչյանը դրսևորում է վարչական իր բացառիկ ընդունակությունները և տաղանդը։ Իր շուրջը համախմբելով տեղի հայրենասեր մտավորականներին, նրանց գործուն աջակցությամբ, կարողանում է լուծել տեղի հայ հասարակական կյանքի հետ կապված մի շարք կարևոր հարցեր, որոնք չէին լուծվել իր նախորդների ժամանակ։ Թե այդ հարցերն իր ժամանակի համար ինչ կարևոր նշանակություն ունեին Նոր-Նախիջևանի հայկական համայնքի համար և, ընդհանրապես, հայ ազգային կյանքում, անհրաժեշտ ենք համարում բերել միայն երեք հարց, որոնց լուծման մասին գրել է Գեորգ վարդապետը Նոր-Նախիջևանից 1916 թվականի հունիսի 4-ին Մայր Աթոռի դիվանապետ Տիրայր Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանին ուղղած իր մի նամակում. «Պետրոգրադում բացի իրեն պատգամավոր լինելուց՝ երեք խնդրի համար աշխատեցի, երեքն էլ հաջողությամբ լուծվեցան. ա) թեմական դպրանոցի փրավունքների խնդիրը, որի համար շուտով զեկուցագիր կներկայացնեմ, բ) ծխական դպրոցների տուսուցիչների զինվորակոչից ազատելու խնդիրը և գ) քահանայական ընկերության հաստատության հարցը»։

Գեորգ վարդապետը, Վեհափառին ուղարկած մի այլ նամակում (1916 թ. սեպտ. 14), խնդրում է արտոնել իրեն գնալու Թբիլիսի՝ տեղի աչքի ընկնող մտավորականների հետ խորհրդակցել և լուծել հետևյալ հարցերը.

«ա) Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցի աշակերտներին համալսարան մտնելու առթիվ նախարարության կողմից պաշտոնապես առաջարկված հարցերը ի՞նչպես պիտի հասկանալ և նորա նկատմամբ, ի պահանջել հարկին, ի՞նչ դիմում հնարավոր է անել առանց հայկական ոգուն և հիմնարկության բուն գաղափարին վնաս բերելու։

բ) Խորհրդակցության նյութ դարձնել այն հարցը, թե ի՞նչ եղանակով և ի՞նչ ձևով հնարավոր է դիմումներ անել կրոնն ու հայոց լեզուն պետական բոլոր կարգի դպրոցներում պարտադիր ճանաչել տալու և շտատի մեջ մտցնելու համար, և այս առթիվ ի՞նչ աշխատանքներ են կատարվել։

գ) Բեսարաբիայի և մասամբ Աստրախանի թեմի եկեղեցական ծխական դպրոցները լուսավորության նախարարության հսկողությունից հանելու և ըստ առաջնության հոգևոր

իշխանության ենթարկելու ճանապարհը դրտնելու եվ ապա կատարված բոլոր աշխատանքների և Ակրակացության մասին զեկուցանել Ձերդ Վեհափառության»։

ուղղությամբ։ Ազգագուտ այդ աշխատանքը մի կողմից բարձրացնում է նրա հեղինակությունը Նոր-Նախիջևանի հայ համայնքում և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, իսկ մյուս կող-

Գեորգ սարկավագ Զորեֆչյանը Նոր-Նախիջևանում պաշտոնավարած տարիներին

Գեորգ վարդապետը Նոր-Նախիջևանի իր պաշտոնավարության տարիներին աշխատել է անել կարելին՝ Նոր-Նախիջևանի հայ համայնքը կազմակերպելու և նրա մեջ հայրենասիրական զգացմունքներն ուժեղացնելու

մից՝ կասկածանքի տակ ձգում ցարական կառավարության մոտ, որն սկսում է հետապնդել նրան։

Մեզ է հասել Պետերբուրգում ցարական կառավարության Կրոնական մինիստրության

հայ թարգմանչի մի նամակը՝ դիվանապետ Տիրայր սրբազանին՝ կապված Գարեգին և Գեորգ վարդապետներին Սինոդի անդամ առաջադրելու խնդրին (նամակը գրված է կառավարությունը Գեորգ վարդապետին կասկածելի անձն է ճանաչում այն պատճառով, որ Գեորգ վարդապետի հորինած «Տէ՛ր, կեցո՛ց երգի վերջին տունը հայրենա-

Գեորգ վարդապետ Զորեֆչյան

1916 թ. ապրիլի 1-ին), որի մեջ նա «խորհրդարար» հայտնում է, որ մեծ դժվարության է հանդիպել կառավարության մոտ Գեորգ վարդապետի թեկնածությունը հաստատելու ժամանակ, քանի որ ցարական սիրական ուժեղ շեշտ ունի։ Անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ այդ նամակից մի հատված.

«Դիմանալով Վեհի դիմումներին Սինոդի նոր անդամների և երկու առաջնորդական

թեկնածուների մասին՝ հենց այսօր կրնամ հավաստիացնել, որ չնայած շատ առարկությունների կառավարության կողմից Զորեքչյանի... Զավենի (հոգուտ նորա) և Վահան Տեր-Գրիգորյանի վերաբերմամբ, ինձ դժվարությամբ հաջողեցավ ի գրավ հանել նորին Սրբության առաջարկությունը. բոլորեքյան էլ համաձայն այսօրվա կայացած նախորոշման (որը կառաջարկվի շուտով նախարարի ի ստորագրություն և ապա ի հաստատություն Թագավոր Կայսեր) կհաստատվեն իրենց պաշտոններում այս նվագ, իսկ ապագայում միջնորդությունը պիտի լինի պատճառաբանյալ հիմնավոր փաստերով և ոչ իրար հակասական... (և խոսելով Գեորգ վարդապետի վերաբերյալ եղած առարկության վրա, ավելացնում է)... Ոչ պակաս առարկություն եղավ և հայր Զորեքչյանի մասին. երեք տարի սրանից առաջ, Վեհի նախիշխանում եղած ժամանակ, ճաշկերույթի դլխին պատահած դեպքի առթիվ, որի մանրամասնությունները ժամանակին («Էջ՞ր, կեցո՛ւ երգի վերջին տունը երգելու համար) Զվոսիքինը ղեկուցել էր մեր դեպարտամենտին և ես ստիպված էի նախարար Մակարովին գրավոր կարծիք հայտնել այդ մասին և բացատրություն տալ, մինչև որ հնարավոր եղավ համոզում կայացնել, որ մեջտեղ ոչ մի չարամտություն չի եղել։ Ինչևիցե, գործի մեջ որովհետև կար, այժմ նորից խոսք եղավ, թե հնարավոր է արդյոք այդ վարդապետին առաջարկել Թագավոր Կայսեր հաստատության, որը իբր թե թույլատրել է իրան անվավեր երգ երգել պաշտոնական ճաշկերույթի ժամանակ, կառավարության ներկայացուցչի առաջ։ Այդ կարծիքն էլ թեև մեծ դժվարությամբ մեջտեղից վերացվեցավ և նորա մասին էլ որոշում կայացավ, սակայն միևնույն ժամանակ, Գարեգին վարդապետին ճանաչողները դեպարտամենտում զարմանք հայտնեցին, թե ինչո՞ւ Վեհը նրան Սինոդի անդամության թեկնածուների ցանկի մեջ երկրորդ տեղը դասել է Զորեքչյանից հետու։ Առ այդ միայն կրցա այսքանը ասել. ի՞նչ արած, քանի որ Վեհի կամքն այդպես է. Գարեգին վարդապետը ըստ ինչ-ինչ հանգամանաց նորին Սրբության վստահությունն պակաս է վայելում, ուստի և հարկ է համակերպվել առ այժմ...»։

Սինոդի անդամ ընտրվելուց հետո, Գեորգ վարդապետը կանչվում է էջմիածին, ուր ավելի մեծ, ավելի պատասխանատու գործ է հանձնարարվում նրան։ Այժմ, այս ծանր աշխատանքի շրջանում, ավելի ցայտուն ձևով են դրսևորվում Գեորգ վարդապետի տեսական, դիվանագիտական և կազմակերպչական ընդունակությունները։

Ընտրվելով սինոդի անդամ, Գեորգ վարդապետը, իր կարգակից Գարեգին վարդապետի հետ միասին, աշխատում է անել կարելին՝ սինոդի աշխատանքները դուրս բերելու ինքնուրույն ճանապարհի վրա, աշխատելով թույլ չտալ ցարական պրոկուրորին՝ տեղի-անտեղի միջամտության Հայ Եկեղեցու գործերում։ Այդ հողի վրա ցարական չինովնիկների շրջանում սկսում են նոր դժգոհություններ Գեորգ վարդապետի դեմ, այդ առթիվ նույնիսկ դիտողություններ են արվում, սակայն Գեորգ վարդապետը, առանց շեղվելու իր որդեգրած ճիշտ ուղուց, շարունակում է իր քաղաքականությունը։

Գեորգ հայր սուրբը էջմիածնում մեծ աշխատանք է տանում նաև Մայր Աթոռի Մատենադարանը կազմակերպելու և նոր ձեռագրերով հարստացնելու ուղղությամբ։ Նա նույնպես կազմակերպչական մեծ գործունեություն է հանդես բերում՝ հայկական գրի և գրականության ստեղծման 1500-ամյա և հայկական տպագրության 400-ամյա հոբելյանը տոնելու ուղղությամբ։

(Շարունակելի)

# ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆԻ ՀԵՏ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ ամենապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանը, որ մայիս ամսի 23-ին, օդային ճանապարհով, Բեյրութից (Լիբանան) Երևան ժամանեց՝ մասնակցելու համար երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. մեծագործ և հայրենասեր Հայրապետի թաղման արարողություններին, ինչպես հասկացվում է իր ազգանունից էլ, սերվում է ասեցի հանրածանոթ Աջապահյան գերդաստանից, որ Կիլիկիայի Կաթողիկոսական Աթոռին տվել է մեկից ավելի նշանավոր կաթողիկոսներ:

Արտասահմանում մոտից ծանոթ լինելով Նորին Սրբազնության անձին և ունեցած գործունեության, ուրախությունս մեծ եղավ տեսնելով նրան՝ առողջ և առույգ, միշտ պատրաստակամ ծառայելու Ազգին, Հայրենիքին և Հայաստանյայց Եկեղեցուն, որոնց օգտին նվիրաբերել է նա իր ամբողջ կյանքը:

Նա, սիրալիր ու ժպտուն, ընդունեց ինձ «Ինտուրիստ» հյուրանոցի օդասուն և լուսաշող իր սենյակում և բարեկամաբար հրավիրեց, որպեսզի տեղ գրավեմ դիմացը: Ես երախտագիտությունս հայտնեցի Նորին Ամենապատվության՝ ունկնդրություն շնորհելու խնդրանքս չմերժելուն համար և ապավինելով իր հայրական հերոդամտության, արեցի հետևյալ հարցումները.

ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑՈՒՄ.— Ի՞նչ տպավորություն գործեց արտասահմանի հայության վրա՝ Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. մեծագործ Կաթողիկոսի վախճանման բոթը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Այրարատյան Մայր Աթոռ Գահակալ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. մեծագործ ու մեծահամբավ Հայրապետի անակնկալ մահվան բոթը երբ հասավ մեզ, անմիջապես հատուկ շրջաբերականով հրահանգեցինք Կիլիկիո թեմերուն բոլոր առաջնորդներուն, որպեսզի եկեղեցիներուն մեջ հանդիսավոր պատարագ մատուցանեն և հանգստյան պաշտոն կատարեն Վեհափառ Կաթողիկոսի հոգվույն համար: Կիլիկյան թեմերու ամբողջ հավատացյալ ժողովուրդը մեծ վշտով սգաց հայրենասեր ու ազգանվեր Հայրապետի անդարմանելի կորուստը՝ գունդագունդ ներկա գտնվելով հոգեհանգստյան արարողություններուն: Հայ ազգային կրթական և առևտրական հաստատությունները փակվեցան այդ օր՝ ի հարգանս հայրենասեր և ազգընտիր Հայրապետի:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑՈՒՄ.— Ի՞նչ տպավորություն գործեցին Զերդ Ամենապատվության վրա հոգելույս Հայրապետի թաղման արարողությունները: Ինչպե՞ս գտաք Մայր Տաճարում կատարված երգեցողությունները և հայ ժողովրդի հարգանքի արտահայտությունը՝ դեպի մեծ Հավատացյալը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Հոգելույս Հայրապետին թաղման այնքան վեհաշուք և փառահեղ արարողությունը, ի ներկայության Անոր դագաղին առջև երկյուղածությամբ և ջերմեռանդ ոգիով կանգնած 12 եպիսկոպոսներու, տասնյակ վարդապետներու և հիսունե ավելի քահանաներու, խորապես ազդեց մեր վրա:

Մայր Տաճարի սքանչելի երգչախումբը, ղեկավարությամբ հայրենադարձ երաժշտագետ Հրանտ Գեորգյանի, պատարագը երգեց վերին աստիճանի հա-

ջող ներդաշնակությամբ: Իսկ գերազանցապես հուզիչ էր, ըլլա՛ Վեհափառ Հայրապետի անշունչ մարմնին հրաժեշտ տվող և ըլլա՛ Անոր հուղարկավորության և թաղման մասնակցող բազմաբազմաբար հայաստանյայ հայ ժողովուրդին կողմե անսուլլուտ կարգապանությամբ և ակնածանքով արտահայտված հարգանքն ու մեծարանքը՝ հավիտենականության միացած ժողովրդանվեր Հայրապետին հանդեպ:

ԵՐՐՈՐԴ ՀԱՐՑՈՒՄ.— Ի՞նչ վիճակում են այժմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի փոխհարաբերությունները և նրանց կապակցությամբ ի՞նչ է Ձեր Սրբազնության թաղանքը:

ԹԱՏԱՍԽԱՆ.— Նախամեծար Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի փոխհարաբերությունները ի վաղուց անտի եղած են սիրալիր և եղբայրական: Ստեղծված հոգեկան ու բարոյական այդ կապը կմնա և պիտի մնա միշտ ամուր: Մեր թաղանքն է, որ նվիրապետական երկու Աթոռներուն մեջ փոխհարաբերության և եղբայրական սիրո կապը առավել ևս սերտանա՝ հոգուտ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվուն:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՐՑՈՒՄ.— Որպես համբերատար Հայր, ընդունեցիք բազմաթիվ հայրենադարձների այցելությունը և փոխադարձաբար այցելեցիք ոմանց բնակարանները: Ի՞նչ տպավորություն կրեցիք նրանցից:

ԹԱՏԱՍԽԱՆ.— Մայր Հայրենիք կատարած մեր այս երկրորդ այցելությունը, երբ մեկ կողմե մեզի ընծայեց հոգելույս Հայրապետի թաղման ներկա ըլլալու և Անոր անշնչացած խնկելի մարմնույն առջև մեր որդիական հարգանքն ու մեծարանքն արտահայտելու տխուր ու դժբախտ առիթը, մյուս կողմե ստեղծեց նաև ուրախ առիթը՝ ընդունելու բազմաթիվ հայրենադարձներու այցելությունը և անոնցմե շատերուն տուները այցելելու:

Ուրախ ենք հայտնելու, որ բոլոր հայրենադարձները կապրին լավ ու գոհացուցիչ պայմաններու տակ: Անոնք տեր են դարձած հանգստավետ բնակարանների, կամանակցին Հայրենիքի վերաշինության սրբազան աշխատանքին, դարձած են ինքնաբավ ու կվարեն շենշող կյանք՝ շնորհիվ կառավարության հայրախնամ հոգատարության և Մայր Երկրի բնիկ հայ եղբայրներու ազնիվ վերաբերումին:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՐՑՈՒՄ.— Ձեր Սրբազնությունը նախապես էլ այցելած էր Հայաստան և վերադարձին խանդավառած Սիրիայի և Լիբանանի հայությունը՝ Մայր Հայրենիքում մինչև այն ժամանակ կատարված նվաճումներով: Այս երկրորդ այցելության ընթացքին ի՞նչ եղավ Ձեր կրած տպավորությունը Հայաստանից:

ԹԱՏԱՍԽԱՆ.— 1941 թվականին մեր Հայաստան այցելութենեն ասդին անցած 13 տարիներու ընթացքին, Մայր Հայրենիքեն ներս կատարված նկատելի հառաջդիմությունները և կյանքի բոլոր մարզերուն մեջ իրականացված վերելքն ու նվաճումները մեծապես խանդավառած են մեզ: Հայաստանի մայրաքաղաք Երևանը, հայկական հարտարապետությամբ շինված արդիական նոր շենքերով, ծառազարդ լայն պողոտաներով, հանրային սմանչելի պարտեզներով և այլ գրոսավայրերով շատ գեղեցիկ քաղաքի մը տպավորությունը կթողու ամենազգի այցելուներուն վրա: Հպարտությամբ պետք է հայտարարել, որ Հայրենիքը տարվե տարի կծաղկի ու կբարգավաճի՝ ի մեծ ուրախություն բոլոր հայերուն: Ի խորոց սրտի կոչնեմ ծաղկող ու բարգավաճող Հայաստանի իմաստուն ղեկավարներն ու ստեղծագործ հայ ժողովուրդը:

Հարցումներս վերջացել էին: Վերադարձի անփորձ և ապահով հանապարհորդություն մաղթելով, հրաժեշտ տվի Նորին Ամենապատվության, որի շրջները, այդ ոգեպեն, աղոթք էին մրմնջում ի նպաստ համայն աշխարհի խաղաղության:

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Մայրապետն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.-ի թաղման կապակցությամբ արտասահմանից էջմիածին էին ժամանել Հայ Եկեղեցու զգալի թվով բարձրաստիճան հոգևորականներ և աշխարհական պատվիրակներ։ Թաղումից հետո հյուրերը ցանկություն հայտնեցին մոտիկից ծանոթանալու Սովետական Հայաստանի տնտեսական, կուլտուրական, հասարակական կյանքին, որի համար նրանց տրվեցին բոլոր հնարավորությունները։

Հյուրերը դիտեցին պատմական հուշարձաններ, եղան արդյունաբերական ձեռնարկություններում, ծանոթացան կոլտնտեսային գյուղի կյանքին, եղան գիտական, կրթական և կուլտուրական հաստատություններում։ Անձնական զրույցներ ունեցան տնտեսության և կուլտուրայի մի շարք գործիչների հետ։ Հյուրերից շատերը զրուցեցին հայրենադարձների հետ, եղան նրանց նորակերտ տներում։ Ամենուրեք նրանք արժանացան ջերմ ընդունելության։

Պատվիրակներն ընդունվեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Ե. Քոչինյանի կողմից, որի հետ ունեցան զրույց՝ իրենց հետաքրքրող մի շարք հարցերի շուրջը։

Մեկնելուց առաջ Հայ Եկեղեցու արտասահմանյան թեմերի պատվիրակները զրույց ունեցան Սովետական Հայաստանի մամուլի ներկայացուցիչների հետ, որոնց պատմեցին հայրենի երկրից ստացած իրենց տպավորությունների մասին։

— Առաջին անգամ ես Սովետական Հայաստան այցելելուց 13 տարի առաջ, 1941 թվականին,— ասաց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը։— Թե՛ առաջին և թե՛ այս անգամ ես ուրիշ ունեցա ծանոթանալու հայրենի երկրի կյանքի տարբեր ասպարեզներում։ Նախորդ այցելությանս համեմատ երկիրը հսկայաբար հառաջդիմած է և ես շատ կիանդավառվիմ։ Տվյալներ աշխատանքը նկատելի է ամեն տեղ։ Այն կկատարվի հետևողական, փուլթեռանդ կերպով։ Մայր Հայրենիքի քարդավաճումը մեզ անսահման ուրախություն կպատճառեր։ Ես ուրիշ ունեցա այս անգամ լինելու Լենինական, այցելելու Գեղարդի վանքը, տեսնելու Մայր Հայրենիքի տեսարժան վայրերը, անոր բարեմասնություններ՝ այն ամենը, որոնք տեսնել կփափագին արտասահմանյան շատ հայեր։ Ես ամեն տեղ ականատես եղա մեր սիրելի երկրի փուլթեռանդ հառաջդիմության։ Այն ամենը, ինչին մենք ականատես եղանք, կվկայե ժողովուրդի և անոր ղեկավարների ջանադիր աշխատանքի մասին։

Մեր մաղթանքը՝ մեր սիրելի Հայրենիքին, մեր մտավորական դասին, ժողովուրդի ղեկավարներուն, որ իրենց պարտականությունը ավելի շողշողուն ձևով կատարեն՝ ի փառս Մայր Հայրենիքի հետագա ծաղկման ու բարգավաճման։ Կմաղթենք մեր ժողովուրդին և անոր առաջնորդներուն նորանոր հաջողություններ, աշխատանքի անսպառ կարողություն բոլոր մարզերուն մեջ։

— Հայրենիք այցելած արտասահմանի հայ հոգևորականներեն ես երրորդ ամենահին եմ,— ասաց Հյուսիսային Ամերիկայի հայոց Այնթեբյան թեմի առաջնորդական տեղապահ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը։— Առաջին անգամ Հայաստան այցելեցի 1935 թվականին, երկրորդ անգամ՝ 1945 թվականին, և երրորդ անգամ՝ այժմ։ Այն ժամանակվան համեմատությամբ անճանաչելի փոփոխություններ են տեղի ունեցած երկրի մեջ։ Մեր ազատագրված Հայրենիքը մեզ կզարմացնե։ Հայ ժողովուրդը իրեն գտած է։ Շինարարական այդպիսի եռանդը հատուկ է հայ ժողովուրդին։ Անոր ստեղծագործական աշխատանքի պտուղները դրսևորված են աշխարհի շատ վայրերուն մեջ։ Այդ ստեղծագործական կորովի շնորհիվ, հայրենի հողի վրա ապրող ժողովուրդը մոխիրներեն դուրս

բերավ երկիրը։ Ապացույց՝ Արովյան և Ստալինյան պողոտաները։ Հավատացած եմ, որ տասը տարի հետո որ գամ, հին փողոցներու փոխարեն պիտի բարձրանան Լենինի հրապարակին նման կոթողներ։

Իր խոսքի վերջում նա ասաց.

— Ուր որ ալ ըլլանք, հայ ենք և պիտի պաշտպանենք Հայրենիքը։

Հարավային Ամերիկայի հայոց Կաթողիկոսական պատվիրակ Սիոն Եպիսկոպոս Մանուկյանն իր խոսքն սկսեց այսպես.

տագա հայրենադարձության գործին մեջ։ Այդ կարևոր է և անհրաժեշտ։ Ժողովուրդը չի կրնար ապրիլ առանց Հայրենիքի, ինչպես որ ծառ մը չի կրնար առանց արմատի աճիլ։ Հայկական «ծիրանի ծառը» արմատ չի բռներ օտար հողի վրա, հայ հողի վրա կաճի։ Կհուսանք, որ Սովետական Հայաստանի կառավարությունը պատշաճ միջոցներ ձեռք կառնե այս ուղղությամբ։

— Գերաշնորհ խաղ սրբազանը պատշաճ ձևով դրվատեց Սովետական Հայաստանի

Մի խումբ պատվիրակներ Երևանի գործարաններից մեկում

— Սովետական Հայաստանի կառավարությունն ամեն դյուրություն ստեղծեց մեզ համար՝ տեսնելու և ծանոթանալու Մայր Երկրի նվաճումներուն՝ տարբեր մարզերու մեջ։ Այն ամենը, ինչ ես տեսա՝ ինձ անբեկանելի դիմի։ Դժվար է հիշատակել աշխարհի մեջ քաղաք մը, որ կարճ ժամանակի մեջ կարենար այնքան արագ հառաջդիմել, ինչպես Երևանը։

Հայաստանի ժողովուրդը խանդավառ է, նյութապես ապահով։ Ես հանդիպեցա շատ հայրենադարձներու և խոսեցա անոնց հետ, անոնք իրենց վիճակեն լիովի գոհ են և ձեռք-ձեռքի կաշխատին Մայր Երկրի փրենց քույրերուն ու եղբայրներուն հետ։

Մենք կհավատանք, որ Հայրենիքը շատ բան ունի ընելու Սփյուռքի հայության հենվաճումները,— ասաց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Դպրեվանքի տեսուչ Գերբենիկ Եպիսկոպոս Փոլատյանը։— Ես կուզեի կետ մը նշել։ Այս երրորդ անդամն է, որ առիթ կունենամ այցելել Հայրենիքը և ամեն անգամ կմեկնիմ գոհ տպավորություններով։ Այս անդամը գնահատեցեց իմ նախկին տպավորությունը։ Մեծ ուրախությամբ մենք իմացանք, որ Սովետական կառավարությունը իր վրա է վերցուցեր Ս. Էջմիածնի Մայր Տաճարի՝ որպես պատմական հուշարձանի, բարեհաճորդման շնորհակալ գործը։ Սփյուռքի հայության անսահման գոհունակություն կպատճառե կառավարության այս վեհանձն քայլը և նրախտագիտությամբ կլեցնե անոր սիրտը բոլոր այն բաներուն համար, որոնք

եղած են Հայրենիքի տնտեսական ու կրթական վերելքի մարզերուն մեջ։

Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչ Հայրիկ վարդապետ Ասլանյանն իր խոսքը գլխավորապես նվիրեց Սովետական Հայաստանի ճարտարապետական արվեստի զարգացմանը։

— Օպերաներ, թատրոններ շատ տեսած ենք,— ասաց նա,— բայց Հայաստանի մեջ մեր տեսածները կգերազանցեն անոնց։ Ինչ որ այստեղ տեսանք՝ կմնա սիրելի։ Մառն իր արմատով է ծառ, ըսած է իմաստունը և ես Երևանի շենքերու վրա կտեսնեմ այն նորը, որ հինն ալ նկատի ունի։

— Մեզ հիացմունք պատճառեց հայկական գյուղի ավանդական հրուրապրոթյունը,— շարունակում է նա։— Մենք գացինք Արուաշատի շրջանի Նորաշեն գյուղը։ Կոլտնտեսություններու մեջ եղած և առաջ տարվածը իբրև հավաքական գործ՝ շատ գնահատելի է։ Արարատյան դաշտը հիանալի կերպով կցուցադրեն։

Իմ ընդհանուր տպավորությունները շատ խանդավառ են։ Կառավարությունը կընեմ ամեն ինչ, որպեսզի Հայաստանը Խորհրդային Միության ամենակարևոր հանրապետություններեն մեկը դառնա։

Իբրև հայ և կրոնավոր կրնամ ըսել, որ դպրոցներու, համալսարաններու և ուսանողներու անհամեմատ թիվը հպարտությամբ կլեցնեմ մեր սիրտը։

— Այսօր,— շարունակեց նա,— երբ առաջին անգամ ներկայացանք վարչապետին, երբ ձեռքը սեղմեցի, ըսի. «Հպարտ եմ և երջանիկ, որ կսեղմեմ Հանրապետության կառավարության նախագահի ձեռքը՝ այն բոլորի համար, որ ձեռք է տվեր մեր ժողովուրդը, մեր Հայրենիքը։

Նույն Պատրիարքարանի պատվիրակության անդամ Հայկազուն վարդապետ Աբրահամյանը համեմատություն արավ 1945 թվականի իր տեսած Երևանի, երբ առաջին անգամ առիթ է ունեցել լինել, և ներկա Երևանի միջև։

— Ամենի ճիշտը տվ մեկ համեմատություն կառելի չէ ընել,— եզրակացնում է Հայր Հայկազունը։— Այն ատեն Հայաստանը տխուր էր, Երևանը գյուղաքաղաք էր, տունները խարխուլ։ Այն ատեն չխանդավառվեցա։ Երկրորդ անգամ շատ լավ էր։ Պատերազմներեն ելնելեն վերջ շատ է հառաջդիմել։ Ինձ համար դժվար է լեզվով և դոչով նկարագրել այն, որ մեր կառավարությունը ըրեր է։ Գրամ չէ խնայված դինարարության համար։ Խանդավառ է կրթական մասը, կինոն, թատրոնը, համալսարանը։ Հսկա հառաջդիմություն կա և շատ դյուրություններ են ստեղծված կառավարության կողմե։ Հայ գյուղացին առաջ կաշխատեր տրիշի համար, փոկ այսօր ազատ քաղաքացի է, կաշխատի և կբարգավաճի։ Ջրանցքները, էլեկտրակայանները, գործարանները կվկայեն ներկա կառավարության արդար աշխատանքի մասին։ Այսօրվա Հայաստանը, մանավանդ Երևանը, նկարագրել անհնարին է, պետք է զգալ հոգիով։ Իմ փափագն է, որ ամեն հայ տեսնե իր Հայրենիքը և գոհանա։ Կաղոթեմ, որ Աստված անսասան պահե Մայր Հայրենիքը։

Դամասկոսի թեմի Կաթողիկոսական փոխանորդ և ընտրյալ առաջնորդ Շավարշ վարդապետ Գուլումճյանն ասաց.

— Առաջին այցելությունս է Մայր Հայրենիքին, որուն պետական կյանքը, շինարար աշխատանքն ու բարգավաճ վերելքը կողջունեմ անխառն հիացմունքով ու որդիական սիրով։

Հազարամյա ստրկությենեն ազատագրված Հայաստանը, համեմատաբար կարճ ժամանակաշրջանի մեջ, ընդամենը երեք տասնամյակի ընթացքին, ունեցեր է խոյանք ու վերելք իր մշակույթի և գիտության բոլոր ասպարեզներուն մեջ։ Պետությունը ամեն միջոց ի գործ կդնե, որ գիտնականը արդյունավետ աշխատի։

Լուծված է դարերու վրեժը։ Արդարև, այդպես պետք է ըլլար՝ որպես երաշխիք ու արդասիք վաղնջական քարտորակ մշակույթի տեր հայ ժողովուրդի ճակտի քրտինքի և ստեղծագործ տաղանդի։ Այդ սրտագրավ և պանծալի վերելքը մեր Հայրենիքը կդառնա առաջավոր մշակույթի տեր ազգերու կարգին։

Թող շեն ու մշտաշող մնա մեր Հայրենիքը և անոր լուսատու ճառագայթները ջերմացնեն հայրենասիրական հրով տոգորված Սփյուռքի հայությունը։

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի դիվանապետ Շահե վարդապետ Աճեմյանը խոսեց այն տպավորության մասին, որ ստացել է Հայաստանի կուլտուրական և կրթական հաստատությունների մեջ կատարվող աշխատանքներից։

— Եվրոպական շատ երկիրներու մեջ,— ասում է նա,— գիտնականները, մտավոր աշխատանքի մարդիկ չունին այնպիսի հնարավորություններ, որպիսիք ունին Սովետական Հայաստանի գիտնականները։ Այստեղ ամեն ինչ կկատարվի անոնց բեղմնավոր գործունեության համար։ Այդ մասին ես համոզվեցա՝ այցելելով Գիտություններու ակադեմիան, Պետական համալսարանը, Մատենադարանը, ինստիտուտները, դպրոցները։ Այստեղ ամեն դյուրություն ընձեռված է

մտավոր աշխատանքի, գիտության զարգացման համար։ Մեծ է ուսման ծարավը երիտասարդության մեջ։

Վիրանանում հրատարակվող Կիլիկիո Կաթողիկոսարանի «Հասկ» ամսագրի խմբագիր և գրող Սիմոն Սիմոնյանը շարադրեց Սովետական Հայաստանից ստացած իր տպավորությունները։

— Սովետական Հայաստանի մարդիկ,— ասաց նա,— կհատուցեն մեր պատմության նախորդ հազարամյակի ընթացքին սոցիալական ու մշակութային հառաջդիմության բնագավառներում մեջ գոյացած պարտքերը, պարտքեր, որոնք հառաջացեր են ժողովուրդն անկախ, պատմական դաժան իրադրություններու հետևանքով։ Եվ պետք է ըսել, որ այդ պարտքերը կհատուցվին մեծ վերադիրներով, բարձր տոկոսներով։

Այնուհետև Ս. Սիմոնյանը ընդգծում է այն հոգատարությունը, որ ցուցաբերվում է հայ ժողովրդի անցյալի կուլտուրական ժառանգության նկատմամբ՝ ճարտարապետության, մատենագրության, պատմական հուշարձանների պահպանման բնագավառներում։

Նշելով Սովետական Հայաստանի նվաճումները արվեստի, գրականության, գիտության, ժողովրդական տնտեսության բոլոր ասպարեզներում, Ս. Սիմոնյանը ասաց.

— Հիացա Սովետական Հայաստանի հավաքական կյանքի վրա։ Հիացա մարդոց վրա։ Այս բոլորը ըրեր են մարդիկ, մարդոց գործն է, որ իմ հիացմունքի առարկան եղավ։ Հիացա մարդոց լավատեսության վրա։ Կրկդաս, որ հաջոր օրը մարդը կդառնա ավելի լավատես։

— Ես այցելեցի Թալինի շրջանը, գացի իմ հարազատներուն, հայրենակից սասունցիներուն. ծանոթացա անոնց ապրուստին, նիստ ու կացին։ Ամե՞ն, ամե՞ն ինչ, որ տեսա հարազատ Հայաստանի մեջ, իմ սիրտը լեցուց անհուն բերկրանքով և հպարտությամբ։ Ես կուզեմ իմ խոսքը վերջացնել հետևյալ բառերով. «Ով որ հայ է, բարեկամ պետք է ըլլա Սովետական Հայաստանին»։

Հոգեշնորհ Գնել վարդապետը մի խումբ հայրենադարձ երիտասարդների հետ

Իրենց տպավորությունները Սովետական Հայաստանի մասին Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը (Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմից) և Վարդան եպիսկոպոս Պալճյանը (Ռումինահայ թեմի առաջնորդ) ներկայացրին գրավոր։

«Արժեքի ամեն դատում՝ բաղդատությամբ միայն հնարավոր է,— գրում է Տիրան արքեպիսկոպոսը.— 1945-ին ես առիթ ունեցա դտնվելու Երևան։ Ինը տարի ետք դարձյալ Հայաստանի մայրաքաղաքը և շրջակայքը տեսնելու բախտ կունենամ։

Բաղդատելով իմը տարի առաջվան վիճակին հետ, վիճակ, որ ստեղծված էր երկրորդ աշխարհամարտի ահավոր իրադարձություններու հետևանքով, կտեսնեմ, թե Երևանի վիճակը շատ մեծ չափով բարելավված է այժմ։ Եվ մայրաքաղաքին ծաղկումը կպատկերացնե ծաղկումը ամբողջ երկրին։ Ո՞չ միայն շենքերն ու ճամբաները, ճարտարարվեստական ու երկրագործական արդյունաբերությունը՝ այլև կյանքի ամեն մարզերուն մեջ կատարված նվաճումները ժողովուրդին համար ստեղծած են շատ ավելի հանգստավետ պայմաններ, քան առաջ։

Ուրախ եղա տեսնելով մանավանդ գրեթե ամբողջովին ջնջված ըլլալը հետքերուն այն տառապանքին՝ զոր մեր ժողովուրդը կրեց, ուրիշ ժողովուրդներու հետ միասին, համբերությամբ և քաջությամբ՝ երկրորդ աշխարհամարտի ընթացքին։

Երևանի նոր շենքերուն գեղեցիկ հայկական ինքնուրույն ոճը կցոլացնե մեր ժողովուրդի հոգիին գեղեցկությունը։ Նույնը կցոլացնեն նաև Հայաստանի ծաղկող արվեստի այլ արտահայտությունները։

Որքան ատեն որ տևե խաղաղությունը և շարունակե երկրին բարգավաճումը՝ ես վստահ եմ, թե ավելի պիտի պայծառանա ժպիտը հայ ժողովուրդի դեմքին և ավելի լուսավորվի անոր հոգիին մեջ իր առաքելության գիտակցությունը։

Այդ է, որ կցանկա ամեն հայ՝ Մայր երկրի մեջ, թե արտասահմանի մեջ։

Այդ կցանկամ և ես ի բոլոր սրտեն։

«Որպես մեկը, որ հինգերորդ անգամն է, որ այցելեցի մեր Մայր Հայրենիքը,—գրում է Վազգեն եպիսկոպոս Պալճյանը,— ուրախությամբ և հպարտությամբ կհաստատեմ, թե իմ ամեն այցելության առիթով տեսած եմ նորանոր շինարարական իրագործումներ մեծ չափերով։

Մանավանդ եթե ի նկատի ունենանք, որ մենք փոքր ժողովուրդ ենք և մեր Հայրենիքը իր տնտեսական հնարավորություններով անցյալի մեջ չափազանց սահմանափակ եղած է, պետք է խոր երախտագիտությամբ մեր հայացքը ուղղենք դեպի ռուս եղբայր ժողովուրդը, որ, իր և ամբողջ Միության լայն հնարավորություններով նեցուկ եղավ մեր երկրին, որով ան դարձած է ճշմարտապես բարգավաճ և հառաջադեմ երկիր մը գյուղատնտեսությամբ, ճարտարարվեստով և մշակութային կյանքով։

Տեսնելով և շոշափելով նորկա ծաղկյալ իրականությունը, մենք կհավատանք ամենայն հայոց մեր Հայրենիքի ոսկի ապագային։

Վերջում պատվիրակները խնդրեցին մամուլի միջոցով շնորհակալություն հայտնել Սովետական Հայաստանի կառավարությանը և բոլոր այն հիմնարկներին, կազմակերպություններին ու անձանց, որոնք սիրալիր ու հյուրասեր ընդունելություն ցույց տվին իրենց։

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ)

Հ. ԱՐԱՄՅԱՆ

# Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ը

Երկու նախկին ճեմարանական ընկերներ, միմյանց հասակակից և օծակից, նույն տարում և համարյա միաժամանակ կաթողիկոսացան և դրանով հանդիսացան առիթ համազգային, համաժողովրդական ցնծության և խանդավառության։

Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցն ու Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ Գեորգ Չորեքչյանը սրտակից ու մտերիմ ընկերներ են եղել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դրասեղաններից, և այդ բարեկամությունը աճել ու ամրապնդվել է տարիների հետ միասին։

1945 թվականի ապրիլի 8-ին էր, որ Գարեգին արքեպիսկոպոսը օծվեց Անթիլիասում և դարձավ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա. Կաթողիկոսը, մեծաշուք հանդիսավորությամբ, որին ներկա էին ո՛չ միայն Կիլիկյան թեմերից, այլև հարևան երկրներից՝ Պաղեստինից, Անդրհորդանանից և Եգիպտոսից եկած տասնյակներով եկեղեցական և աշխարհական գործիչներ և տասնյակ հազարներով ժողովուրդ։

Դրանից ավելի մեծահանդես, ավելի հուզիչ և սրտագրավ արարողություն տեղի ունեցավ Ս. Էջմիածնում, մոտ երեք ամիս հետո։

Ազգային-եկեղեցական համագումար էր Էջմիածնում, ուր հավաքվել էին Հայաստանի և Սովետական Միության զանազան թեմերից հասած պատգամավորներ, ինչպես նաև աշխարհով մեկ հողմացրիվ եղած արտասահմանյան պատգամավորներ՝ հայրենի եզերք հասած անդրծովյան և անդրօվկիանոսյան հայկական համարյա բոլոր դաղութներից։ 111 պատգամավորներ էին, որ միաձայնությամբ Ամենայն Հայոց Հայրապետության Գահի համար Գահակալ ընտրեցին Գեորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին, որն հուլիսի 3-ին օծվեց և դարձավ Գեորգ Չ. Կաթողիկոս Ամենայն Հայոց։ Այնինչ Էջմիածնի Մայր Տաճարի դարավոր կամարների տակ արձագանքում էին այս մեծ համբավն արար-աշխարհի հայության ծանուցանող ցնծաձայն զողանչները, համագումարի պատգամավորները լաց էին լինում ուրախությունից։

Այս տողերը գրողը բախտավորությունն ունեցավ ներկա գտնվելու այս պատմական մեծ նշելության՝ տամկացած աչքերով, խընդալից հոգով։

Կիլիկիայի Գարեգին Ա. Կաթողիկոսը, որն անձամբ մասնակցում էր այս համագումարին, և Գեորգ Չ. Հայրապետը այնքան խորը հարգանքի, սիրո և հիացքի առարկա էին ողջ հայության կողմից, որ տարվում էինք մոռանալու նրանց արդեն մոտ ութսունամյա հասակը և այն պատիր հույսն ունեինք, որ նրանք գուցե կլինեն դարակյաց՝ իրենց դարավոր ու փառավոր Գահերի վրա...

Բայց մեր պատիր ինքնահանգստացումին մեջ առաջին ցավագին զարթոնքն ունեցանք 1952 թվականի հունիսին, երբ Անթիլիասից գուժկան հեռագիրն հաղորդեց, թե ոչ ևս է Գարեգին Ա. Հայրապետը Կիլիկիայի...

Գեռևս Կիլիկիայի թափուր Գահի վրայից սգի քողը չվերացած, դեռևս հոգելույս Գարեգին Վեհի մահվան կսկիծի կոտտանքը չմեղ-

մացած, ահա ուրիշ ցնցիչ ու ցավագին հարված Հայ Եկեղեցուն... ո՛չ ևս է Ամենայն Հայոց Հայրապետը...

Թափուր են մեր Հայրապետական երկու Գահերը և մեր սրտերը՝ սգատխուր...

❁❁❁

Վեհ՝ իր պարթև և ուղղորդ հասակով, վեհ՝ իր շարժուձևերի մեջ, վեհ՝ իր զգացմունքներով և մտածողությամբ, վեհ՝ իր յուրաքանչյուր խոսքով և արտահայտությամբ, վեհ՝ իր բովանդակ անձնավորությամբ — այդպիսին էր հոգելույս Գեորգ Զ. Հայրապետը։ «Վեհափառ տիտղոսն ինքնին գալիս էր շուրթերիդ՝ Նրան դիմելիս, և եթե այդ բառը արդեն ստեղծված ու դարավոր գործածությամբ նվիրագործված չլիներ, որպես յուրաքանչյուր Հայոց կաթողիկոսի կապված պատվանուն, պետք էր ստեղծել այն՝ հատկապես Գեորգ Զ. Կաթողիկոսի համար։

Նրան տեսած, Նրա հետ զրույց ունեցած յուրաքանչյուր մարդ, լիներ մեր աղնյա թե օտարերկրացի, անվրեպ ունենում էր Նրանից վեհության այդ տպավորությունը և խոստովանում այդ։

Հոգելույս Գեորգ Զ. Կաթողիկոսի նկարագրի ակնբախ բնորոշ մյուս գիծը Նրա իմաստությունն էր։ Իմաստությամբ ակաղձուն էր Նրա հայացքը, իմաստուն էին Նրա աչքերը, իմաստուն՝ ա՛նգամ Նրա լռությունները։

Մեր հին կաթողիկոսներից ոմանց անվան անրաժան կերպով կցված է բնորոշող մի բառ. մին՝ «Շինող» է, մյուսը՝ «Ընորհալի», ինչ հարկ լիներ Գեորգ Զ. Հայրապետին էլ բնորոշող մի որակում տալ, պիտի այդ որակումը լիներ «Իմաստուն»— Գեորգ Իմաստուն։

Արծվային սրատեսությամբ ու խորաթափանցությամբ օժտված միտք էր Նա։ Ժամանակին մեջ հեռավորը և տարածության մեջ հեռավորը չէին կարող վրիպել Նրա մտքի տեսողությունից։ Դրա համար էլ պատմության դեմքերն ու դիպքերը, ինչպես նաև ներկայումս հեռաստաններում գործող անձերն ու կատարվող եղելությունները տեսնում էր հստակորեն։ Հեռավոր հայ գաղութներում գործող հոգևորական թե աշխարհական գործիչների մասին, ինչպես նաև այդ գաղութներում տեղի ունեցող դեպքերի մասին ուներ զարմանալի ճշգրիտ ճանաչողություն, շատ անգամ ավելի ճշգրիտ, քան այն մարդկանց մոտ, որոնք անձամբ ապրել և գործել էին տվյալ գաղութում երկար տարիներ... Նրա հետ հանդիպումներն ու զրույցները անփոխարինելի էին մտքիդ ու հոգուդ համար։ Հեռանալով Նրանից, զգում էիր, որ մի բանով աճել ես, որ ավելացել է ճանաչողությունդ մարդկանց և իրերի, դեմքերի և դեպքերի մասին։ Հեռանում էիր՝ ինչպես հեռանում ես իմաստալից մի մատյանից, ցավելով, որ գիրքն ավարտվեց։ Բայց գիրքը, ինչքան էլ իմաստությամբ ու ճամով-հոտով գրված լինի, միշտ միևնույն բանն է կրկնում, թեկուզ վերընթերցես տասն անգամ։ Իսկ Իմաստուն Կաթողիկոսի հետ յուրաքանչյուր վերահանդիպումիդ, լսում էիր նորը, անտիպը, անակնկալը, տեսնում էր հոգիդ։

❁❁❁

Այս իմաստուն Հայրապետը, այս բազմաբեղուն միտքը ուներ գեղեցիկ մտահղացումներ, լավ մշակված հիանալի ծրագրեր, բայց կարողացավ կենսագործել մեկ մասը միայն։

Որովհետև իր տեղապահության տարիներն համընկան պատմության ամենավիթխարի պատերազմի տարիների հետ։ Ազատասեր և խաղաղատենչ մարդկության ամբողջ ուժերը պետք էր լարել մեկ ուղղությամբ միայն — դեպի հաղթանակ՝ ընդդեմ մարդկությունը ստրկացնել ձգտող խավարի ուժերի։ Ազգընտիր Տեղապահն արեց Իր ամբողջ հնարավորն այդ ուղղությամբ։ Նրա մտահղացումն ու Նրա նախաձեռնությանց արդյունքն էին, Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին, «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուները, որոնց գոյատևման գործին լծեց, Իր ազդու կոչերով և կոնդակներով, Սիբիրի հայությունն էլ։ Նշանակելի եղավ Նրա դերը Կովկասի պաշտպանության գործում, որի համար Պետության կողմից արժանացավ շքանշանի։

Հետպատերազմյան տարիներին էլ՝ իր կաթողիկոսացումից հետո, պայմանները բարենպաստ չէին, իսկ անելիք շատ գործեր էին։

Վեհափառը, տեղի տալով կովկասյան թեմերի հոգևորական և աշխարհական գործիչների դիմումներին և պնդումներին, հավանել էր, որ տոնվի Իր ծննդյան ութսունամյա հոբելյանը. դա կհանդիսանար առիթ, որ Սփյուռքի թեմերից բազմաթիվ ներկայացուցիչներ դային Մայր Աթոռ, ամրապնդվեր կապը Մայր Աթոռի և թեմերի միջև, Մայր Հայրենիքի և Սփյուռքի միջև։ Այդ ծրագիրը հնարավոր չեղավ կենսագործել։

Վեհափառը, երկար տարիների Իր փորձի և Իր խորը խորհրդածությունների հիման վրա, ամիսներով տքնել էր դիշեր ու ցերեկ և շարադրել Հայաստանյայց Եկեղեցու սահմանադրության նախագիծը, որ Էջմիածնում դումարված ազգային-եկեղեցական համագումարի կողմից պետք է քննարկվեր և վավերացվեր։ Այդ հնարավոր չեղավ քաղաքական լարվածության հետևանքով։

Նույն այդ պատճառով հնարավոր չեղավ հաճախակի նվիրակություններ ուղարկել արտասահման, ինչպես ծրագրել էր Վեհը։ Կարելի չեղավ արտասահմանից ստանալ Ճեմարանի և Մայր Աթոռի մյուս կարիքների համար թեմերից խոստացված նյութական օգնությունը։

Հակառակ այս բացասական ազդակներին, Գեորգ Զ. Կաթողիկոսն այնուամենայնիվ կարողացավ, շնորհիվ վերև նշված Իր վեհությանն ու իմաստությանը, հսկայական գործ կատարել և հանդիսանալ Էջմիածնի զարթոնքի մեծ ճարտարապետը։ Նա կարողացավ Մայր Աթոռը դուրս բերել այն հարաբերական ծանր վիճակից, ուր ընկել էր Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին։

Վեհափառի օրով Հայ Եկեղեցին բոլորեց հոգևոր զարթոնքի մի նոր շրջան։ Վաղուց դադարած «Արարատ» ամսագրի փոխարեն ստեղծեց «Էջմիածին» ամսագիրը։ Վաղուց փակված Գեորգյան Հոգևոր Ճեմարանի փոխարեն վերարացեց նոր Ճեմարան։ Նա կարողացավ ստեղծել նոր միարանություն, հներին վերախմբելով Իր շուրջը և նոր հոգևորականներ ձեռնադրելով։ Վերակազմակերպեց Հայաստանի և Սովետական Միության սահմաններից ներս գտնվող թեմերը։ Հակառակ քաղաքական լարվածության, որից առավելագույն չափով օգտվում էին հայ ժողովրդի ներքին թե արտաքին թշնամիները, Վեհափառ Գեորգ Զ.ը կարողացավ բարձրացնել Էջմիածնի հմայքն ու հեղինակությունը Սփյուռքի թեմերում և գործուն ղեկավարություն ցույց տալ արտասահմանյան թեմական առաջնորդներին, Պատրիարքական Աթոռներին։

Էջմիածնի համար դարավոր ավանդություն է շահմանափակվել զուտ կրոնական-հոգևորական գործունեությամբ, այլ, որպես հարազատ ժողովրդի անբաժանելի մաս, մտահոգվել նաև ազգի ընդհանուր բարօրությամբ ու ճակատագրով։

Այսպես է, որ Վեհափառը անտարբեր չմնաց, երբ հայ ժողովուրդը, Համաշխարհային երկրորդ պատերազմի վախճանին, ձգտում էր վերստանալ բռնագրավված իր ազգային հողերը։ Պատմական մնալու սահմանված իմաստուն, փաստալից և համոզիչ մի դիմումով մեծ տերությունների պետերին, Իր հայրական հեղինակավոր և ազդու ձայնը միացրեց ընդհանուր ազգի դիմումներին։

Վեհափառը կոնդակով դիմեց արտասահմանյան թեմական առաջնորդներին, որպեսզի նրանք առավելագույն չափով աջակցություն ցույց տան հայրենադարձության մեծ շարժումին։

Վերջին տարիներս Վեհափառի գլխավոր մտահոգությունն ու մտահոգությունն էր խաղաղասերների շարժման հաղթանակը։ Դրա համար էլ Նա մասնակցեցավ խաղաղության գործը ամրապնդելու ձգտող բազմաթիվ ժողովների, ունեցավ մի շարք ազդու ելույթներ, բանավոր թե գրավոր, խաղաղության օգտին։

Բերում ենք այն հայտարարությունը, որ Վեհափառը բարեհաճեց անել այս տողերը գրողին 1950 թվականի օգոստոսին, վերադարձին այն ժողովից, ուր Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի և Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Կալլիստրատի հետ միասին՝ ձայն էր բարձրացրել հանուն խաղաղության.

«... Խաղաղության առավելություններն ակներև են։ Խաղաղության պայմաններում մարդկային կյանքի կորուստ չի լինում.

մարդիկ աշխատում են և ստեղծագործում, աշխատում են երկար և երջանիկ ապրել, և այդ յուրաքանչյուր մարդու իրավունքն է։ Խաղաղության պայմաններում է, որ ստեղծվում են տնտեսական լավագույն կյանքի, կենսամակարդակի հարաճուն բարձրացման միջոցներ, ստեղծագործվում են արվեստի, գրականության հրաշակերտներ, առաջադիմում է գիտությունը։ Կան պնդողներ, որ պատերազմը բարիք է, ինչպես օրինակ ոմն գեներալ Շասինի...։ Բայց այդ պնդումն անհիմն է։ Կան պնդողներ, որ պատերազմը առաջ է բերում առաջադիմություն, կատարելագործություն։ Իսկ ի՞նչ բնագավառում— զենքերի բնագավառում։ Այսինքն կատարելագործվում են մահվան և քանդումների գործիքները։ Իսկ դա չարիքի առաջադիմությունն է հանդիսանում։ Ո՛չ, ինչ կողմից էլ քննենք, պատերազմը միայն և միայն չարիք է ծնում։

Խաղաղությունը միայն հնարավորություն է տալիս երջանիկ կյանքի, ստեղծագործական թափի, արվեստի հրաշակերտների գեղակերտումին։ Մեր արվեստի, շինարարության, գրականության կոթողները չե՞ն ստեղծվել այն ժամանակները, երբ մեր ժողովուրդը հարաբերաբար խաղաղ կյանք է ունեցել։ Իսկ սովետական շրջանի երեսուն տարիներին ի՞նչու առաջադիմեցինք այս աստիճան և ունեցանք մեծամեծ կենսագործումներ բոլոր բնագավառներում։ Որովհետև վայելեցինք անընդմեջ խաղաղություն, եթե չհաշվենք Հայրենական պատերազմի շուրջ չորս տարիները։ Հասարակական-տնտեսական նոր հասարակարգում, երբ մարդիկ խաղաղ կյանք ունեն, ընդունակ են հրաշքներ գործելու... Մեր ամենօրյա աղոթքն է, որ խաղաղությունը թագավորե աշխարհի վրա։ Մեծ գործ են կատարում խաղաղասերները. օրհնյալ լինեն նոքա։

Այս տողերը քաղված են ավելի երկարաշունչ մի հայտարարությունից, որ Վեհափառն արել էր մեզ և որ ամբողջությամբ լույս տեսավ «Էջմիածին» ամսագրի 1950 թվականի հուլիս-օգոստոսի միացյալ համարում։

Որովհետև խաղաղության պահպանման և ամրապնդման գործը մնում է՝ ինչպես բովանդակ մարդկության, այնպես էլ մեր ժողովրդի համար օդի և ջրի չափ կենսական, մեկ անգամ էլ ընթերցողի առաջ ենք դնում հայրապետական պատգամը, որ այժմ ավելի է արտառուչ և ներգործուն, լինելով մի տեսակ անդենականից հնչող կոչ. կո՛չ, որ խաղաղության մարդասիրական և աղգասիրական մեծ և նվիրական պայքարին զինվոր լինի յուրաքանչյուր հայ, աշխարհի ո՛ր կետի վրա էլ գտնվելիս լինի։ Հոգելույս Վեհի վերջին կամքն է այդ։

Հավերժ փա՜ռք մեծագործ Գեորգ իմաստուն Հայրապետի անմահ հիշատակին։



Ֆ. ԲՈՌՉԱՆՅԱՆ

(Հոգևոր Ճեմարանի դասախոս)

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.Ի ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

(Ճառ սգո սեղանի շուրջ)

*Երեմիա մարգարեի հետ ես էլ եմ ողբում՝ «Սուգ առին ճանապարհք Սիոնի...»։ Արդարև, սուգ առին հայկական Սիոնի՝ Էջմիածնի ճանապարհները։ Ու գալիս են հազարավոր սգակիր մարդիկ, վշտի թախծոտ դեմքերով, գալիս են մոտ թե հեռու վայրերից, աշխարհի բոլոր անկյուններից, գալիս են եկեղեցական թե աշխարհական, մահտես և տրտում, գալիս՝ շրջապատելու Մեծ Հայրապետի դագաղը, մասնակցելու համազգային այս մեծ սգի հանդեսին. չէ՞ որ այլևս հավիտյան պիտի չտեսնեն Նրա շնորհալի դեմքը, որովհետև «Գնաց մարդն ի տուն իւր յաւիտենից»։*

*Ամբողջ հայ ժողովուրդը հուզվեց իր փմաստուն Հոր և պատվական, անզուգական Հայրապետի անդարմանելի կորստի առթիվ։ Եվ Ս. Էջմիածին փութաց հայ ժողովուրդը՝ իր սիրելի Հայրապետին հրաժեշտ տալու։*

*Վախճանվեց մեր հայրապետներից ամենահմայունություններից և աշխարհի ամենագեղեցիկ հոգի ունեցող կրոնապետներից մեկը։ Գեղեցկությունը բարին է, իսկ բարին կապված է խղճի հետ։ Եվ հանգուցյալ Վեհափառ Հայրապետը մարմնացած քրիստոնեական խղճի էր, այդ բարի ամենասուրբ իմաստով։ Նա խղճով ապրեց և խղճով բարի հիշատակ թողեց իր ետին, Իրեն ճանաչողների սրտերում։ «Մենք, հայերս որքա՞ն պարտական ենք Սովետական Կառավարությանը, որ մեզ ազգովին փրկեց. ի խղճե պետք է երախտագետ լինենք։ Ես մի ցանկություն ունեմ— ամբողջ հայերը հավաքել մեր հոդի վրա,— ասում էր Երջանկահիշատակ Հայրապետը։ Հայրենասիրության մարմնացումն էր Նա։ Հայրենիք և եկեղեցի, Հայաստան և Ս. Էջմիածին՝ Նրա աղնվական հոգու մշտավառ երկու կանթեղներն էին, որոնց լերմությամբ և լուսով ապրեց ու գործեց Նա ավելի քան վաթսուն տարի։ Մի երջանիկ օր, երբ Վեհափառն ինձ Ճեմարանի կրոնի դասախոս և վերակացու ընտրեց, ասաց. «Սիրի՛ր և սիրեցրո՛ւ ուսանողներին, որպես քո հարազատ որդիներին, Հայրենիքն ու Հայ Եկեղեցին և ջանա՝ միշտ նրանց հոգում վառ պահել Հայրենիքի սերն ու հայ հավատի նվիրական հուրը, որոնցով ապրել և ստեղծագործել է մեր տաղանդավոր ժողովուրդը։*

*Հանգուցյալի ո՞ր մեկ առաքինության մասին խոսեմ. մի հարուստ գանձ էր Նա, գանձ անհատնում հայրենասիրության, եկեղեցասիրության, ժողովրդասիրության, մարդասիրության և խաղաղասիրության։ Որքա՞ն հմուտ մանկավարժ էր Վեհափառը, և որքա՞ն ուրախանում էր, քննության ժամանակ ուսանողների հաջողությունները տեսնելով։ Միշտ անմեղ ժպիտ կար այդ մեծ մարդու դեմքին, կարծես թե նեղանալ չկար Նրա համար։ Գալիս էր Նա Հոգևոր Ճեմարանի բոլոր հանդեսներին և ուշի-ուշով ունկնդրում։ Ներունի Հայրապետի համար հոգնիլ չկար. որքա՞ն սեր, որքա՞ն եռանդ ուներ։ Ցանկապատել տվից Իր այգին, տունկեր տնկել տվեց, բայց ավա՞ղ, Իր ծառերի պտուղները չկարողացավ վայելել։ Այս կարճ և վաղանցուկ կյանքում շատ քչերն են վայելել իրենց գործերի արդյունքները. «Զի անցանեն կեանք մարդոյ որպէս շամանդալիս,— ասում է Ս. Գիրքը։*

*Քրիստոնեական համեստության, խոնարհության օրինակ էր Նա, բոլորի հետ հայրաբար և եղբայրաբար էր վարվում, Նրա*

դեմերը միշտ բաց էին բոլորի առաջ։ Վարվեցողության հիանալի տակտ ուներ Հանդուցյալը մեծի և փոքրի հետ։

Ս. Էջմիածնի գեղեցիկ երկնքի տակ, աստղազարդ գիշերներում, նստում էինք երկուսով։ Խոսում էր Նա մեծ մարգարեների հատուկ տեսլապաշտությամբ Աստուծո, Ավետարանի, կրոնի փիլիսոփայության մասին հմտությամբ, գիտությամբ, կարդում էր ինձ մոտ աստվածաբանների գրքերից և բացատրում էր, պատմում Իր անցյալ կյանքից, Իր տեսած մարդկանց մասին, Իր խոսած քարոզների մասին։ Այդ օրերը իմ կյանքի ամենաերջանիկ և անմոռանալի օրերից էին։

Հանգուցյալի հոգին ժլատ չէր, Նրա սեղանը բաց էր միշտ՝ Հայր Աբրահամի անսպառ սեղանի նման։ Ահա թե ինչո՞ւ հայ ժողովրդի ազգային-եկեղեցական սուգը բաժանում է ողջ աշխարհը։

Մահը ավելի ևս գեղեցկացրեց ամենքից սիրված և հարգված մեծ Հայրապետին։ Նրա դագաղի շուրջն հավաքված էին կրոնականներ, մտավորականներ և բազմահազար ժողովուրդ... ու բոլորի հարգանքի և հրաժեշտի անկեղծ արցունքների միջով մեծ Կաթողիկոսի մարմինը ամփոփեցինք մայր հողի ծոցում, Մայր եկեղեցու գրկում, Աշտարակեցու և Երիմյանի կողքին...։

Փա՜ռք Քո կենդանի հոգուն։ Թո՛ղ Տերը պսակե Քեզ Իր լուսե բնակարաններում. «Ի տան Հօր իմոյ օթևանք բազում են։ Մենք սրբությամբ կիրագործենք Քո թողած ավանդները և կաշխատենք միշտ վառ պահել Ս. Լուսավորչի կանթեղը։

Իմ աչաց լույս Վեհափա՛ռ, հավիտենական հանգիստ Քո անմահ հոգուն։



Հ. ՉԱՄՉԻԱՆ

(Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ)

# ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԻ ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Այսօր մենք բոլորս սրտի անհուն կսկիծով ողջում ենք Հայ Եկեղեցու մեծ կորուստը։ Դաժան մահը հարվածեց այն մեծ կաղնին, որի շվաքի տակ հավաքվել էինք մենք էլ՝ Ճեմարանի քահանայացուների դասարանը։ Վեհափառ Հայրապետը մեզ որբ թողեց։ Նա հեռացավ մեզանից այն ժամանակ, երբ Նրա ներկայությունը ավելի քան երբեք անհրաժեշտ էր թե՛ Մայր Աթոռի և թե՛ ընդհանուր Հայ Եկեղեցու ու Ազգի համար և թե՛ մեզ համար։ Արդարև, Նա հարկավոր էր դեռևս Հայրենիքին ու ժողովրդին, հարկավոր էր Եկեղեցուն ու մարդկությանը, որոնց համար Նա շատ ու շատ բան արեց և դեռևս կարևոր անելիքներ ուներ։ Անողոք մահը մեզանից խլել է ո՛չ միայն արդարության, խաղաղության ու առաջադիմության մեծ պաշտպանին, այլ նաև մեր Հորը, խնամակալին ու պաշտպանին, որ ուղղություն, ճանապարհ ու տեսիլք էր տալիս մեր մատաղ հոգիներին։ Նրա մահը շատ ծանր էր մեզ համար էլ, որովհետև Նրան կարելի էր մեծարել թե՛ որպես անհատի, թե՛ որպես Կրոնապետի, թե՛ որպես հասարակական գործչի ու բոցաշունչ հայրենասերի, և թե՛ որպես ճշմարիտ Հոր ու ազնիվ բարեկամի։

Նա կոչված էր աստանդական հայության դարավոր երազի՝ հայրենադարձության իրականացման գործում, Սփյուռքի ու Մայր Հայրենիքի միջև կապի սերտացման, արտասահմանյան հայության ազգային գոյության հարատևության և պաշտպանության գործում մեծ ու պատմական դեր խաղալու։ Նա Իր մեծ սրտի ամբողջական սիրով սիրեց Իր Հայրենիքն ու ժողովրդին, և Հայրենիքը պաշտպանելու ուղղությամբ շնորհակալ վստահություն ունեցավ Հայ Եկեղեցու անունից։ Իր ամբողջ բարոյական ու նյութական միջոցներով, հետամուտ եղավ օգնելու Հայրենիքին Հայրենական Մեծ պատերազմի օրերին։ Հայրենիքի համար, Հայ Եկեղեցու և Էջմիածնի գաղափարի համար՝ նվիրաբերեց Իր ողջ գիտակցական կյանքը, թողնելով մեզ հայրենասիրության և եկեղեցասիրության վառ օրինակ և իմաստությամբ ու խորագիտությամբ վարելով Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը՝ Ազգի, Հայրենիքի սիրով ու Եկեղեցու գաղափարով։

Վեհափառ Հայրապետն Իր շնչով և օրինակով աճեցրել է ահա հոգևորականների նոր և խոստումնալից սերունդ, դաստիարակելով նրանց Աստուծո երկյուղով, հավատով, Ազգին ու Հայրենիքին նվիրվածությամբ ծառայելու ոգով։ Նրա մեծ ցանքերի արդյունքն է Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, որը տվել է իր առաջին հունձը։ Որքա՜ն էր ուրախ ու խանդավառ հանգուցյալ Վեհափառը այդ առաջին հունձի առաջ։ Ամեն անգամ մեզ տեսնելիս, Նրա աչքերը թրջվում էին ուրախության անխառն հրճվանքի արցունքներով... Նա գոհ էր Իր աշխատանքից...։

Նա տոգորել էր մեզ ջերմ հավատով դեպի Եկեղեցին ու Հայրենիքը։ Բայց Նա ցանկանում էր, որ մենք ոչինչ չլինենք նաև գիտությամբ, որպեսզի պտղաբերի այն հատիկը, որ սերմանել էր Նա մեր հոգիների մեջ։ Վեհը մեր հոգու երազն էր և օրինակելի տիպարը հայ բարձրաստիճան եկեղեցականի, մարդու, գիտնականի, հայրենասերի, մարդասերի, որին նմանվելու մեր ձգտումը՝ մեր հոգու քաղցր երազն էր։ Նա մեծ կարևորություն էր տալիս մեր պատրաստությանը և այդ ուղղությամբ ոչինչ չէր խնայում։ Նա աշխատում էր դրոշմել մեր մեջ Իր մեծ հոգին, որով Նա այնքան բարձրացել էր, ոչ այն ամենից, ինչ որ ուներ Իր մեջ և կարող էր ունենալ այն հոգևորականը, որ

Ինչն էր, այսինքն՝ մեր դեպի ժողովուրդն ու Հայրենիքը, Մայրենի Եկեղեցին և ազգային ավանդությունները, գիտության և ուսումնասիրության անհագ ծարավ, եռանդ, ջանասիրություն ու լավատեսություն գործի մեջ, արդարասիրություն ու անաչառություն ամեն ինչում, ամեն բանի նկատմամբ։

Ահա թե ինչքա՜ն մեծ է այն բացը, որ զգում ենք և զգալու ենք տարիներով Հանգուցյալի մահվանից հետո։ Բայց չպետք է դրա համար վհատվենք։ Քաջասիրտ լինենք ու միաբան՝ հայության Սրբության Սրբոց հավերժական էջմիածնի գաղափարով և նրա դրոշի տակ շարունակենք աղոթել ու գործել ի փառս Աստուծո և ի բարօրություն Ազգի և Հայրենիքի, ողբացյալ Հայրապետի, մեր մեծ դաստիարակի ու առաջնորդի ոգով։ Չի մեռել մեր շնորհազարդ Հայրապետը, նա ապրում է Իր աշակերտների և միաբանների հոգում և սրտում, նա առաջնորդում է մեզ դեպի բարին, ազնիվն ու գեղեցիկը։ Կենդանի է նրա գործը, պայծառ է նրա հիշատակը, անմոռանալի է նրա անունը, կապված մեր Եկեղեցու պատմության վերջին հանամյակում տեղի ունեցող պատմական խոշոր իրադարձություններին։ Այսօր, ավելի քան երբեք, Ազգն ու Եկեղեցին՝ պայծառ են ու շեն, հայ ժողովուրդը՝ Քրիստոսի փոքրիկ հոտը տպահով է ու երջանիկ իր հայրենի երկրում, ուր իր հովիվները առաջնորդում են նրան ոչ տեղի դալարուղ և առ ջուրս հանդստեանս։

Ամենայն Հայոց հանգուցյալ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի արդար և ազնիվ հոգին նայում է երկնքից Իր ժառանգության ու գործի վրա։ Մեր պատվական Հոր ու բարերարի հայացքը տեսնում է մեզ և մեր գործերը։ Մենք էլ այնպես անենք, որ Ինքը սրտի անհուն գոհունակությամբ դիտի Իր վեհ գործի հաջողությամբ, հաղթանակով ու փառքով պսակվելը։ Ինքը մեզ հետ է, մեզ է նայում, մեր մեջն է դեռ, աներևույթ ժպտում է մեզ և կամենում է մխիթարել՝ «Ո՜վ իմ սիրասուն զավակները,— ասում է նա,— մի՛ լաք, Տերը Երուսաղեմը կշինի և Իսրայելի ցրվածները կժողովի։ Մեր հայրերի կենդանի Աստվածը ի Քրիստոս Հիսուս հիմնված նոր Իսրայելի միջից կհարուցի նորանոր առաջնորդներ, հովիվներ ու հովվապետներ, որպեսզի շարունակի վառ մնալ Լուսավորչի անշեջ կանթեղը, հայության հուսատու փարոսը, մեր ազգի փրկության ուղեցույց աստղը, նրա օջախը և ապավենը, Միածնի իջմամբ սրբագործված այս սուրբ Կաթուղիկեն ու Հայաստանյայց աշխարհի Առաքելական Ուղղափառ Եկեղեցին։

Ո՜վ մեծ Հայրապետ, մենք կաշխատենք Քո կամքը կատարել, կընթանանք Քո ուղիով. այս է մեր նվիրական ուխտը Քո թարմ հողակույտի առաջ։ Քո օրհնյալ հիշատակը սուրբ է, սուրբ էլ կմնա մեր սրտերում։ Անմահության Քո կայքից, հավերժության ծոցից, Դու քո Աչը մեկնիր ու օրհնիր մեզ՝ Քո զավակներին... ու Ս. Եկեղեցուն, որ անշարժ մնա հավիտյան։

# ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Հուլիսի 3-ին, շաբաթ օրը, «Գիտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսավորչին» եկեղեցական տոնի առթիվ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց Մայր Տաճարում, Ս. Իջման սեղանի վրա։ Պատարագիչն էր բարձրապատիվ Տ. Գեորգ ծայրագույն վարդապետ Վաթյանը։ Սուրբ պատարագին ներկա էին բազմաթիվ հավատացյալներ և ուխտավորներ։

***

Հուլիսի 8-ին, հինգշաբթի օրը, «Սրբոց թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ» եկեղեցական և ազգային մեծ տոնակատարության կապակցությամբ, Օշական գյուղում, Ս. Մեսրոպի նվիրական գերեզմանի վրա կառուցված նույնանուն գեղեցիկ ու հոյակապ տաճարում, մեծ հանդիսավորությամբ մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր բարձրապատիվ Տ. Գեորգ ծայրագույն վարդապետ Վաթյանը։ Տաճարը լիքն էր բազմաթիվ հավատացյալներով և ուխտավորներով։ «Հայր մերից առաջ պատարագիչ հայրը քարոզեց հավուր պատշաճի՝ վեր հանելով իր քարոզի մեջ մեր նախնի երանելի առաջին թարգմանիչների, հանճարեղ ուսուցիչներ Ս. Սահակի, Ս. Մեսրոպի և նրանց աշակերտների կատարած փիլիսոփայի մշակութային-կրթական աշխատանքն ու գործունեությունը հայ կյանքի ու մտքի նվիրական անդաստանում։ Իր քարոզը հայր սուրբը վերջացրեց հետևյալ խոսքերով. «Սիրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր, միշտ պայծառ ու նվիրական պահեցե՛ք Ս. Թարգմանչաց խնկելի հիշատակը, սիրեցե՛ք ձեր լեզուն, ձեր Հայրենիքը, ձեր պատմությունն ու մշակույթը. այդպիսով դուք ամենամեծ հարգանքը մատուցած կլինեք նրանց անվան ու անմահ հիշատակին»։

Սուրբ պատարագից հետո, Մայր Աթոռի ողջ միաբանության մասնակցությամբ, կատարվեցին հոգեհանգստյան սրբազան արարողություններ՝ նվիրված Ս. Թարգմանչաց հիշատակին։

Այդ օրը Օշական էին եկել բազմաթիվ ուխտավորներ շրջակա գյուղերից, բազմաթիվ մատաղներ էին կտրվում եկեղեցու բակում ավանդական ստորոգությունների համաձայն։ Ժողովրդական գեղեցիկ երգերն ու պարերը շարունակվում էին երկար ժամանակ դրսում։ Բազմաթիվ մոմեր էին բոցկլտում Ս. Մեսրոպի հանգստարանում. հայ հավատացյալը ծնկաչոք համբուրում էր հայ մեծ մարդու, հանճարեղ ուսուցչի նվիրական ու խնկաբույր գերեզմանը, Երանելի Մաշտոցի գերեզմանը։

Կեսօրից բավական անց էր, երբ Մայր Աթոռի միաբանությունը վերադարձավ Էջմիածին։

***

Հուլիսի 11-ին (Գիտ տփոյ Ս. Աստուածածնի), կիրակի օրը, հանդիսավոր սուրբ պատարագ տեղի ունեցավ Մայր Տաճարում Ավագ սեղանի վրա։ Օրվա պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ Եպիսկոպոսը։

Տաճարում շարժվելու տեղ չկար։ Այդ օրը միևնույն ժամանակ լրանում էր երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի օծման 9-րդ տարեդարձը։ «Հայր մերից առաջ, Կաթողիկոսական տեղապահի փոխանորդ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, բարձրանալով սեղան, սրատաղուշ քարոզ խոսեց ժողովրդին. նրա քարոզը նվիրված էր երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ.ի կաթողիկոսացման 9-րդ տարեդարձի լրանալուն։

Սրբազան հայրը խոր ակնածանքով բնորոշեց հանգուցյալ Հայրապետի կյանքն ու գործունեությունը, որը նվիրված էր միայն հայ ժողովրդին, Հայ Եկեղեցու բարօրությանն ու ծաղկմանը։ «Նրան կորցնելով,— ասաց սրբազանը,— Հայ Եկեղեցին որբացավ, սեղ պատվեց Հայրապետական Գահը.

հայ հավատացյալը, աշխարհի բոլոր ծայրերում, դառնորեն սգաց իր իմաստուն Հովվապետի դառնակսկիծ մահը։

Վերջում, նա դիմելով հավատացյալ հայ ժողովրդին, ասաց. «Սիրելի՛ք, մեր սուգը շարունակվում է և կշարունակվի, քանի դեռ սև քողը չի վերացված Ս. Լուսավորչի նվիրական Գահից։ Աղոթե՛նք, որ այն շուտով վերանա, և ամենաարարչագործ Աստուծո օգնականությամբ, այս լուսավորչահաստատ Ս. Գահին նատի արժանավոր մի նոր Հայրապետ։

Սուրբ պատարագի ավարտից հետո, Մայր Աթոռի ամբողջ միաբանության մասնակցությամբ, դրսում, երջանկահիշատակ Գեորգ Զ. Հայրապետի թարմ ծաղիկներով զարդարված գերեզմանի վրա կատարվեց հոգեհանգիստ։ Արարողությանը ներկա էին բազմաթիվ հավատացյալներ և ուխտավորներ։ Ժողովրդի կողմից բազմաթիվ ծաղկեփնջեր դրվեցին հանգուցյալ Հայրապետի թարմ հողակույտի վրա։

***

Հուլիսի 25-ին, կիրակի օրը, Վարդավառի (Պայծառակերպության Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի) եկեղեցական մեծ տոնակատարության կապակցությամբ, Մայր Տաճարում, Ավագ սեղանի վրա, բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ, մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Օրվա պատարագիչն էր քարեկրոն Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանը։

«Հայր մերից առաջ բարձրապատիվ Տ. Գեորգ ծայրագույն վարդապետ Վաթիանը հավուր պատշաճի քարոզեց, բացատրելով հավատացյալներին Տիրոջ պայծառակերպության խորհուրդը, ոգեպնդիչ ու բարոյական նշանակությունը։

Ս. Պատարագի ավարտից հետո, դրսում, վանքի բակում, երկար ժամանակ լավում էր հավատացյալ ուխտավորների ուրախ երգն ու նվագը։ Հազարամյակներ հետո, Վարդավառի քրիստոնեական տոնակատարությունը դեռ իր մեջ պահել է հայ հին հավատափքների մի քանի առանձնահատկություններ։ Այդ՞ օրը ժողովրդի մեջ շատ շատերը ջրցանություն էին կատարում իրար վրա և բազմաթիվ ծերմակ աղամնիներ թոցնում, առանց գիտակցելու, որ Վարդավառի տոնին (հին հեթանոսական առումով), իրենցից 2.000 տարի առաջ, նույնն էին անում իրենց նախնիքը Աստղիկ դիցուհու պաշտամունքի տոնակատարության օրը։

***

Հուլիսի 26-ին, Վարդավառի տոնակատարության հաջորդ օրը, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր պատարագ՝ նվիրված մեռելոց հիշատակին։ Պատարագիչն էր քարեկրոն Տ. Մկրտիչ քահանա Գամաղելյանը։

Սուրբ պատարագի ավարտից հետո կատարվեցին հոգեհանգստյան սրբազան արարողություններ՝ համայն ննջեցյալներին նվիրված։ Ներկա էին բազմաթիվ հավատացյալներ։

***

Հուլիսի 31-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց դանիական երիտասարդության 19 մարդուց բաղկացած պատվիրակությունը, որին ղեկավարում էր պարոն Օուլա Ռայնհարդտ Մելլերը։ Պատգամավորությանը վանքի բակում դիմավորեցին Մայր Աթոռի միաբանները։

Այնուհետև հյուրերը Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի առաջնորդությամբ եղան Տաճարի ներսում, ուր նրանց մանրամասն բացատրություններ տրվեցին Տաճարի շինության, ժամանակի, ճարտարապետական կառուցվածքի, մանրանկարչության վերաբերյալ։ Հյուրերը եղան նաև Տաճարին կից եկեղեցահնագիտական թանգարանում, ուր տեսան արժեքավոր հին եկեղեցական սպասներ, զգեստներ և այլ հազվագյուտ իրեր, որոնց մասին նրանց ամենամանրամասն բացատրություններ էին տալիս Սահակ եպիսկոպոսը և միաբանության մյուս անդամները։ Բացատրությունները լսելուց հետո, հյուրերը հետաքրքրվեցին Մայր Աթոռի ներկա վիճակով, Հոգևոր Ճեմարանի դրությամբ, Հայ եկեղեցու դավանանքի և մի շարք այլ հարցերի վերաբերյալ։

Նրանց հարցասիրությանը մեծ սիրով գոհացում էին տալիս գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը և միաբանության մյուս անդամները։

Մեկնելուց առաջ հյուրերը իրենց շնորհակալությունները հայտնեցին միաբանությանը՝ իրենց ցույց տրված ուշադիր ու ազնիվ վերաբերմունքի համար։

***

Օգոստոսի 6-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց շվեյցարական երիտասարդական պատվիրակությունը։ Պատվիրակության անդամները ամենայն մանրամասնությամբ Մայր Տաճարը գիտելուց և բացատրություններ լսելուց հետո, այցելեցին նաև Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թան-

դարանը, ուր նրանք հիացմունքով դիտեցին հնադարյան եկեղեցական զգեստների, սպասների և իրերի զանազան գեղեցիկ նմուշներ։ Հյուրերին ուղեկցում, բացատրում և նրանց հարցերին պատասխանում էին գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և միաբանության մյուս անդամները։

Վերջում հյուրերը, մեկներուց առաջ, իրենց շնորհակալությունները հայտնեցին միաբանությանը՝ իրենց ցույց տրված լավագույն ընդունելության համար և դահ վերադարձան Նրևան։

***

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին նաև կուլտուրայի և արվեստի շվեդական գործիչները, որոնք նույնպես ծանոթացան Տաճարի, թանգարանում եղած իրերի և միաբանության հետ։

***

Օգոստոսի 14-ին, շաբաթ օրը, Շողակաթ Ս. Էջմիածնի տոնի կապակցությամբ, Մայր Տաճարում, Ս. Իշման սեղանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Կոստանդին վարդապետ Թառլանյանը։ Ներկա էին բազմաթիվ հավատացյալներ։

***

Օգոստոսի 15-ին, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնի կապակցությամբ, Մայր Տաճարում, Ավագ սեղանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Այդ օրը և դրանից դեռ մեկ օր առաջ, Ս. Էջմիածին ուխտի էին եկել բազմաթիվ ուխտավորներ։ Եկել էին նրանք շրջակա գյուղերից, մոտիկ ու հեռու քաղաքներից, լցվել էին Մայր Աթոռ՝ կատարելու իրենց ուխտը Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին։

Ամբողջ գիշերը և հաջորդ առավոտ անվերջ շարունակվում էին ժողովրդական ուրախությունները, հայկական ժողովրդական պարերն ու երգերը վերջ չունեին, թնդում էր ամբողջ վանքը այդ ուրախարիթ ձայներից։ Ժողովրդական մեծ ուխտագնացությամբ էր այդ օրը, բառի իսկական իմաստով։ Հայ հավատացյալը, իր պապենական վաղեմի սովորության համաձայն, մաքուր սրտով կատարում էր իր մատաղը, իր զոհը մատուցում և անհամբեր սպասում, որ այդ օրը խաղողի սրբազան օրհնությունը կատարվեր։

Կեսօրին, սուրբ պատարագի ժամին, Տաճարում անկարելի էր շարժվել, խիտ առ խիտ մարդկային զանգվածներ լցվել են ներս՝ աղոթելու, սուրբ պատարագը լսելու։

Տաճարում տոթ է, խեղդուկ։ Սուրբ պատարագը շարունակվում է։ Պատարագի վերջում կատարվում է խաղողի օրհնությունը։ Ամբողջ Տաճարը ալեկոծվում է, հորձանք տալիս, շարժվում են մարդիկ դեպի բեմը, մի-մի մասնիկ ստանալու օրհնված պտուղից։

Սուրբ պատարագի ավարտից հետո դեռ երկար ժամանակ շարունակվում են ժողովրդական ուրախությունները մինչև ուշ երեկո։

***

Հաջորդ օրը, օգոստոսի 16-ին, Մայր Տաճարում, Ավագ սեղանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ՝ նվիրված մեռելոց հիշատակին։ Պատարագից հետո կատարվեցին հոգեհանգստյան սրբազան արարողություններ՝ նվիրված համարեն ննջեցելոց։

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ՀՅՈՒՐԵՐԻ ՌԱԴԻՈԵԼՈՒԹՅՈՒՆԸ

### ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

*Այս երրորդ անգամն է, որ ուրախությունը և բախտը կունենամ ողջունելու Մայր Հայրենիքը։ Առաջին այցելությունս տվի 1935 թվին, երկրորդը՝ 1945 թվին, իսկ այս՝ իմ երրորդ այցելությունս է արդեն։ Քսան տարիներ անցած են այն օրեն ի վեր, երբ հեռավոր Ամերիկայեն եկա էջմիածին՝ ընդունելու համար եպիսկոպոսական աստիճանը։ Այս մոտ քսան տարիներու ընթացքին կատարված աշխատանքին և իրագործված նվաճումներուն վկան կրնամ հանդիսանալ, մանավանդ որ առավելությունը ունիմ տեսած ըլլալու Հայրենիքի հառաջդիմությունը ոչ թե քայլ առ քայլ՝ ինչպես ամենօրյա ընակիչները մեր սիրելի երկրին, այլ ոստում առ ոստում՝ տասը տարիներու տարբերություններով։ Ինձ համար ավելի դյուրին է բաղդատել 1935-ի նախապատերազմյան Հայրենիքը, 1945-ի պատերազմեն հաղիվ ազատած Հայրենիքը և այսօրվան ծաղկյալ Հայրենիքը։*

*Ինչ որ տեսանք այս օրերուս, իրապես վեր էր մեր սպասումեն և շատ ավելի բարձր մեր ենթադրություններեն։ Այս անգամ, նույնիսկ եթե մոռնայինք մեր հայրենասիրությունը, որ գեղեցկացուցած էր մեր աչքին 1935-ի Երևանը, պիտի սիրեինք զայն, միայն ու միայն իր գեղեցկության համար, իր շենքերու շնորհալի շարքերուն ու պողոտաներուն լայնածավալ վեհության համար։ Հպարտ կզգանք այլևս ոչ թե մեր զոհողություններուն, այլ մանավանդ մեր երկրի նվաճումներուն համար, ու մեր ուրախությունը չափ չունի։*

*Քսան տարի առաջ, ո՞վ կրնար երևակայել, որ հողաշեն տուներուն տեղ պիտի բարձրանան հայկական ճարտարապետության վերանորոգված շունչի այս սքանչելի ծնունդները, ամբողջությամբ շնորհք, վեհություն, սլացք, կարծեք կարմրադեմ ժպիտ. ո՞վ կրնար մտածել, թե շոր քաղաքին շուրջ պիտի ծաղկեին անտառներ ու փոշոտ քաղաքեն ներս՝ պարտեզներ և պուրակներ. հայտնի էր մեզի մեր ժողովուրդին շինարարությանն և աշխատասեր ընավորությունը, բայց բնավ չէինք կարծեր, թե շինարարությունը և աշխատասիրությունը կհաղթեն նաև ժամանակին ու այսքան կարճ տարիներու ընթացքին գյուղաքաղաք մը կփոխվի իսկական մայրաքաղաքի։*

*Տակավին, ավելի ուրախություն է մեզ համար հաստատել նույն թափով հառաջդիմություն ամբողջ երկրին մեջ. գործարաններ՝ միութենական չափանիշով արտադրությամբ, էլեկտրակայաններ՝ արդիական շքեղությամբ, գեղատիպ և ժողովրդական անվերջ հրատարակություններ, համակարգան և անհաշիվ դպրոցներ մինչև հեռավորագույն գյուղը և տակավին այդիներ՝ պարարտ, աշխատված, գեղեցիկ, արտադրություն և աշխատանք և համատք ապագան՝ երկրին ամեն կողմը և ամեն հայու սրտին մեջ, ահա այս բոլորն են, որ մեր կուրծքերը կբարձրացնեն հպարտությամբ ու մեր սրտերը կողողեն ուրախությամբ։*

*Սիրելի՛ ժողովուրդ, հեռավոր երկիրներե եկած քու եղբայրդ կվերադառնա դեպի*

ոտար երկիր, պիտի ապրի այնտեղ իր պանդուխտ դավակներուն հետ, սակայն ծանր պիտի շկրնա այլևս պանդխտությունը և ուրախությամբ պիտի դիմադրե ճակատագիրը, որովհետև ի՛ր իսկ աչքերով տեսավ բու աշխատանքիդ սքանչելի և ծրագրված ճիգը։ Վստահ եղիր, թե ներ պատմեմ իմ դավակներուս մեր երկրի ո՛չ միայն բնական, այլև բու կերտած գեղեցկությունները, անոնք ևս պիտի հաղորդվին իմ ուրախությամբ ու հպարտությամբ ու պիտի մաղթեն ինձ հետ, որ խաղաղություն և սեր տիրեն այս աշխարհիս վրա, որպեսզի շարունակես ստեղծագործել ու միշտ ստեղծագործես, մինչև որ օր մը բոլորս հավաքվինք նույն օջախին շուրջ ու առաջացնենք նույն Հայրենիքը։

## ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՂԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԼՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հայաստանյայց Եկեղեցվո գերաշնորհ սրբազան ու վարդապետ հայրեր, ինչպես և աշխարհական պատվիրակներ, հեռավոր երկրներե, վշտաբեկ սրտով ու երկյուղածությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին եկանք, մեր սիրո ու հարգանքի վերջին ողջույնը բերելու Ամենայն Հայոց Կաթողիկոս հանգուցյալ Գեորգ Զ. Հայրապետին դագաղին առաջ այն անխառն գիտակցությամբ, թե հողին ու պատմության կհանձնենք մեր մեծագույն հայրապետներեն մին, որ Իր անձնվեր կյանքով, Իր եկեղեցանվեր գործերով ու Իր անայլայլ հայրենասիրությամբ լուսատու փարոս մը դարձավ մեզ բոլորիս ու գալիք սերունդներուն համար։

Ոչ շատ տարիներ առաջ տակավին, Իր բոցաշունչ քարոզներեն մեկուն մեջ Ան կըսեր՝ «Քրիստոնեությունը ո՛չ միայն ընդունում է հայրենասիրության գաղափարը, այլև շատ բարձր է գնահատում սերը դեպի Հայրենիքս։

Ու այս գաղափարը լոկ խոսք կամ վերացական իդեալ չմնաց հանգուցյալ Հայրապետի կյանքին ու գործին մեջ, այլ ան դարձավ կենդանի գաղափար, դեպի գործ մղող հոգեկան ուժ, աղնիվ ու արդար պայքարի դրոշակ։

Այս ոգիով, այս գրոշով, մեր հայրենանվեր Հովվապետը փոթորկահույզ կյանքի պատմաշրջաններե անցավ իր ժողովուրդին հետ միատեղ, հայթեց ճակատագրի ալիքներուն, քաջությամբ կուրծք տվավ հորձանքներուն և հոգեկան արիությամբ ու խաղաղությամբ մասնակցեցավ իր բոլոր ուժերով՝ հայ ժողովուրդի մահու և կենաց մարտերնշումներուն, առաջին և մանավանդ երկրորդ համաշխարհային պատերազմներուն ընթացքին։

Ո՞վ պիտի կարենա մոռնալ Վեհափառի այն զմայլելի կոչերը, կոնդակներն ու կենդանի գործը, զոր ղեկավարեց Ան Հայրենական Մեծ մարտի ընթացքին։ Ո՞վ պիտի կարենա մոռնալ՝ բնության և խավարի ուժերուն դեմ տարված սովետական փառապանծ հաղթանակը ավետող Իր հոգեշարժ խոսքերն ու պատգամները, Մայր Հայրենիքը շինելու և ծաղկեցնելու Իր սրտեռանդ հրավերները։ Ով վերջապես ո՞վ պիտի կարենա մոռնալ հանգուցյալ Կաթողիկոսին խոշոր դերը աշխարհի խաղաղության համար մղված պայքարին մեջ, պայքար մը, որուն լծված են այսօր բոլոր ժողովուրդներու լայն զանգվածները, աշխարհի բոլոր ազնիվ ու պարկեշտ մարդիկ և մանավանդ սովետական խաղաղասեր ժողովուրդները, որոնց շարքին նաև մեր ժողովուրդը, որուն մեծագույն իղձն է՝ արդար ու շինարար իր աշխատանքի ընթացքը շարունակել իր պատմական Հայրենիքին մեջ, որ ահա ավելի քան երեսուն տարիներե ի վեր, աննախընթաց վերածնունդի և բարգավաճ կյանքի շրջան մը կապրի, սովետական այս փառավոր դարուն, ռուս մեծահոգի ժողովուրդի եղբայրական օժանդակությամբ։

Մենք, արտասահմանեն Մայր Հայրենիք այցելողներս, մեր աչքերով կտեսնենք ու մեր սրտերով կչափենք այն վիթխարի շինարարական գործը, որ կատարված է և կշարունակվի կատարվիլ անցյալի մեջ ավերակ դարձած մեր հայրենի հողին վրա։

Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանը՝ պերճ ու շքեղ, կենսալի ու բարգավաճ, ճշմարիտ խորհրդանիշն է մեր Հայրենիքի վերընձյուղման։ Այս տասնհինգ օրերու ընթացքին, այցելեցինք բազմաթիվ գործարաններ, աշխատանոցներ, առևտրական միավորներ, այցելեցինք մշակութային հաստատություններ, ինչպես Ցեռագրատունը, պետական Ակադեմիան, Պատմական թանգարանը, Պետական պատկերասրահը, դրպրոցներ և մանկամատուներ, ներկա եղանք Հայֆիլհարմոնիայի մեծ ու փոքր սրահներու մեջ կազմակերպված համերգներուն, Օպերայի և Պետական թատրոնի ներկայացումներուն, հանդիպումներ ունեցանք մեր երկրի կրագետներուն, բանաստեղծներուն, դերասաններուն և նկարիչներուն հետ, այցելեցինք գյուղեր ու գյուղական հավաքական տնտեսություններ, ուր անհուն մխիթարու-

թամբ տեսանք հրաշալի արդյունքները մեր շինական ժողովուրդի գյուղատնտեսական աշխատանքներուն։ Մտանք այդ շինականներու համեստ, բայց հյուրընկալ տուներուն մեջ և տեսանք անոնց սեղաններուն վրա առատ հաց և երդիկի տակ՝ լույս։

Ամենուրեք, կյանքի ու աշխատանքի բոլոր տոպարձեներուն մեջ, մեր ժողովուրդը կապրի ճշմարիտ վերածնունդի շրջան մը։ Մեր ժողովուրդը կաճի, կզարգանա ու կշինե, անդադար կշինե՝ ամենայն հայոց Մայր Երկիրը, աստիճան առ աստիճան առաջնորդվելով դեպի նոր կյանք, դեպի ոսկի ապագա։ Ով այս հսկայածավալ, ստեղծագործ, համառ ու անդուլ աշխատանքի լուսավոր ճամբուն վրա, ուրախ ենք հաստատելու, թե իրենց պարտքը պատվով կկատարեն նաև մեր հայրենադարձ քույրերն ու եղբայրները, ընդհակ մայր ժողովուրդի կողքին՝ ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի ու համերաշխ։

Ի տես այս ոգևորիչ ու հոգեպարար կյանքի պայծառ պատկերին, մեր հարու գիտակցությամբ, արդար հպարտությամբ կմոտենանք հայրենական այս լույսի մշտահոս աղբյուրին, լեցնելու համար մեր հոգիներուն սափորները հայ ավյունով ու կյանքի թարմ ուժերով։

Մեր ամենաջերմ մաղթանքն է, որ մեր Մայր Հայրենիքը՝ մեր կենդանության և լույսի մշտահոս այս աղբյուրը, այլևս երբեք, երբեք չպղտորվի, որ մեր կենաց այս ծառը մնա հավետ անսասան, որ մեր ժողովուրդը անվրդով շարունակե կյանքի փառքը երգել ազատ ու խաղաղ, ժողովուրդներու մեծ եղբայրության, Սովետական Միության երկնակամարին տակ։

Թե՛ որպես Հայաստանյայց Եկեղեցվո սպասավորներ, թե՛ որպես հայ ժողովուրդի հարազատ զավակներ, կաղոթենք ու կհավատանք, թե բարիին ուժերը պիտի հաղթանակեն աշխարհի վրա և խաղաղության սպիտակ աղավնին պիտի չներկվի արյունով։

Թո՛ղ ապրի, ուռճանա, խաղաղ ուղին մնա մեր Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը։

---

## ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐՈՂ ԼԵՎՈՆ ՄԵՍՐՈՊԻ ԵԼՈՒՅԹԸ

Ողջո՜ւյն արտասահմանի, մասնավորապես Ֆրանսայի հայրենակարոտ հայության։

Ողջո՜ւյն Երևանեն, Սովետական մեր սիրելի Հայրենիքին գոհարի պես փայլուն մայրաքաղաքեն։

Երկրորդ անգամն է, որ բախտը կունենամ տեսնելու Երևանը։ Առաջինը՝ 1946-ին, Հայաստանի Սովետական գրողներու երկրորդ համագումարին առթիվ, երկրորդը՝ ներկա ըլլալու համար հանդուցյալ Վնտափառ Հայրապետի հուղարկավորության։

Ծանր կորուստը Հայաստանյայց Եկեղեցվույն, որուն մեծ հայրապետներեն մեկն էր Հանգուցյալը, Իր հնագարյան Եկեղեցվույն և ժողովուրդին վրա գուրգուրացող, բոլոր սրտով Սովետական մեր հիանալի Հայրենիքին բարօրության և վերելքին նվիրված, համաշխարհային խաղաղության աննկուն պաշտպան, իմաստուն և բազմակողմանի զարգացումով օժտված, իրապես մեծ մարդ։ Հարդա՞նք Իր հիշատակին։

Ճիշտ մեկ շաբաթ է հասած եմ Երևան։ Մինչև հիմա, կրցեր եմ տեսնել քաղաքին հաղիվ մեկ փոքր մասը և բաղդատել 1946-ի Երևանին հետ։ Վերջին ութը տարիներու ընթացքին արտասահմանի հայությունը անշուշտ լայնորեն տեղեկացավ Սովետական մեր չքնաղ Հայրենիքին հառաջդիմության և փոփոխության, լրագրական հոդվածներով, լուսանկարներով և ֆիլմերով, բայց բոլորովին տարբեր է տպավորությունը, երբ մարդ դեմ առ դեմ կուգա շոշափելի իրականության հետ։ Հեքիաթ մը ապրելու զգացումն է այդ տպավորությունը։

Օրինակ, պատգամավորներու հետ այցելեցի ճարտարապետներու տունը, գունագեղ տուֆ քարով և հայկական ոճով, շատ սիրուն շենք մը։ Երևանի երկու հայտնի ճարտարապետներ՝ Վարազդատ Հարությունյան և Գրիգոր Աղաբաբյան բացատրեցին վերջին տարիներու շինարարությունը և նախատեսված ծրագիրը, զոր արդեն սկսած են գործադրել։

Նոր, Ծածկած շուկան, Հրազդանի նորակառույց հսկա կամուրջը, Քանաքեռի բարձունքին վրա կառուցված Ստալինի հիշատակարանը և Օպերային կից Ֆիլհարմոնիայի նորակերտ շինքը այցելելե հետ, որոնցմե ոչ մեկը տեսած էի 1946-ին, երբ վերադարձա «Ինտուրիստ» հյուրանոցը, խոսակցության միջոցին ապշությամբ տեղեկացա, թե այն փողոցը, ուր ճարտարապետներու տունը շինված է, Բաղրամյան փողոցն է։

Բաղրամյան փողոցին հոդաշերտը տեսած էի 1946-ին իր նախնական ու բնական վիճակին մեջ. անմշակ և քարքարոտ դետին

մը, զոր սկսան պեղել և հարդարել ութը տարի առաջ, Երևանեն մեկնելու միջոցին։ Հիմա, ինձի համար բաղդատության եզր իսկ չկա 1946-ի խոպան հողամասին և ներկա լայն պողոտային միջև, զոր կեղերեն տասնյակներով բնակարանային շենք ու հիմնարկ, մեկը մյուսեն ամրաշեն, հոյակապ և հայկական ոճի և քանդակներու մեկ-մեկ գեղեցիկ նմուշ։

Մոսկվայեն Երևան, մեր ինքնաթիռին ճամբորդներեն մեկն էր երիտասարդ, բայց արդեն աշխարհածանոթ կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանը. ութը տարիներ ետք առաջին երևանցին, որուն կհանդիպեի, սովետական հայ ժողովուրդը ներկայացնող հաղթանդամ և գեղեցկագեմ տղամարդ։

Կընդունիմ, որ արտակարգ վերպով բախտավոր եմ երկրորդ անգամ վայելելով Հայրենիքս։ Թերևս ծնած եմ, ինչպես տվորություն է ըսել, բախտավոր աստղի տակ։ Հաստատապես գիտեմ, սակայն, թե երջանիկ եմ ապրելով այս օրերը Հայաստանի մեջ, սովետական լուսաշող աստղին տակ։ Կզգամ նաև, թե իմ վրա պարտք կծանրանա իմ երջանկությենեն գոնե փոքր բաժին հանել Հայրենիքի կարոտով տառապող գաղութահայ եղբայրներուս և քույրերուս։

Պիտի խոսիմ Երևանի ռադիոկայանեն ուրիշ առիթներով ալ։ Պիտի նկարագրեմ հետզհետե տեսած նորությունները, Երևանի փողոցներն ու շենքերը, Սովետական Հայաստանի մի քանի շրջանները, ուր մտադիր եմ այցելել, վերջապես հայ կենսուրախ, ստեղծագործող ժողովուրդը, որ իմ շուրջս է ամեն տեղ, ամեն վայրկյան։

## ԼԻԲԱՆՈՒՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ՍԻՄՈՆ ՈՒՄՈՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Ես հիմա կգտնվիմ Հայրենի հողին վրա և ապշահար ես ինձի հարց կուտամ.

— Իրա՞վ Հայրենի հողին վրա եմ։ Իրա՞վ սա ըսը, որ իր սպիտակ գլուխը խրած է ամպերուն մեջ, Արարատն է։ Իրա՞վ սա անծայրածիր տարածությունը Արարատյան դաշտն է։ Գիշերվան սա պահուն լույսերով տզողված քաղաքը իրա՞վ քաղաքամայր Երևանն է։ Սա մարդիկը, որ Աբովյան փողոցի ծառերու ստվերներուն տակ հանդարտորեն կքալեն, իրա՞վ հայեր են։

Ամեն ինչ, ծառ, քար, լույս ու հող կաղաղակեն ներսիդիս.

— Այստեղ Երևանն է ու հողը, որուն վրա դուն կկոխես, Հայաստանն է։

Բովանդակ կյանքիս մեջ իմ ըլլար երազներս դավաճանած են ինձի և խույս տված իրականանալեն։ Եվ իմ մեծագույն երազս եղած էր տեսնել Հայրենիքս, ուր երբեմն Հայկը իր հաստ բազուկներով լարած էր իր լայնալիճ աղեղը, Արամը խռնած էր իր գունդերը՝ Ղորս ծագերու թշնամիներուն դեմ դրոհելու, գեղեցիկն Արան իր Նվարդին սիրուն ելած էր ճակատելու տոհմամոլ Շամիրամին դեմ, ուր Ճարիրյան մարդիկ շինած են քաղաքներ ու բերդեր և մաքառած Ասորեստանի աշխարհակալներուն դեմ, ուր Արտաշեսներ ու Տիգրաններներ հյուսած են փառքը հայ ժողովուրդին, ուր իմաստուն գլուխներով քալած են Մեսրոպ Մաշտոց, Խորենացի, Շիրակացի, ուր Բագրատունի մարդիկ ճարտարապետած են քաղաքներ, պալատներ, վանքեր ու տաճարներ, ուր հազարամյա իմ ժողովուրդը քար քարի վրա դրած, ստեղծագործած, մաքառած ու իր ազատության համար զոհաբերված է։

Իմ ամենեն խորունկ իղձս իրականացած է։ Ես հիմա Հայրենի հողին վրա եմ, ու կրնամ ըսել.

— Այստեղ Երևանն է...

Երջանիկ եմ։ Լեցված եմ անպատմելի հույզերով, հորդող ուրախությամբ և խիստ ապրումներով։ Ցոթ օրե ի վեր Հայրենի հողին վրա եմ, ու ինձի այնպես կթվի, թե ես ապրած եմ միայն Հայրենի հողին վրա։ Ու երազ կթվի, թե ես ապրած ըլլամ արտասահմանի մեջ։

Ամենեն երջանիկ բանն է ըլլալ իր ժողովուրդին հետ, իր հարազատ հողերուն վրա։

Ես հիմա իմ հարազատ ժողովուրդիս մեջն եմ, իմ հարազատ Հայրենիքիս մեջ։

Որքա՞ն անկրկնելի ուրախություններ լեցուցած են զիս այժմ։

Տեսա իմ ժողովուրդս փր Հայրենի հողին վրա, երիտասարդ, աշխույժ, ստեղծագործ ու հմայտավոր։

Տեսա Երևան մայրաքաղաքը իր նորաշեն կառույցներով։ Բազմաթիվ նոր պողոտաներ, թաղամասեր շինված են, ծրագրի հիմամբ, կանոնավոր ու գեղեցիկ, հարյուրավոր, հազարավոր նոր շենքեր, Հայաստանի բազմազույն ու ընտիր քարերով, հայկական ճարտարապետության լավագույն օգտագործմամբ։ Մարդ շենքերու թիվեն ու մեծությենեն ավելի կսքանչանա այն գարմանալի գեղեցկության վրա, որով անոնք ստեղծագործված են։ Ո՛չ մեկ շենք կնմանի մյուսին, ո՛չ մեկ շենք կկրկնե մյուսին գեղեցկությունը, բայց թոլորն ալ գեղեցիկ և ճարտարա-

պետական սեփական նկարագրով։ Եվ ի տես կառուցված այդ բազմաթիվ, մեծ ու չքնաղ շենքերուն, միշտ հարցում մը կրկնվեցավ շրթներուս վրա.

— Ինչո՞ւ մեր ժողովուրդը կառուցած է միայն դեղեցիկ շենքեր։ Չէ՞ որ ան ոչինչ ուներ, և ապա ուրեմն իր շինածները պետք է որ ըլլային անհրաժեշտության արդյունքը։

Կրցած եմ մտածել, որ մեր ժողովուրդը կշինե՞ միայն այսօրվան և հառաջիկա տասը կամ քսանհինգ տարիներուն համար, այլ՝ դարերու համար։ Երևանի մեջ շինված հազարավոր նոր շենքերը իրենց թարմությունն ու ուժը պետք չէ կորսնցնեն դարեր ետք իսկ։ Մեր ժողովուրդը շինած է ու կշինե դարերու համար։

Հազար տարիներե ի վեր մեր Հայրենիքը միշտ ավերված է, իր քաղաքներն ու ճարտարապետական հիանալի կոթողները ենթակա եղած են քար քարի վրա չմնալու, ու մեր ստեղծագործ ժողովուրդին բաժինը եղած է հալածանք, տառապանք, դաղթ ու մահ։

Սովետական Հայաստանի արի ու շինարար ժողովուրդը գիտակցած է, որ իր պարտքը եղած է վճարել նախորդ տասը դարերու բացը։ Ու կարելի է որոշ կերպով նկատել, որ այս 34 տարիներու ընթացքին մեր ժողովուրդը շինած է կատաղորեն, մոլեգին թափով, մեկ կողմե՝ վճարելու համար նախորդ դժբախտ սերունդներու պարտքը և մյուս կողմե՝ հաջորդ սերունդներուն կտակելու համար հայրենի հսկա ժառանգություն մը։

Ու իր պատմական առաքելության և իր ապագայի հավատավոր ժողովուրդ մը միայն կրնար կառուցել շատ ու այսքան գեղեցիկ։

Ես անպատմելի հրճվանքով տեսա, որ Հայաստանի երիտասարդ, արի ու ստեղծագործ ժողովուրդը կհավատա իր պատմական առաքելության, իր ապագային ու իր հավերժության։ Ես հպարտ եղա իմ ժողովուրդով։ Ինձի այդ հպարտությունը ներշնչեցին Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճը, Պետական օպերայի շենքը, Մածկած շուկան, Հաղթանակի կամուրջը, Երևանի Ստադիոնը— մարզարանը, Համալսարանի նոր շենքերը, վերջապես քանակի նոր շենքերը, որ մենք այցելեցինք։

Մենք մեր ընկերներով կարողացանք այցելել Հայաստանի բազմաթիվ գործարաններն միայն երեքը— Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանը, ժամացույցի գործարանը և Սևանի էլեկտրակայանը— Սևանգէսը, որոնցմե յուրաքանչյուրը պարզ այցելելը բազմաթիվ ժամեր գրավեց։ Անկարելի է հավատալ, թե մեր ժողովուրդը, ծածու փոքրը կրցեր է կառուցել այդպիսի վիթխարի գործարաններ։ Ես ապշահար մնացի և իրականությունը շոշափելե ետք իսկ զարմացա, թե մեր փոքր ժողովուրդը ի՞նչպես կարողացած է շինել ու սարքավորել այդ մեծ գործարանները։ Մեր տեսած այդ գործարաններեն եթե միայն մեկը շինած ըլլար մեր ժողովուրդը, կբավեր զինք գովելու։ Բայց մեր ժողովուրդը շինած է տասնյակներով, հիմնյակներով մեծ, ու հարյուրավոր մանր գործարաններ, ուր կաշխատին բազմահազար հայ բանվորներ, քաջ, աշխատասեր ու հմուտ։ Երբ մարդ կտեսնե Հայաստանի արդյունաբերական կեդրոնները, կհավատա, թե մեր փոքր ժողովուրդը անհունորեն մեծ է իր կարելիություններով և անոր առջև պարտված է բնությունը։ Այդպես կվկայե Սևանգէսը, և անոր վեցական կայանները, արդեն շինված ու գործող կամ շինության մեջ եղող։ Երևանի ժամացույցի հսկա գործարանին գլխավոր ճարտարագետներեն մեկը, ի պատասխան իմ հարցումիս, վստահորեն ըսավ.

— Շվեյցարական ամենեն նուրբ ժամացույցների արտադրման աստիճանին ո՛չ միայն պիտի կարողանանք հասնել, այլև պիտի կարողանանք անցնել առաջիկա 2—3 տարում։

Տեսա մեր գրողները, արվեստագետները, մտավորականները ու համալսարանական ուսանողները, որոնք քանակ մը կարող են կազմել։ Տեսա Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը իր տան մեջ, հավատքով ու տենչալքով գոտեպնդված. ամբողջ ժողովուրդի սիրելին է ան, շրջապատված գորոյի գրագրությամբ։ Վարպետը իր բանաստեղծության չափ դիս զարմացուց իր քաղաքացիական պարտավորություններուն մեջ, երիտասարդի մը պես կամանակցի հանրային կյանքին ու գործին։ Տեսա մեր գրողները՝ Գրողներու տան մեջ. երբ այդ ճարտարապետական հիանալի շենքեն ներս մտա, գլուխ-գլխի տված էին արծաթ մազերով Արազին ու Ստեփան Զորյանը, աշխույժ վերպով կխոսեին Սիրասն ու Հրաչյա Քոչարը, ապա մյուս բազմաթիվ երիտասարդ գրողները, որ ձեռագրի ծրարներով կանցնեին սենյակե սենյակ։ Տեսա մեր հիանալի արվեստագետները— երաժիշտներ, դերասաններ, պարողներ, նկարիչներ։ Իրենց կյանքը կընթանար ստեղծագործությամբ։ Ես ինչպե՞ս մոռնամ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճին մեջ, որուն գեղեցկությունը նկարագրելը վեր է իմ ուժերես, իմ տեսած երգի և պարի անսամբլի ելույթը։ Տեսա մեր ուսանողներն ու մտավորականները, որտեղ բոլորն ալ միայն կխոսին, թե ինչ ըրած են և տակավին ինչքան բան ունին ընելիք։ Ո՛չ միայն անոնք, այլև

բոլոր հայաստանցիները կզգան ու կասին, թե ի՞նչ կրնեն և թե ի՞նչեր պիտի ընեն, Հայաստանի աճող, զարգացող ու թափով հառաջացող կյանքը կշնչեն ու միասին կաճին բոլորը։ Առանց բացառության յուրաքանչյուր քաղաքացի մաս կկազմի հավաքական կյանքին, ինչպես պտուտակները մեծ մեքենականության։ Ժողովուրդը միաձուլված է զարմանալի կերպով, ու բոլորը մեկ կհառաջանան։ Ոչ մեկ կդզիացում։ Ու հավաքական այս առաջընթաց կյանքին լիովին մաս կազմած են հայրենադարձները, մտավորական, ուսանող, գիտնական, նկարիչ և բանվոր։

Ես տեսա հայրենադարձ գրող Ստեփան Ալաճաճյանը, որ ձեռագրի տրցակ մը թեին, վար կիջներ Գրողներու տան աստիճաններեն։

Տեսա նկարիչներ Հ. Կալենցն ու Հովհաննես Աստուրյանը, իրենց բազմաթիվ նկարներով, որոնք կպատկերացնեին մեր արդյունաբերական կեդրոնները, մեր նորակառույց թաղամասերը, մեր հայրենի բնությունը՝ Լոռին, Սևանը, Դիլիջանը, դետերը, դաշտերն ու լեռները։

Տեսա հայրենադարձ աշակերտները, որոնք կհարատևանային իրենց գերազանցիկ նիշերով և կամ իրենց ազատ ժամերուն կմասնակցեին Մանկական երկաթուղիի աշխատանքներուն իբրև մեքենավար, պաշտոնյա կամ... Ճամբորդ։ Երևանի բոլոր գործարաններուն մեջ հանդիպեցանք հայրենադարձ ճարտար բանվորներու։ Բոլորովին պատահաբար երկու տեղ— Երևանի էլեկտրամեքենաշինական ու ժամացույցի գործարանի պատվո տախտակներուն վրա — հանդիպեցա երկու հայրենադարձներու անունները, որոնք իրենց պարտավորությունը կատարած էին գարձրագույն չափանիշով։ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի պատվո տախտակի վրա հանդիպեցա Հալեպեն հայրենադարձ, ինձի ծանոթ ու ճարտար մեքենագործ Անդրանիկ Հարությունյանի անվան, որ առաջադրանքը գերակատարած էր 295,5 տոկոսով, իսկ ժամացույցի գործարանին մեջ՝ Դամասկոսեն ներգաղթած Խաչիկ Սաֆարյանի անվան, որ իր առաջադրանքը գերակատարած էր 333 տոկոսով։

Հայրենադարձ մեր զանգվածը ձուլված է մեր հայրենական ժողովուրդին հետ։

Երևանի մեջ մենք տեսանք մշակույթի բազմաթիվ հիմնարկներ, Մատենադարանը, դրախտանոցները, վաճառատուները։ Այդ բոլորի մասին պատմել անկարելի է։ Բայց ես երբեք պիտի չմոռնամ մեր այցելությունը Մատենադարան, այսինքն՝ Ձեռագրատուն, ուր տասը հազար հայերեն ձեռագրեր համախմբված են և կպահպանվին մեծագույն զուգուշանքով։ Նույնպես անկարելի է մոռնալ մեր հանդիպումը Գիտություններու ակադեմիան, ուր ծանոթացանք պատկառելի կազմին հայ ակադեմիկոսներու և գիտական աշխատակիցներու, որոնց ուսումնասիրության առարկաներն են գիտությունը և հայ մշակույթը իրենց բոլոր բաժանմունքներով։

Ի տես այս բոլոր հաջողություններուն, հայ մարդու ոգևորությունը կբարձրանա և կզորանա հավատքը հայ ժողովուրդին և անոր նոր Հայրենիքին հանդեպ։

Ինչ որ իրագործված է, հավաստիքն է ապագա մեծագույն իրագործումներուն։

Վարպետը՝ Ավետիք Իսահակյան, ինը տարի առաջ մարգարեացած էր. «Մեզ մոտ ինչ որ լավն է, մնայուն է, ինչ որ վատն է, գնայուն է։ Արդարև, լավ բաները հավերժացած են ու կհավերժանան, և գեշ բաները գացած են։

Ապրի՞ հայ ստեղծագործ ժողովուրդը Արարատի հովանիին տակ, թո՛ղ անսասան մնա Մայր Հայրենիքը, որպես հավիտենական պատվանդան իր ստեղծագործ ու հանճարագործ զավակներու գոյության։

---

## ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԴՈԿՏ. ԳՐԻԳՈՐ ԲԱՄԲՈՒԿՋՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

*Սիրելի՞ հայրենակիցներ,*

*Ռումանահայ գաղութեն և ուրիշ երկիրներեն եկած պատվիրակներուն հետ մասնակցեցա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի հուղարկավորության։ Շատ հուզիչ էր տեսնել, թե ինչպես հավատացյալները խոր սիրով իրենց հարգանքը մատուցին հայրենասեր Հայրապետի հիշատակին։*

*Այս այցելության առթիվ, մեր հարազատ Հայրենիքի մեջ մեզի ամեն հնարավորություն տրվեցավ, որպեսզի կարենանք տեսնել մեր շքեղ մայրաքաղաք Երևանը իր շքեղակայքով և վայելել անոր գեղեցկությունները։*

*Առաջին անդամն է, որ տեսա իմ Մայր երկիրը և հասկնալի է իմ մեծ ուրախությունը։ Այդ ուրախությունը մեծ է ո՛չ միայն*

որովհետև իմ նախահայրերու Հայրենիքը տեսա, այլ նաև անոր համար, որ այս հողին վրա տեսա զմայլելի բաներ, որոնցմով հիացա։

Երևանը շատ սիրուն քաղաք մըն է, կառուցված արդիական պլանավորումով և հայկական հին ճարտարապետության ոճի և քաղաքաշինարարության նորագույն նվաճումներուն օգտագործումով։ Քաղաք մըն է հարատև զարգացման ու շինարարության մեջ, ինչպես ամբողջ երկիրը։

Այցելեցի Երևանի էլեկտրամեքենաշինական, ժամացույցի գործարանները, Սևանի էլեկտրակայանը, Արղնիի առողջարանը, հիվանդանոցներ, Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճը, Օպերան, Ստադիոնը, ինչպես նաև բազմաթիվ բնակարաններ։

Իբրև բժիշկ, իմ վրա շատ ուժեղ տպավորություն թողուց մասնավորապես Արղնիի առողջարանը, որտեղ հանդիպեցա լավ մասնագետ բժիշկներու, տեսա ամենաարդիական բժշկական տարքավորումներ։

Իմ այս բոլոր տեսածներեն եզրակացուցի, որ Երևանը ճարտարարվեստական կեդրոն մը եղած է՝ օժտված սովետական առաջավոր տեխնիկայով։

Բոլոր տեսակի կառուցումները իրականացված են գեղեցիկի և օգտակարի գաղափարներու զուգակցությամբ։

Չկա ոչ մեկ նոր կառույց, ուր կարելի չըլլա հաստատել կառուցողներու հոգատարությունը՝ ապահովելու համար շինության ամրությունը, գեղեցկությունը և առողջապահական հարմարությունները։

Փողոցներն ու պողոտաները լայն և ուղիղ, մաքուր ասֆալտապատված և եղերված շքեղ շենքերով՝ Երևանին հիանալի տեսք մը կուտան։

Կենդանի կյանքը փողոցներու մեջ, տրամվայներու, տրոլեյբուսներու և շքեղ ավտոմեքենաներու երթևեկությունը, եռուն առևտուրը խանութներուն մեջ և մարդոց զվարթությունը, ինձի փոխանցեցին նոր, լայն հորիզոնով կյանքի մը ըմբռնումը։

Մենք, քանի մը Երկիրներե եկած պատվիրակներս, հանդիպեցանք իրարու մեր Մայր Հայրենիքին մեջ։

Այս հանդիպումը հայրենի ծաղկող հողի վրա՝ ա՛լ ավելի ուժեղացուց մեր բոլորիս հայրենասիրությունը։

Խոսելով Երևանի մեր հայրենակիցներուն հետ կզգաս, թե ինչպես քեզ կգրավեն իրենց ներդաշնակ հայերենով, իրենց հյուրընկալ և անկեղծ վերաբերմունքով։ Ինչ որ քու վրա մասնավոր տպավորություն մը կթողու, այդ անոնց համեստությունն է, որ այնքան բնորոշ է սովետական մարդուն։ Բոլոր նվաճումներուն մեջ, ես շարունակ կտեսնեմ նոր մարդը, որ կվերափոխե բնությունը հօգուտ ժողովուրդին։

Խաղաղ, ստեղծագործական կյանքը, որ կտեսնես մեր Հայրենիքին մեջ, քեզ մտածել կուտա այն մեծ աշխատանքի մասին, որուն լծված են խաղաղության մեծ ճակատի բոլոր ժողովուրդները առանց ազգային և կրոնական խտրության, ժողովուրդներ, որոնք Սովետական Միության մեջ կտեսնեն խաղաղության ամրակուռ ամրոցը։

Վերադառնալով Ռումանական ժողովրդական Հանրապետություն, հոն բոլոր տպավորություններս պիտի հաղորդեմ իմ հայրենակիցներուն, հրահրելով անոնց սրտերուն մեջ արդար հպարտության և ուրախության զգացումներ։

# ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՍԵՍԻԱՆ.**— Հունիսի 3—4-ին Երևանում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի 5-րդ սեսիան։ Սեսիան քննարկեց և հաստատեց Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության 1954 թվականի պետական բյուջեն և 1953 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը։

Հիշյալ հարցի առթիվ զեկուցումով հանդես եկավ ֆինանսների մինիստր Լարիսա Ստեփանյանը։

Զեկուցողը նշեց, որ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների հաջողությունների շնորհիվ տարեցտարի աճում է նաև պետական բյուջեն։ Հատկապես ակնառու են այդ հաջողությունները արդյունաբերության ասպարեզում։ Անցյալ 1953 թվականին արդյունաբերական արտադրանքի թողարկումը, նախորդ 1952 թվականի համեմատությամբ, աճեց 18,5 տոկոսով։ Ժողովրդական տնտեսության բարգավաճման շնորհիվ 1953 թվականի պետական բյուջեն կատարվեց հաջողությամբ։ Բյուջեի եկամուտները կազմեցին 1.212.000.000 ռուբլի, իսկ ծախսերը՝ 1.183.700.000 ռուբլի։ Այսպիսով տարեկան եկամուտները 28.300.000 ռուբլով գերազանցեցին ծախսերը։

Այնուհետև զեկուցողը մանրամասն կանգ առավ ընթացիկ 1954 թվականի բյուջեի նախագծի վրա, որը հաստատման էր ներկայացված Մինիստրների Սովետի կողմից և նշեց բյուջեի եկամուտների բոլոր հնարավոր աղբյուրներն ու ծախսերը։

Լսվեց նաև Գերագույն Սովետի բյուջետային հանձնաժողովի հարակից զեկուցումը։

Մինիստրի զեկուցման առթիվ ելույթ ունեցան 37 դեպուտատներ, որոնք արեցին մի շարք դիտողություններ և առաջարկներ բյուջեի կատարման վերաբերյալ։

Սեսիան, հաշվի առնելով բոլոր դիտողություններն ու առաջարկները, Հայկական ՍՍՌ 1954 թվականի պետական բյուջեն հաստատեց՝ եկամուտների գծով 1.231.565.000 ռուբլի, իսկ ծախսերի գծով՝ 1.225.414.000 ռուբլի։

Բյուջեի եկամուտների ավելի քան 80 տոկոսը, այն է մոտ 993.000.000 ռուբլի ստացվելու է պետական և կոոպերատիվ ձեռնարկություններից ու կազմակերպություններից։ Զգալի չափով կրճատվում է բնակչությունից գանձվող հարկը։ Այսպես, օրինակ, 1952 թվականի համեմատությամբ գյուղատնտեսական հարկի չափը կկրճատվի ավելի քան 54 տոկոսով։

Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ֆինանսավորման համար հատկացվում է ավելի քան 637.000.000 ռուբլի կամ 23.000.000 ռուբլի ավելի, քան անցյալ տարի։ Այդ միջոցներից մոտ 248.000.000 ռուբլի հատկացվում է արդյունաբերության և մոտ 128.000.000 ռուբլի գյուղատնտեսության հետագա զարգացման համար։

Կոմունալ-բնակարանային շինարարության գծով կատարվող ծախսերը կկազմեն ավելի քան 125.000.000 ռուբլի։

Ընթացիկ տարվա պետական բյուջեի ծախսերի խոշոր մասը կազմում են սոցիալ-կուլտուրական միջոցառումների հատկացումները, այն է 767.300.000 ռուբլի, որը 6,5 տոկոսով ավելի է, քան 1953 թվականին։ Այդ հատկացումներից ավելի քան 516.000.000 ռուբլի կկազմեն լուսավորության և կուլտուրայի զարգացման, 176.500.000 ռուբլի առողջապահության ծախսերը և այլն։

Պետական տպարատի պահպանման ծախսերը կկազմեն մոտ 84.000.000 ռուբլի՝ զգալիորեն պակաս, քան անցյալ տարի։

Սեսիան հաստատեց նաև Հայկական ՍՍՌ ռեսպուբլիկական և տեղական բյուջեները։

Այնուհետև հաստատվեցին 4-րդ և 5-րդ սեսիաների միջև ընկած ժամանակաշրջանում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության կողմից ընդունված հրամանագրերը։

**ԳԵՐՄԱՆԱ-ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.**— Մայիսի երկրորդ կեսին Հայաստանում հյուր եղավ Գերմանա-սովետական բարեկամության ընկերության պատվիրակությունը։ Հյուրերը դիտեցին Երևանի տեսարժան վայրերը, ծանոթացան բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատանքներին, այցելեցին Մատենադարանը, Պետական պատկերասրահը, Գիտությունների ակադեմիան, դիտեցին ուրարտական ամրոցի պեղումները Կարմիր բլուրում, եղան Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղում, Արդենի կուրորտում։

Արվեստի աշխատողների տանը նրանց հանդիպում ունեցան հայ երաժշտագետների, նկարիչների, դերասանների, կուլտուրայի գործիչների հետ։

**ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ.**— Սույն թվականի մայիսի վերջերին Բաքվում տեղի ունեցավ կերպարվեստագետների անդրկովկասյան կոնֆերենցիա, որին մասնակցեցին նաև Մոսկվայից ու Սովետական Միության այլ կենտրոններից հրավիրված ականավոր արվեստագետներ։ Կոնֆերենցիան քննարկեց Անդրկովկասյան ռեսպուբլիկաներում կերպարվեստի արդիական վիճակը և նրա հետագա զարգացման հետ կապված մի շարք հարցեր։ Այդ առթիվ զեկուցումներով հանդես եկան Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կերպարվեստագետների միությունների ներկայացուցիչները։

Կոնֆերենցիայի կապակցությամբ ադրբեջանական արվեստի Պետական թանգարանի սրահներում բացվել էր Անդրկովկասի ռեսպուբլիկաների արվեստագետների ստեղծագործությունների ցուցահանդես, ուր ներկայացված էին ավելի քան 700 գործեր։

ԱՐԶՆԻ ՋՐԱԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԵՒՆԱԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ.— Անցյալ 1950 թվականին Հայաստանի էլեկտրաարդյունաբերության զարգացման ասպարեզում խոշոր հաջողություն ձեռք բերվեց։ Գործարկվեց Գյումուշի հիդրոէլեկտրակայանը, որը Հրազդան գետի վրա կառուցված ու հետագայում կառուցվելիք էլեկտրակայաններից ամենամեծն է։ Գյումուշի էլեկտրակայանի գործարկումով Հայաստանի գործող էլեկտրակայանների հզորությունը գրեթե կրկնապատկվեց։

Գյումուշից հետո անմիջապես սկսվեցին հաջորդ՝ Արզնիի ջրաէլեկտրակայանի կառուցման աշխատանքները, որոնք ամբողջ թափով ծավալված են սույն թվականի սկզբներից։ Եռնաբարության վայրում արդեն կատարված է մեծ աշխատանք՝ կառուցված են բանվորական նոր ավաններ մշտական բնակության համար, տեղադրված են շինարարական շատ մեքենաներ։ 1954 թվականի անցած ամիսների համար նախատեսված բոլոր աշխատանքները հաջողությամբ կատարված են։

Արզնիի ջրաէլեկտրակայանը էժան էներգիա կմատակարարի ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկություններին ու գյուղատնտեսությանը։ Այդ կայանի գործարկումով արմատականորեն կբարելավվի ջրամատակարարման գործը Կոտայքի, Աշտարակի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Շահումյանի շրջանների դաշտերի ոռոգման համար։

ՆԿԱՐԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՇՄՇԻՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Հայ ականավոր նկարիչ Հարություն Շամշինյանի մահվան 40-ամյակի կապակցությամբ Հայաստանի Պետական պատկերասրահում տեղի ունեցավ նրա աշխատությունների ցուցահանդես։ Ներկայացված էին նկարչի մոտ 70 լավագույն գործերը, որոնց զգալի մասը տրամադրել էին Վրաստանի արվեստի և Թբիլիսիի պատմա-ազգագրական թանգարանները։

Հարությունը Շամշինյանը ապրել և գործել է Թբիլիսիում անցյալ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին։ 1888 թվականին նա փայլուն կերպով ավարտել է Պետերբուրգի նկարչական ակադեմիան։ Շամշինյանը խորապես ռեալիստ նկարիչ էր։ Նրա գործերի մեծ մասը պատկերում է հասարակ մարդկանց՝ արհեստավորների, գյուղացիների, ձկնորսների կյանքն ու կենցաղը, մարդկանց, որոնց դառն ու ծանր վիճակով խորապես համակված էր տաղանդավոր նկարիչը։

ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿ Ի ՊԱՏԻՎ ՌՈՒՍ ՄԵԾ ԳՐՈՂ Ա. Ս. ԳՐԻԲՈԵԴՈՎԻ.— Հռչակավոր ռուս գրող Ա. Ս. Գրիբոեդովի մահվանից պատուհասած հայտնի կոմեդիան առաջին անգամ խաղացվել է Երևանում, 1837 թվականին, պարսից սարդար Հյուսեին խանի պալատում։ Ժամանակի ընթացքում այդ պալատը ավերվել է։ Հիմա այդ վայրում կառուցված է «Ռեսթորան» տրեստի գինեգործարանը։ Գործարանի պատին փակցված է գեղեցիկ հուշատախտակ, որի վրա հայերեն և ռուսերեն լեզուներով գրված է. «Այստեղ, 1837 թվականին, հեղինակի ներկայությամբ, առաջին անգամ, ներկայացվել է ռուս մեծ գրող Այեքսանդր Սերգեևիչ Գրիբոեդովի «Խելքից պատուհաս» անմահ կոմեդիան»։

Հուշատախտակի բացմանը, որը տեղի ունեցավ մայիսի 30-ին, ներկա էին Երևանի գրական և թատերական հասարակայնության մեծ թվով ներկայացուցիչներ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԵՐԿԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ.— Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ավարտվեցին ուսանողական քննությունները. Այդ հաստատություններն ավարտեցին հազարից ավելի երիտասարդ մասնագետներ՝ բժիշկներ, գյուղատնտեսներ, երկրաբաններ, տարբեր մասնագիտության ինժեներներ, մանկավարժներ, տնտեսագետներ, պատմաբաններ, արվեստագետներ և այլն։ Նրանց ճնշող մեծամասնությունը աշխատանքի է նշանակված ռեսպուբլիկայի շրջաններում և քաղաքներում։ Նորավարտների որոշ մասը աշխատելու է Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներում։

Միայն Երևանի Պետական համալսարանն այս տարի ավարտեցին մոտ 500 երիտասարդ մասնագետներ։ 155 հոգի նոր շրջանավարտներ տվեց Գյուղատնտեսական ինստիտուտը։ Շուրջ 80 հոգի ավարտեցին Երևանի Գեղարվեստական-թատերական ինստիտուտը։ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան տվեց 48 շրջանավարտ։ Մեծ թվով երիտասարդ մասնագետներ տվեցին Պոլիտեխնիկական, Բժշկական, Անասնաբուժական-անասնաբուծական, Մանկավարժական, Ճարտարապետության և մյուս ինստիտուտները։

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Հունիսի կեսերին Երևան այցելեց Հունգարական Ժողովրդական Ռեսպուբլիկայի ճարտարապետների պատվիրակությունը, որը Սովետական Միությունն էր ժամանել Սովետական ճարտարապետների Միության հրավերով։ Պատվիրակության կազմի մեջ մտնում էին հունգարական ճարտարապետական արվեստի ականավոր գործիչներ։

Հյուրերը մեծ հետաքրքրությամբ ծանոթացան Երևանի նորակառույցներին, Հայաստանի ճարտարապետների աշխատանքներին, դիտեցին հին հայկական ճարտարապետության հուշարձանները։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ.— Հայաստանի աշխատավորները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում դեպի ժողովրդական դեմոկրատիայի երկրների գրողների աշխատությունները։ Հայերեն լեզվով հրատարակված են լիտացի կին գրող Գին Լինի «Արևը Սանգան գետի վրա» և բուլգարական կլասիկ գրող Ի. Վազովի «Լծի տակ» վեպերը, բուլգարական գրող Է. Գելչևի պատմվածքների ժողովածուն։ Օրերս լույս տեսավ ռումինական գրող Մ. Սադովյանուի «Միտրյա Կոկորն» վիպակը։

Ընթացիկ տարում Հայաստանի պետական հրատարակչությունը լույս կընծայի չինական ժամանակակից հայտնի գրող Գո Մո-ժոյի բանաստեղծությունների,

թատերական ու արվեստ երկերի ստվար ժողովածուն, ինչպես նաև գերմանական պրոգրեսիվ գրող Աննա Զեգերսի «Մեռածները մնում են երիտասարդ» վեպը։

ԱՐՏԱՇԱՏԻ ԵՐԺԱՆԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ 20-ԱՄՅԱԿԸ.— Լրացավ Արտաշատի շրջանային թատրոնի գոյության 20-ամյակը։ Իր գոյության երկու տասնամյակների ընթացքում թատրոնը խոշոր աշխատանք է կատարել ինչպես Արտաշատի, այնպես էլ հարևան շրջանների բնակչության կուլտուրական սպասարկման ասպարեզում։

Թատրոնի հոբելյանի առթիվ Արտաշատում կայացավ երեկո, որին մասնակցում էին Երևանից եկած մեծ թվով հյուրեր։ Արվեստի գործերի գլխավոր վարչության պետ Հ. Խանջյանը, բացելով երեկոն, նշեց, որ այստեղ, ոչ հեռու պատմական Արտաշատ քաղաքից, 2.000 տարի առաջ, հայ ականավոր թատերագիր Արտավազդ Բ. թագավորի պալատում կայացել է Հայաստանի պատմության մեջ առաջին ներկայացումը, որով հիմք է դրվել հայկական թատերական արվեստին։

Ողջույնի խոսքեր ասացին Հայաստանի թատրոնների, կուլտուրայի և արվեստի հաստատությունների ներկայացուցիչները։

Վերջում Արտաշատի և Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնների ուժերով խաղացվեցին հատվածներ հայ հեղինակների թատերական գործերից։

20-ամյակի կապակցությամբ Հայաստանի Գերագույն Սովետի Նախագահության հրամանով թատրոնի մի խումբ դերասանների և դերասանուհիների շնորհվել են պատվավոր կոչումներ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.— Մայիսի վերջերին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի Սպառողական կոոպերացիայի 8-րդ համագումարը։ Համագումարը քննարկեց Հայկոոպի վարչության հաշվետու զեկուցումը վերջին 6 տարվա գործունեության մասին, ընտրեց նոր վարչություն, վերստուգիչ հանձնաժողով և պատգամավորներ՝ Սպառողական կոոպերացիայի Համամիութենական 4-րդ համագումարի համար։

Հայաստանի Սպառողական կոոպերացիան ռեսպուբլիկայի խոշոր առևտրական կազմակերպություններից մեկն է, որը գերազանցապես սպասարկում է գյուղական բնակչությանը։ Վերջին 6 տարվա ընթացքում ապրանքաշրջանառության ծավալը գյուղում կրկնապատկվել է։ Սպառողական կոոպերացիան գյուղում ունի շուրջ 2.000 առևտրական ձեռնարկություն։ Մոտակա 2 տարում դրանց թիվը կավելանա մի քանի հարյուրով։

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳԻՍՏԸ.— Գեղությունը ամեն տարի խոշոր գումարներ է ծախսում աշխատավորների հանգիստը կազմակերպելու համար։ Ընթացիկ տարվա ամռան ամիսներին, միայն Հայաստանի սահմաններում գտնվող հանգստյան տներում իրենց առողջությունը կվերականգնեն ավելի քան 10.000 աշխատավորներ։ Սևանի, Ախտալայի, Ծաղկաձորի, Ստեփանավանի, Կիրովականի հանգստյան տները սկսել են իրենց գործունեությունը։ Այս տարի այդ հանգստյան տների նորոգման, բարեկարգման և կահավորման համար հատկացված են մոտ երկու անգամ ավելի միջոցներ, քան անցյալ տարի։

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԵՎ ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ.— Հունիսի կեսերին, գրեթե միաժամանակ, լրացավ Լենինականի և Կիրովականի երաժշտական դպրոցների գոյության 20 տարին։ Երկու դպրոցների մանկավարժական մարմիններն էլ լայնորեն նշեցին իրենց ուսումնական հաստատությունների տարելիցը, որին ջերմորեն արձագանքեց ռեսպուբլիկայի երաժշտասեր հասարակայնությունը։

Լենինականի և Կիրովականի Ա. Միկոյանի անվան երաժշտական դպրոցները զգալի դեր են կատարել ինչպես երիտասարդ սերնդի դաստիարակման, այնպես էլ տեղի բնակչության մեջ երաժշտական մշակույթի տարածման ասպարեզում։ Երևանի պետական կոնսերվատորիայի ուսանողների զգալի մասը հիշյալ դպրոցների սաներն են։

Գոյության 20-ամյակի կապակցությամբ Լենինականի դպրոցին շնորհված է ականավոր հայ երաժշտագետ Քրիստափոր Կարա-Մուրզայի անունը։ Կառավարության որոշմամբ երկու դպրոցների մի խումբ մանկավարժների շնորհված են պատվավոր կոչումներ՝ երկարամյա և անբասիր աշխատանքի համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ.— Երևանի քաղաքային Սովետի սեսիան քննարկեց և հաստատեց քաղաքի 1954 թվականի բյուջեն՝ 185.237.000 ռուբլի ընդհանուր գումարով, որը 11.300.000 ռուբլով գերազանցում է 1953 թվականի բյուջեն։ Անցյալ տարվա համեմատությամբ զգալի չափով ավելացվել են հատկացումները բնակարանային շինարարության, քաղաքի բարեկարգման, կուլտուր-կենցաղային և առողջապահական հիմնարկների ցանցի ընդլայնման նպատակների համար։

ԱԽՏԱՅԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Ախտան մեկն է Սովետական Հայաստանի այն շրջանային կենտրոններից, որոնք արագորեն աճում և բարեկարգվում են։ Վերջին տարիների ընթացքում շատ բան է փոխվել այստեղ։ Ախտայի մոտ իր ակիզքն է առնում Գյումուշի լրացուցիչ էլեկտրակայանի մայր առուն, որի համար ստեղծված է մի գեղեցիկ արհեստական լիճ։ Լճի ափերը դարձել են ախտացիների սիրելի զբոսավայրերից մեկը։

Շրջանային կենտրոնում կառուցված են մեծ թվով քարաշեն բարձեր տներ, թատրոն, կուլտուր-կենցաղային այլ շենքեր։ Ահագին աշխատանք է կատարված մերձակա բլրալանջերը ծառազարդելու ուղղությամբ։ Այդ լանջերից մեկում գտնվում է ախտացիների զբոսայգին, որը գրավում է մի քանի հեկտար տարածություն։ Բարեկարգվում և ասֆալտապատվում են փողոցները։

ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ԿԱՅԱՐԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.— Օրեցօր վեր է խոյանում Երևանի երկաթուղային նոր կայարանի հոյակապ շենքը։ Նրա մի մասի կառուցումն արդեն ավարտված է և սկսված է ներսի հար-

դարումը։ Երկհարկանի այս գեղեցիկ շենքը, որը կառուցվում է Ճարտարապետ Է. Տիգրանյանի նախագծով, կհանդիսանա կայարանամերձ հրապարակի Ճարտարապետական անսամբլի կենտրոնը։ Շենքի կենտրոնական մասը կունենա բարձրարձակ աշտարակ, որը գմբեթի և մետաղյա գմբեթաձողի հետ միասին կունենա 72 մետր բարձրություն։

Նոր կայարանը կունենա մի քանի դահլիճ-սպասարաններ, մոր և մանկան սենյակներ, հեռավոր ուղևորների հանգստի սենյակներ, բաղնիք, հիանալի ռեստորան, վարսավիրանոց, վարչական շենքեր և այլն։

Այժմ արագ թափով առաջ է տարվում շենքի կենտրոնական հատվածի, հատկապես գմբեթի կառուցումը։

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՈՒՄԸ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Շինանյութերի և կառուցումների ինստիտուտն այս ամառ գիտական արշավախումբ է ուղարկելու Հայաստանի մի շարք շրջանները՝ ուսումնասիրելու հնագույն կառուցումները։ Արշավախմբի նպատակն է պարզել շինարարական տարբեր տեսակի քարերի երկարակեցությունը և դիմացկունությունը։ Նախատեսված է ուսումնասիրել 100 կառուցում, որոնց թվում ուրարտական ամրոցի մնացորդները Կարմիր բլուրում, Հաղպատի վանքը, Սանահինի կամուրջը և այլն։

Ուսումնասիրությունների արդյունքները խիստ օգտակար կարող են լինել մեր ճարտարապետների համար՝ ժամանակակից կառուցումների մեջ տարբեր տեսակի քարերի օգտագործման տեսակետից։

ՈՌՈԳՄԱՆ ՆՈՐ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ.— Այս տարի Հայաստանում զգալի աշխատանքներ են կատարվում նոր ջրանցքների շինարարության գծով։ Արդեն աշխատում է Թալինի ջրանցքը, որը ոռոգում է Նորակառույց Արագած և Արտենի գյուղերի հողերը։ Ներկայումս սկսվել է այդ ջրանցքի գլխավոր մասի կառուցումը։

Ավարտվել են Արզնի-Համիրամ ոռոգման սիստեմի շինարարական աշխատանքները, որը ռեսպուբլիկայի խոշորագույն շինարարական կառուցումն է։

Սկսված է Կոտայքի ոռոգման ցանցի՝ հատկապես Ալափարսի ջրանցքի կառուցումը։ Այդ ջրանցքը կոռոգի հազարավոր հեկտար նոր հողեր, որոնք կհատկացվեն բանջարաբուծության և այգեգործության։

Մեղրու, Ալավերդու և Հոկտեմբերյանի շրջաններում կառուցվում են մի շարք խոշոր ջրհան կայաններ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.— Հուլիսի 21—25-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարը։ Համագումարը, որի անդրանիկ նիստը կայացավ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի սրահում, բազմամարդ հասարակության ներկայությամբ, ներածական խոսքով բացեց հայ գրականության ականավոր ներկայացուցիչ, մեծանուն բանաստեղծ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ավետիք Իսահակյանը, որին ներկա եղողները ընդունեցին լեռ, երկարատև ծափահարություններով։

Իր հինգ օրվա աշխատանքի ընթացքում համագումարը լսեց և քննարկեց մի շարք զեկուցումներ՝ ինչպես Գրողների միության վարչության գործունեության, այնպես էլ սովետահայ բանաստեղծության, արձակի, թատերգության և գրաքննադատության արդի վիճակի և զարգացման խնդիրների մասին։ Զեկուցումների շուրջը բացվեց մտքերի լայն փոխանակություն, որին մասնակցեցին գրողներ՝ Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Լևոն Մեսրոպը (Փարիզից), Գ. Սևունցը, դրամատուրգ Ա. Կարինյանը և ուրիշներ։

Բոլոր ելույթ ունեցողները միահամուռ կերպով ընդգծեցին, որ Հայաստանի գրողների նախորդ համագումարից հետո անցած 8 տարվա ընթացքում սովետահայ գրականությունը հարստացել է մի ամբողջ շարք նոր, արժեքավոր գործերով թե՛ բանաստեղծության, թե՛ արձակի և թե՛ թատերգության բնագավառներում։ Միաժամանակ նշվեց, որ մեր առանձին գրողների գործերի գեղարվեստական մակարդակը դեռևս շատ ցածր է։ Համագումարը առաջ քաշեց գրողների ստեղծագործական աշխատանքների հետ կապված մի շարք կարևոր հարցեր։

Համագումարին հրավիրված էին Մոսկվայի, Լենինգրադի, Բելոռուսիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Տաջիկստանի և Սովետական Միության այլ ռեսպուբլիկաներից՝ Լեհաստանի, Ռումինիայի և Բուլղարիայի գրական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Հյուրերն իրենց ելույթներում յուրաքանչյուրն ողջունեցին կանանց, ինչպես նաև ժողովրդական դեմոկրատիայի հայ գրողներին և Հայաստանի աշխատավորներին՝ նշելով հայ ժողովրդի անգնահատելի հաջողությունները տնտեսության, շինարարության և մշակույթի բնագավառներում, խոսեցին ժողովուրդների բարեկամության ամրապնդման մասին։

Համագումարն ընտրեց գրողների միության վարչության նոր կազմ և պատգամավորներ՝ Սովետական Միության գրողների երկրորդ համագումարի համար։

Հայաստանի սովետական գրողների միության վարչության նախագահ վերընտրվեց Ավետիք Իսահակյանը, քարտուղարներ ընտրվեցին գրականագետներ Էդ. Թոփչյանը և Հ. Սալախյանը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ.— Հուլիսի 3-ից մինչև 26-ը Երևանում, Գ. Սունդուկյանի անվան թատրոնի շենքում տեղի ունեցան Բաքվի Մ. Ագիզբեկովի անվան ադրբեջանական պետական դրամատիկ թատրոնի ներկայացումները։

Երևանի հասարակությունը հյուրերին ցույց տվեց բացառիկ լեռ ընդունելություն։ Բոլոր ներկայացումներն անցան մեծ հաջողությամբ և արժանացան հանդիսականների ու տեղական մամուլի բարձր գնահատականին։ Թատրոնը տվեց 23 ներկայացում, որոնց ներկա եղան ավելի քան 20.000 հանդիսականներ։ Խաղարկվեց 10 թատերգություն, որոնցից վեցը ադրբեջանական ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ են։

Հասարակության լեռի ընդունելությանն արժանացան հատկապես Ալեքսանդր Շիրվանզադեի «Նամուս» և ազգբնչանական ականավոր բանաստեղծ-թատերգակ Սամեղ Վուրդունի «Վագիֆ» ներկայացումները։

Այդ նույն ժամանակում Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնը մեծ հաջողությամբ հանդես եկավ Բաքվում իր լավագույն բեմադրություններով։

Բաքվից վերադառնալուց հետո, Երևանում, Արվեստի աշխատողների տանը, կայացավ երկու թատրոնների անձնակազմերի ջերմագին հանդիպում։ Հանդես եկող հռետորները նշեցին երկու ռեսպուբլիկաների առաջատար թատրոնների փոխադարձ այցելության կարևոր նշանակությունը հայ և ազգբնչանական ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդման համար և ցանկություն հայտնեցին, որպեսզի ավելի սերտ դարձվեն երկու ռեսպուբլիկաների արվեստի աշխատողների փոխադարձ կապերը։

Ա. Գ. ՉԵԽՈՎԻ ՄԱՀՎԱՆ 50-ԱՄՅԱԿԸ.— Սույն թվականի հուլիսի 15-ին Սովետական Միության ժողովուրդները լայնորեն նշեցին ռուս մեծ գրող Ա. Գ. Չեխովի մահվան 50-ամյակը։

Հայաստանում ևս այդ տարեթիվը նշվեց արժանավոր կերպով։ Ռեսպուբլիկայի շատ քաղաքներում և գյուղերում տեղի ունեցան դասախոսություններ և երեկոներ՝ նվիրված գրողի հիշատակին։ Գրադարաններում և ակումբներում բացվեցին Չեխովին նվիրված ցուցահանդեսներ։ Ա. Գ. Չեխովի մահվան 50-ամյակի առթիվ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը հրավիրեց գիտական նիստ։

Հուլիսի 15-ի երեկոյան Երևանի ռուսական թատրոնի շենքում կայացավ հանդիսավոր երեկո, որին ներկա էր մեծ թվով հասարակություն։ Երեկոն հակիրճ խոսքով բացեց գրող Ստ. Զորյանը։ Ա. Չեխովի կյանքի և գրական գործունեության մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Հովհաննիսյանը։ Վերջում ռուսական թատրոնի ուժերով բեմադրվեց հանգուցյալ հեղինակի հայտնի աշխատություններից մեկը՝ «Երեք քույր» թատերգությունը։

Ա. Գ. Չեխովի անմահ աշխատությունները, որոնք ամենայն իրավամբ մտել են ինչպես ռուս, այնպես էլ համաշխարհային գրականության գանձարանը, վաղուց ի վեր դարձել են հայ ընթերցողի սեփականությունը։ Նրա լավագույն պատմվածքները հայերեն թարգմանվել և տպագրվել են դեռ անցյալ դարի վերջերին։ Ռուս մեծ գրողի գրամատիկական շատ գործեր շարունակ խաղացվել են հայ բեմի վրա։ Սովետական իշխանության տարիներին Ա. Գ. Չեխովի աշխատությունները հայերեն լույս են տեսել 50.000 օրինակ տիրաժով։ Անցյալ տարի Հայաստանի Պետական հրատարակչությունը սկսեց Ա. Գ. Չեխովի ընտիր երկերի հրատարակումը երեք հատորով։

ՀԵԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐՈՒՄ.— Ընթացիկ ամռան սկզբներին վերսկսվեցին հնագիտական պեղումները Կարմիր բլուրում, որը գտնվում է Երևանից ոչ հեռու։ Պեղումները կատարում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Լենինգրադի Պետական Էրմիտաժի հնագիտական արշավախումբը՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ռ. Պիոտրովսկու ղեկավարությամբ։

Այս տարվա պեղումները կատարվում են ուրարտական Տեյշեբաևի քաղաքի միջնաբերդում, որը կառուցված է եղել 7-րդ դարի կեսերին (մեր թվագրությունից առաջ)։ Չնայած կարճատև աշխատանքներին, արշավախումբը հետաքրքիր արդյունքների է հասել։ Հայտնաբերված է գինու մի նոր մառան, որը թվով չորրորդն է։ Ինչպես հայտնի է, այդ ամրոցը ավերվել է սկյութացիների կողմից 6-րդ դարի սկզբներին (մեր թվագրությունից առաջ)։ Մառանում, վիթխարի կարասների մոտ, հայտնաբերված են մարդկանց այրված կմախքներ։ Հավանաբար այդ մարդիկ զոհ են գնացել ամրոցի գրոհման պահին։

Մեկ ուրիշ ներքնատան մեջ հայտնաբերված են մեծ քանակությամբ բրոնզյա իրեր, այդ թվում ձիասարքեր, բրոնզյա զրահ և այլն։

Արշավախմբի կարծիքով պեղումները կարող են տալ բավականին արժեքավոր նյութեր՝ ուրարտական հին պետության մշակույթը բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար։

ՊՐՈՖ. Կ. ՍԱՐԱՋԵՎԻ ՄԱՀԸ.— Սույն թվականի հուլիսի 22-ին, 77 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց ականավոր երաժշտագետ, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ պրոֆ. Կոնստանտին Սողոմոնի Սարաջևը։

Պրոֆ. Կ. Սարաջևը 1898 թվականին ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիան և այնուհետև երկար տարիներ աշխատել է Մոսկվայի և Սարատովի բարձրագույն երաժշտական հաստատություններում։ 1935 թվականին նա հրավիրվում է Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում որպես դիրիժոր և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր։

Սկսած 1936 թվականից պրոֆ. Կ. Սարաջևը ղեկավարել է Երևանի երաժշտանոցը՝ իրեն տնօրեն։ Նա իր ամբողջ ուժերը նվիրել է հայկական երաժշտական մշակույթի զարգացման, երիտասարդ սերնդի ուսուցման պատվավոր գործին։ Պրոֆ. Կ. Սարաջևը խոշոր արվեստագետ էր, օժտված մեծ կարողություններով և անսպառ եռանդով։ Նրա մահը մեծ կորուստ է սովետական երաժշտական մշակույթի համար։

Կ. Ս. Սարաջևի թաղումը տեղի ունեցավ հուլիսի 26-ին, հայ գործիչների Պանթեոնում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային կից ստեղծված է Ռեսպուբլիկայի արտադրական ուժերի ուսումնասիրության խորհուրդ։ Վերջերս տեղի ունեցավ այդ խորհրդի առաջին նիստը, ուր քննության առնվեց 1954—1955 թվականների աշխատանքի ծրագիրը։ Որոշվեց առաջին հերթին ուսումնասիրության ենթարկել Հայաստանի ուժային միջոցների (ռեսուրսների) հետագա զարգացման հարցը, որպես ժողովրդական տնտեսության հետ սերտորեն կապված ավելի այժմեական հարց։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԶՆԻՈՒՄ.— Արզնին Հայաստանի լավագույն բուժավայրերից մեկն է, հռչակված իր հանքային ջրերով։ Ամեն տարի այստեղի հիանալի բուժարաններում հանգստանում են հազարավոր մարդիկ, որոնցից շատերը գալիս են Սովետական Միության ամենատարբեր վայրերից։

Ներկայումս Արզնիում կառուցվում է բուժական նոր առողջարանի շենքը, ուր միաժամանակ կարող է հանգստանալ 200 մարդ։ Կառուցման աշխատանքները մոտենում են իրենց ավարտին։ Շենքը չորս հարկանի է, ավելի քան 50.000 խորանարդ մետր ծավալով։ Այն ձևավորված է հայկական ճարտարապետության ոճով։ Հանգստացողների համար այստեղ կստեղծվեն բոլոր հարմարությունները։

ՊԵՐԷ ՊՈՒՇԵՑԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ.— Ավարտվեց հայ ականավոր վիպասան Պերճ Պուշյանի երկերի ժողովածուի երեքհատորյակի հրատարակումը։ Երրորդ հատորը, որը բաղկացած է 640 էջից, պարունակում է հեղինակի պատմվածքները, հուշերը, հոդվածները և նամակները։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ.— Ավարտվեց Հոկտեմբերյանի շրջանի Հայկական գյուղի շրջանային էլեկտրակայանի կառուցումը։ Այն կառուցված է Հոկտեմբերյանի ոռոգման ցանցի մայր առվի վրա, գլխավորապես Նայբանդյան, Բամբակաշատ և Հոկտեմբեր գյուղերի կոլտնտեսությունների միջոցներով։ Կայանը տվեց առաջին հոսանքը։

Վերջին երեք տարում դա երկրորդ շրջանային էլեկտրակայանն է, որը կառուցվել է հիշյալ շրջանում։

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՄԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՐ.— Երևանի Առողջապահական լուսավորության տունը քաղաքի տարբեր մասերում կազմակերպել է մայրերի հեռակա ուսուցման դասընթացներ։ Այդ դասընթացների նպատակն է անհրաժեշտ գիտելիքներ տալ մայրերին՝ երեխաների առողջության պահպանման, նրանց դաստիարակության գործի բարեկամման համար։ Դասընթացներում մայրերը լսում են գասախոսություններ բժշկական տարբեր հարցերի շուրջը, ստանում են երեխաների խնամքի ու դաստիարակության վերաբերյալ գրքեր, դիտում կինոնկարներ։

ՆՈՐ ԱԿՈՒՄԲՆԵՐ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ.— Սովետական Հայաստանում տարեցտարի ընդարձակվում է մշակութային-լուսավորական հիմնարկների ցանցը։ Միայն այս տարի գյուղական վայրերում բացվել են 40 նոր ակումբներ և գրադարաններ։

ՆՈՐ ԱՄՍԱԳԻՐ.— Երևանում լույս տեսավ «Հայաստանի կոլտնտեսական» նոր ամսագրի առաջին համարը։ Ամսագիրը հրատարակում է Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության Մինիստրությունը։ Այն կոչված է լուսաբանելու գյուղատնտեսական գիտության և կոլտնտեսային արտադրության հարցերը, օգնելու ռեսպուբլիկայի գյուղատնտեսության հետագա զարգացման գործին։

Առաջին համարում զետեղված են մի շարք հոդվածներ բուսաբուծության, անասնաբուծության, գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրիֆիկացման և այլ հարցերի շուրջը։

ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ.— Կիրովականում բացվել է գավառագիտական թանգարան, ուր խնամքով ցուցադրված են քաղաքի շրջակայքում կատարված զանազան պեղումների ժամանակ հայտնաբերված հնադարյան իրեր։ Շատ նյութեր կան նախասովետական Ղարաքիլիսային վերաբերող։ Այն կերպով ցուցադրված է ժամանակակից Կիրովականը, որն արագապես զարգանում է և դարձել է ռեսպուբլիկայի երրորդ քաղաքը։

Գավառագիտական այդպիսի թանգարաններ կան Լենինականում, Գորիսում և Նոր Բայազետում։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ.— Այս տարի Երևանի Պետական համալսարանը տվեց երիտասարդ լրագրողների (ժուռնալիստների) առաջին շրջանավարտները՝ թվով 31 հոգի։ Նրանք բոլորն էլ ուղարկվեցին աշխատանքի շրջանային, քաղաքային և ռեսպուբլիկական թերթերի խմբագրություններում։



# ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՈՂԲՈՒՄ Է ԵՐԱՆԵԼՆՈՒՀ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀԸ

## ՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵՆ ՕՈՒԴԸ

(Շիրակյան խոռնիկա)

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի հիվանդութեան կսկիծով տոչորվող Լենինականի հավատացյալները հոգեկան անկարագրելի խռովքով համակվեցին հայրենատեր և Մեծագործ Հայրապետի անդարմանելի կորստի գույժը լսելիս։ Տառնյակ հարյուրավոր հավատացյալներ, տխրամած դեմքով, դիմում էին Ս. Աստվածածին եկեղեցին՝ մեծ և առաքելաշնորհ Հայրապետի մահվան մասին տեղեկություն ստանալու համար։ Բայց դառն ճշմարտությունը կարեվեր խոցում էր այսօր նրանց սիրտը... Ոչ ևս էր ամենքից սիրված և հարգված հայրենասեր, մեծագործ Հայրապետը։ Հավատացյալները, վշտի ծանր հարվածների տակ, հավաքվում էին եկեղեցի։

Եկեղեցու զույգ զանգակները, իրենց սգավոր զողանջներով, գուժում էին համազգային մեծ կորուստը։

Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոսի կարգադրությամբ, քահանա հայրերից և հավատացյալներից կազմված պատգամավորությունը, առաջնորդ սրբազանի նախագահությամբ, մեկնեց Երևան՝ Հայրապետի թաղման ներկա լինելու համար։

Թաղմանական արարողության մայիսի 27-ին հետաձգվելու շուրջ պաշտոնական հաղորդագրությունը պատեհ առիթ հանդիսացավ Արարատյան համազգային Մայր Աթոռի և նրա արժանավոր Գահակալի հանդեպ՝ հայ ժողովրդի անխառն հարգանքի և անկեղծ սիրո սրտաբուխ արտահայտությունը։ Շատերը փութացին Ս. Էջմիածին՝ իրենց վերջին հարգանքը մատուցելու մեծանուն Հայրապետին։

Մայր Տաճարում, հազարավոր հավատացյալների ներկայությամբ, առավոտ և երեկո կատարվում էր հոգեհանգստյան պաշտոն։ Սգի տև քողով պատած էին Հայրապետական Աթոռը, Ավագ սեղանն ու եկեղեցու քահանները։ Տաճարն էլ իր տրտմաթախիծ արտաքինով մատնակցում էր հայ ժողովրդի մեծ սգին։

***

Մայիսի 27-ին, Հիսուսի հրաշալի Համբարձման տոնին, երբ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կամարների տակ վառարվում էր երջանկահիշատակ Հայրապետի թաղմանական արարողությունը, արտասահմանից ժամանած եկեղեցական և աշխարհական պատգամավորների և հավատացյալների ներկայությամբ, Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցին էլ լցվել էր բազմաթիվ բարեպաշտ հավատացյալներով։

Տ. Հովհաննես ավագ քահանա Տեր-Սարգսյանը մատուցեց սուրբ պատարագ և մեծ

Հայրապետի կյանքի և գործունեության դրվատիքը կատարելով, մխիթարեց սգակիր հավատացյալներին, վեր հանելով երջանկահիշատակ Հայրապետի ազգային-եկեղեցական գործունեությունը, ծանրանալով Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի բացման, մայրավանքի միաբանության և թեմերի կազմակերպման աշխատանքների վրա, հայրենի աշխարհի և արտասահմանի հայ ժողովրդի ցանկալի միասնականության գաղափարի վրա և մանավանդ Հայրենական Մեծ պատերազմի ընթացքին Վեհափառի ցուցաբերած հայրենասիրական ծառայություններին վրա։ Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն։

***

Մայիսի 29-ին Լենինական ժամանեցին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ սրբազան արքեպիսկոպոս Աջապահյանը և Դպրեվանքի վերատեսուչ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը։ Հաջորդ օրը, կիրակի 30 մայիսի, Տ. Դերենիկ եպիսկոպոսը մատուցեց սուրբ պատարագ, իսկ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոսը խոսեց հոգեշունչ քարոզ, դրվատեց Մեծ Հայրապետի գործունեությունը, Սփյուռքի հայ ազգայինների հարգանքներն ու ողջույնները հաղորդեց Մայր Հայրենիքի իրենց բախտավոր եղբայրներին ու քույրերին, մաղթելով, որ Սփյուռքի հայերն էլ հայրենի հողի վրա, հայրենի դրոշի, Ս. Էջմիածնի և պատմական Արարատի հովանու տակ ապրելու երջանկության արժանանան։

Եկեղեցին լցվել էր աննախընթաց բազմությամբ։ Ամեն մարդ ցանկանում էր մոտիկից տեսնել երկու բարձրաստիճան հոգևորականներին, համբուրել նրանց աջը, և ստանալ նրանց օրհնությունը։ Այդ օրը հավետ անմոռանալի կմնա Լենինականի հայ հավատացյալ ժողովրդի հոգում։ Մեր թանկագին և հայրենասեր հյուրերը այցելեցին Ս. Փրկիչ և Ս. Նշան եկեղեցիները, Տրիկոտաժի, Տեքստիլի հսկա գործարանները և ուրիշ զանազան հիմնարկներ, ամեն տեղ ականատես լինելով ժողովրդական բուռն հարգանքի և անխառն սիրո զեղումին։

Մեծ Հայրապետի անդրամանելի կորուստը ողբացող հավատացյալների, լինի Սփյուռքում և հայրենի աշխարհում, միակ ցանկությունն է Ս. Էջմիածնի Միածնաէջ Աթոռի վրա տեսնել մի արժանավոր Գահակալի։

ԹՂԹԱԿԻՑ

---

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ ԳՈՒՅԺԸ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՎՈ ՄԵՋ

Մինչ Մեռոնօրհնության հրավերին վրա հայության ակնարկը ուղղված էր դեպի Մայր Աթոռ, ու անհամբեր կսպասվեր այն երջանիկ օրվան, երբ հայության բոլոր թեմերուն հոգևորական և աշխարհական ներկայացուցիչները անանկարագրելի բերկրությամբ համակված՝ պիտի ուղղվին մեր պաշտելի և սիրեցյալ Ս. Էջմիածինը, մասնակցելու՝ հայության համար բացառիկ նշանակություն ունեցող Մեռոնի օրհնության, որ պիտի կատարվեր ձեռամբ Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետ Գեորգ Զ.-ի, ու դեռ ուրախությունը չթափանցած հոգիներուն, բոթաբեր գույժ մը անսահմանելի տխրությամբ կհամակե բովանդակ հայությունը։

Ս. Էջմիածինն, Գերագույն Հոգևոր Խորհուրդի կողմե, Հայրապետական պատվիրակ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանին ուղղված հեռագիր մը կգուժեր, թե Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ի Տեր հանդյավ մայիսի 9-ի կիրակի օրը։

Հայրապետական պատվիրակ սրբազան հայրը իր մոտ հրավիրեց քահանայից դասու Կեդրոնական վարչական խորհուրդի անդամները, անոնց հաղորդելու համար անդրամանելի կորուստը և տնօրինելու անհրաժեշտը։

ա) Որոշվեցավ բոլոր թեմերուն հաղորդել գույժը և ազգային սուգ հայտարարել։

բ) Շաբթվան ընթացքին և մինչև Վեհին թաղումը, ամեն օր երեկոյան ժամերգություն և հոգեհանգիստ կատարել։

գ) Կիրակի օր, առաջնորդանիստ Մայր եկեղեցվո մեջ սուրբ պատարագ և հոգեհանգիստ կատարել՝ Վեհափառ Հայրապետի հոգվույն ի հանգիստ։

դ) Կրթական խորհուրդի միջոցավ հրահանգել վարժարաններու հոգաբարձությանց՝ բոլոր աշակերտությունը եկեղեցի բերել կիրակի օրը։

Հոս տեղին է հիշել, թե շարաթ և կիրակի օրեր տեղի ունենալիք տաճյակ մը ձեռնարկներ հետաձգվեցան, մասնակից ըլլալու համար ազգային սուգին։

Պատվիրակ սրբազան հայրը, հակառակ հիվանդ ըլլալուն, ամեն կողմ անհրաժեշտ հրահանգներն հաղորդեց, մինչ խումբով, դեպի իր բնակարանը կդիմեին՝ եկեղեցական, ազգային, բարեսիրական, մշակութային, հայրենակցական և այլ կազմակերպությանց ներկայացուցիչները՝ անձամբ վշտակցություն հայտնելու համար ազգային մեծ կորուստի առթիվ։

Ամբողջ շաբաթ, Եկեղեցվո Տիկնանց բարեզարդիչ և Արանց եկեղեցական հանձնախումբերը լծվեցան անհրաժեշտ աշխատանքներու։

❊❊❊

Կիրակի, 16 մայիս, Երևման Ս. Խաչի տոնին օրն է։ Դիշերեն արդեն տեսնված են անհրաժեշտ պատրաստությունները։ Ի նշան սուգի եկեղեցին սև շղարշ զգեցած է։ Տաճարին կեդրոնը զետեղված էր եպիսկոպոսական տարազով մահարեմը, որուն բոլորտիքը, ինչպես նաև սուրբ խորանն ու դասը լեցուցած են ծաղկեպսակները, ղրկված Հայաստանյայց Եկեղեցվո Երիտասարդաց կազմակերպության, Մայր Եկեղեցվո զույգ հանձնախումբերու, Հ. Բ. Ը. Մ.-ի, Հաճեն հայրենակցական միության, «Շարժումա» և «Երևան» թերթերու, Ս. Շուշանի հոգաբարձության, Հայ երիտասարդաց ֆեդերասիոնի, Փորձառական թատերախումբի և Ֆլորենսի Մշակութային միության կողմեն։

Նախատեսելով աննախընթաց բազմություն մը, եկեղեցվո նստարանները վերցվեցան։ Ժամերգությունեն և անդաստանին վերջ սկսավ սուրբ պատարագը, զոր մատույց արժանապատիվ Տ. Նորայր ավագ քահանա Տեր Խորենյանը, մինչ ակոմիտասյան երգչախումբը, ղեկավարությամբ պարոն Լևոն Վարդապետյանի, օրվան սուգին թարգման հանդիսացավ, մեղմաձայն երգելով եկմալյան քառաձայն սուրբ պատարագը։

Սուրբ պատարագին, ժամանեցին օրթոդոքս քույր եկեղեցիներու ներկայացուցիչները, հունաց առաջնորդ գերաշնորհ Տ. Իրինեոս սրբազանը և առաջնորդ գերաշնորհ Տ. Սամեն սրբազան հայրերը, իրենց սարկավագներովը։

Հավարտ սուրբ պատարագի, հոգիհանգիստեն առաջ, քարոզեց Հայրապետական պատվիրակ սրբազան հայրը, հետևյալ բնաբանով՝ մեծ կորուստին կսկիծը իր սրտեն փոխանցելով հասարակության...

## «ՑԱՂԹՈՂ ԵՒ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ, ՆՄԱՆ ՄԵՆԻՆ ՄՈՎՍԷՍԻ, ՍԻՒՆ ԼՈՒՍՈՑ ԿԱՆԳՆԵԱԼ Ի ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ

Այս պահուս, երբ սգակիր սրտով կխոնարհինք մեր հոգևոր ծնողին, Հայաստանյայց եկեղեցվո մեծագործ և շինարար մեծ Հայրապետին հոգվույն առջև, այս պահուս, էջմիածնա Մայր Տաճարին մեջ, Իշման սուրբ սեղանին առջև կհանգչի Անոր դագաղը, և այս ու առաջիկա շաբաթներ, Հայրենիքի ժողովուրդը կուգա, կխոնարհի և իր վերջին հարգանքը կմատուցանե իր սիրեցյալ Հայրապետին, որ եղավ գովորագութ Հայր մը Իր պանդուխտ զավակներուն համար։

Եվ անոնք, որ զինքը, Իր ժպիտը տեսան, սիրեցին, պաշտեցին զինքը, որովհետև ճըշմարիտ Հայր մը եղավ Ան բոլորին համար։

Սուգ է պատեր հայոց աշխարհը, սև է հագեր Հայաստանյայց Եկեղեցին, ամբողջ հայությունը կողբա մեծ կորուստը, որովհետև կորսնցուցինք մեծագործ Հայրապետը, հայրենասեր Հայրը՝ հայ ժողովուրդին Հայոց նոր Հայրիկը, Հայաստանի սերը։

Ինկա՞վ բարեխնամ Հովվապետը։

Ինկա՞վ Հայաստանյայց եկեղեցվո բարեկարգիչը։

Ինկա՞վ հայության բարեգութ Հայրապետը։

Ինկա՞վ հայոց նոր Հայրիկը, որուն սիրտը բաբախեց Հայաստանի, Հայ դատին և հայ ժողովուրդի ապագային համար։

Ինկա՞վ մեծ Հայրը, Գեորգյան Ճեմարանին վերաբացողը։

Ինկա՞վ հայության մեծ զավակը և մեծ Հայրը։

Եվ այսօր, բովանդակ հայությունը իր սրտին խորեն կողբա մեծ կորուստը։

Մահը զինքը ավելի գեղեցկացուց։

Դավիթ կողբա Սավուղի և Հովնաթանի կորուստը, ըսելով. «Արթնցի՛ր, Իսրայէ՛լ, զիա՞րդ անկան զօրաւորքն։ Ցաւ է ինձ ի վերայ քո, եղբա՛յր իմ Յովնաթան, զիա՞րդ գեղեցկացար ինձ յոյժ...»։

Այսպես Վեհափառը ավելի մեծցավ Իր շինարար գործերով, ավելի անմահացավ Իր մեծ սիրտով։ «Զիա՞րդ անկաւ հայոց Մեծ Հայրիկը, բայց ավելի գեղեցկացավ մահվան մեջ, իբրև վերանորոգիչ և բարեկարգիչ Հայաստանյայց Եկեղեցվո։

Դառնալով մեր բնաբանին,— Ներսես Շնորհալիի Մեծքնա հայրապետին նվիրված շարականին,— արդարև գեորգ Ջ. հանդիսացավ «Ցաղթող և Սուրբ Հայրապետ» մը, հաղթահարեց ներքին ու արտաքին դժվարություններուն և վերականգնեց Ս. Էջմիա-

ծին ու Հայաստանյայց Եկեղեցին «նման մեծին Մովսէսի», եղավ հայ ժողովուրդին ազատարարը, փրկիչը երկրորդ աշխարհամարտի ընթացքին, ներդաղթի և հայրենադարձի հրավիրակը, «Սիւն լուսոյ, կանգնեալ ի մէջ Հայաստանեայց»։

Իրավամբ եղավ հավատքի, լույսի սյուն մը, անհողդողդ և անխախտ, հաստատուն ժայռ մը։ Անիկա, նման Սիմեոն ծերունիին, տեսավ հայոց ազգին փրկությունը և իր աչքերը փակեց երջանիկ Հոր մը նման։

Պողոս առաքյալին հետևյալ խոսքը ճիշտ ու ճիշտ վեհափառ Հայրապետին համար ըսված է.

«Քարի պատերազմը պատերազմեցա, ընթացքս կատարեցի, հավատքս պահեցի։ Ասկե վերջ կա ու կմնա ինձի արդարության պսակը, զոր Տերը, արդար Դատավորը պիտի հատուցանե ինձի այն օրը»։

Այո, հավատքի բարի պատերազմը մղեց երջանկահիշատակ Գեորգ Զ. Հայրապետը, բարի պատերազմը մղեց, ընթացքը կատարեց լիուլի։ Հայ ժողովուրդի, Հայ դատին և Հայաստանյայց Եկեղեցվո վառ ապագային նայեցավ, այսուհետև Իրեն կսպասե արդարության պսակը։

Անիկա արժանի է Տիրոջ փառաց պսակին։ Եվ այսօր, բովանդակ հայ ժողովուրդը սրտամորմոք կսկիծով կողբա իր Հայրիկին մահը, որ զինք առաջնորդեց դեպի հաղթություն, սեր, շնորհք և օրհնություն սփռեց հայության սրտին մեջ։

Եվ այսօր, կհանգչի Անոր բազմատանջ հոգին, կնստի Էջմիածնի Մայր Աթոռի նվիրական կամարներուն տակ, Հոգևոր Ճեմարանի Իր սիրեցյալ սաները և ապագայի հույսերը և բովանդակ հայ ժողովուրդը կտողանցեն և անոնք, որ բացակա են, հոգիով կհետևին Անոր։

Երբ հաջորդ կիրակի թաղման արարողությունը պիտի կատարվի և հոգին պիտի հանձնվի մեծագործ Հայրապետին մարմինը, եթե Տերը կամենա, մենք ալ պիտի մասնակցինք թաղմանական արարողության։

Մեր սրտին խորեն կաղերսենք, որ Տերը երջանիկ հայրապետներու կարգին դասե զԱյն, և Անոր արժանավոր հաջորդ մը բազմեցնե Լուսավորչի Աթոռին վրա, ու միսիթարե հայ ժողովուրդն ու տպավոր և որբացած Հայաստանյայց Եկեղեցին։

Սուրբ պատարագեն վերջ, Պատվիրակ սրբազան հայրը, շրջապատված գերաշնորհ Տ. Տ. Իրինեոս և Սամեն սրբազաններե, քահանաներն և դպիրներե, ծաղկեպսակ մը գետեղեցին մահարձմին շուրջ, ապա սկսավ հոգեհանգիստը։

Քույր եկեղեցվո ներկայացուցիչները սոսանին «Հոգատց» արտասանեցին։

Վարեն հոգևորականներն ու դպիրները, իսկ վերնատունեն՝ «Կոմիտաս» երգչախումբը կարծես փոխասացություն կկատարեին Երկընքի և երկրի միջև, վերացնելով ներկաներու հոգիները և վկայելով՝ թե Ամենայն Հայոց Հայրապետը Գեորգ Զ. չէ ննջած, այլ կապրի։

***

Մայիս 23-ի կիրակին, հանդիսավոր պատարագ մատույց և Վեհափառ Հայրապետի մահվան առթիվ տգեղունչ քարոզ մը խոսեցավ հոգեշնորհ Տ. Հարությունը վարդապետ Մուշյան։

Ներկա սգակիր հոծ բազմությունը արցունքով լսեց իր կորուսյալ Հայրապետի մասին խոսված այս ողբակոծ քարոզը։

Պատարագեն հետո տեղի ունեցավ մասնավոր հոգեհանգիստ, Վեհափառ Հայրապետի հիշատակին։

Արդարև կապրի Իր գործերովը, կապրի համայն հայության սրտին մեջ։ Եվ եթե դառն իրականությունը կհաստատե, թե Վեհափառը մարմնով բաժնված է մեզմե, սակայն Իր հոգին, հայրագորով Իր հոգին, հավիտենական լուսեղեն խորաններուն վրայեն պիտի շարունակե հովվել Իր հոտը այնպես, ինչպես էր երկրի վրա, նույնպես ալ երկինքեն պիտի շարունակե հրահրել մեր հայրենասիրական զգացումները, Իր հայրական քաղցր ժպիտով պիտի խրախուսե ու պիտի ներշնչե՝ հավատք, հույս և սեր, դեպի Հայրենիք, դեպի Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցին և զմեզ դոտեպնդե՝ դեպի լուսապայծառ ապագան։

Գեորգ Զ. երանաշնորհ Հայրապետը կապրի ընդմիշտ, հավիտենապես, ինչպես կապրեին Լուսավորիչներն ու Սահակ-Մեսրոպները, Շնորհալիներն ու Նարեկացիները։ Մահը խլեց անոնց մարմինները, մինչ հավիտենականությունը անմահությամբ հավերժացուց զանոնք։

Հավիտենական հանգիստ երանաշնորհ մեծ Հայրապետի հոգվույն։

ՇԱՎԱՐՇ ՔԱՀԱՆԱ ՄԵՀՐԱՊՅԱՆ

## ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ԳԵՈՐԳ Ջ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՄԱՐ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՆՉԵՍՏՐԻ ՄԵՋ

*Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին մահը խոր սուգի մատնեց Մանչեստրի հայ գաղութը։ Վարչագետ, իմաստուն, միտքի և հոգիի անմեկնելի առաքինություններով օժտված մեծ Հայրապետին կորուստը ամբողջ հայության համար դարձավ սուգի, տխրության, հոգեկան խռովքի պահ մը։*

*Գեորգ Ջ. Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսը, Իր իմացական և հոգեկան ընդունակ հատկություններով, ապրող մեր եկեղեցականության մեջ գագաթ մըն էր։ Իր սրբակենցաղ կյանքով, հայ ժողովուրդին և հայ Հայրենիքին հանդեպ Իր նվիրումով և ծառայասիրությամբ՝ բացառիկ մեծություն մըն էր Ան։*

*Աննման Հայրապետին հիշատակին պանծացումը պարտք մըն էր մեր փոքրիկ հայ գաղութին համար։ Մայիս 23, կիրակի օր, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեցավ Մանչեստրի հայոց Ս. Երրորդություն եկեղեցվո մեջ։ Պատարագիչն էր գաղութիս հոգևոր հովիվ Տ. Աշոտ քահանա Տեր Հարությունյան, դպրաց դասը կվարեր Անթիլիասի միաբանութենեն Միրֆիլդի աստվածարանական ճեմարանի ուսանող հոգեշնորհ Տ. Վազգեն արեղա Հովսեփյան։*

*Հոգարարձությունը նախօրոք մասնավոր ծանուցագիր-հրավիրագրերով հանրությունը տեղյակ պահած էր Վեհափառ Հայրապետին մահվան տխուր առիթով հանդիսավորվելիք հիշատակի սուրբ արարողություններեն։*

*Պատարագեն անմիջապես ետք, արժանապատիվ Տ. Աշոտ քահանան խոսեցավ հուզիչ և ցնցող քարոզ մը։ Մեծ Հայրապետին նվիրումի և ծառայության աստվածային շնորհներով օժտված երկարամյա կյանքը պատկերացուց պերճախոս բառերով։ Շեշտեց ի մասնավորի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո, Էջմիածնի Մայր Աթոռին հեղինակության և վարկին պահպանության համար Անոր ի գործ դրած ճիգը, վեր առավ երջանկահիշատակ Հայրապետին կատարածները իբրև հայ հավատքի և հայ կամքերու միասնականության հրալեպու պատգամախոս։ Պանծացուց հայրենասիրության և ազգասիրության քաջամարտիկ առաջնորդը Անոր անձին մեջ։ Ցավով անդրադարձավ այն տխուր իրողության վրա, որ մեծ Հայրապետը Իր աչքերը կփակեր առանց իրագործված տեսնելու Իր ժողովուրդին այն մյուս երազը. «Հայ ժողովուրդի առաջ այսօր հրամայական կանգնած են երկու ճակատագրական խնդիրներ. հայության ազգահավաքն իր նվիրական հողերու վրա և վերատիրացումը մեր հայրենի բռնագրավված հողերուն։ Այդ նվիրական ավանդը պիտի գուրգուրանքով պահե և պահպանե մեր ժողովուրդը,— ըսավ տեր հայրը,— պիտի պահե այնքան ատեն, որ կապրի գտվաճանված իր արդար դատի մորմոքով, և կշնչե աստվածային արդարության հավատքով։*

*23 մայիսի գեղածիծաղ առավոտուն, երբ Հայաստանի արևաշող երկինքին տակ, Էջմիածնի պատմական Մայր Տաճարին մեջ մեծ Հայրապետը խորունկ կնքվեր, հոս, հեռավոր Անգլիո այս փոքրիկ գաղութը ապրելու և տևականանալու իր կամքը կշրդեգե Անոր մեծափարթամ իմացականությենեն սփռվող կայծերով։ Հայերու այս փոքրիկ խումբը, մշուշներու այս ցուրտ երկրին մեջ, գոտեպնդված հայրենասիրության և նվիրումի բոցավառ շունչով և զրահված Հայաստանյայց Եկեղեցիի հավերժության հավատքով, արցունքներով ու պաղատագին կաղոթե Ամենակալին մեծ Հայրապետին հոգվույն համար, կհայցե Տիրոջմե, որ անսասան պահե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որպացնե հայությունը և պաշտպանե Հայաստան աշխարհը։*

**ԹՂԹԱԿԻՑ**

(Մանչեստր, 25 մայիս 1954)

(Գերուսր. «ՁԱՐԹՈՆՔ» օրաթերթ, № 208 (4.900)

---

## ԵՐՋԱՆԿՀԻՇԱՏԱԿ ԳԵՈՐԳ Ջ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ ԲՈԹԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԵՋ

*Հազիվ երեք օրեր անցած էին այն թվականեն, ուր հեռագիր մը Ս. Էջմիածինեն կծանուցաներ Վեհափառ Հայրապետին առողջության վատթարացումը և կթելադրեր Ս. Հակոբա միաբանության՝ աղոթել Անոր բժշկության համար, և ահա երկրորդ հեռագիր մը կգուժեր Նորին Ս. Օծության վախճանումը։*

Հուզումը համակած էր միաբանությունն ու ժողովուրդը։ Ընդհատ-ընդհատ կղզողանչեին եկեղեցիներու տխրալուր զանգակները։ Դպրոցներու աշակերտներուն կհաղորդվեր գույժը և անոնք կարձակվեին արտասվալից ու թախիծով լեցուն։ Ս. Հակոբա տաճարեն ներս, ավագ խորանին առջև, բեմին վրա զետեղված է փառավոր թիկնաթոռ մը Հայրապետական Գահը խորհրդանշող, որուն վրա տեղավորված են հովվական և վարդապետական զույգ գավազաններ, խույր մը, փոքրուրար մը և կորփուրա մը, ու բոլորը ծածկված սև քողով մը։

7 օր շարունակ հոգեհանգստյան պաշտոն կկատարվեր երեկոյան ժամերգութենեն հետո, իսկ կիրակի, 23 մայիսին մատուցվեցավ հանդիսավոր Եպիսկոպոսական սուրբ պատարագ և հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ ի հանգիստ հոգվո նորոգ հանգուցյալ Նորին Ս. Օծությունն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսին Ամենայն Հայոց։ Տաճարը տոնական օրերու հատուկ փայլ մը զգեցած էր և ժողովուրդը խուռներամ կդիմեր հոն՝ իր հարգանքի տուրքը մատուցանելու համար իմաստուն Հովվապետի անմոռանալի հիշատակին, և աղոթելու Հայաստանյայց Եկեղեցվո պայծառության ու բարգավաճ պահպանության համար։

Ատյանի մեջ տեղավորված էին աթոռներ՝ հրավիրված օտար հոգևոր պետերու և պետական բարձր անձնավորություններու համար։ Հետզհետե կուգային քաղաքիս սկզբնական զանազան խումբերը, Սրբոց Թարգմանչաց վարժարանի երկսեռ աշակերտությունը, ուսուցչական կազմը, ծանոթ ազգայիններ, և կգրավեին իրենց տեղերը ժողովրդական հոծ բազմության մեջ։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Ռուբեն արքեպիսկոպոս Մանասյան, որ զգացված ու զուսպ հուզումով, կարծեք վերացած է սուրբ սեղանին առաջ։ Ճաշու գիրքեն անմիջապես ետք քարոզեց գերաշնորհ Տ. Նորայր Եպիսկոպոս Պողարյան, որ դրվատելե հետո երանաշնորհ Հայրապետին առաքինություններն ու կատարած գործերը, ըսավ ի միջի այլոց. «Ան 66 տարի կատարյալ նվիրումով ծառայեց Հայաստանյայց Եկեղեցվո և 77 տարեկանին, երբ ուրիշներ հանգստյան կկոչվեին, Ան հանձն առավ ծանր լուծ մը և աշխատեցավ գլուխ հանել Իր դժվարին գործը ի գին ամեն զոհողության։ Վերականգնեց կերպով մը Գեորգ Դ. Մեծագործ Կաթողիկոսին գործը, ճեմարանը վերաբանալով և «Էջմիածին» պաշտոնաթերթը հրատարակելով։ Թեև Ան դժբախտությունը ունեցավ աչքերը փակելու չտեսած իր ջանքին արդյունքը, սակայն վստահորեն Ան պիտի տա իր պտուղը մոտ ատենեն։ Նմանեցավ նաև Իր նախորդներեն ուրիշ մեծ Հայրապետի մը, Աշտարակեցի Ներսես Կաթողիկոսին, որ իմաստուն գաղափարը ունեցած էր Այրարատյան դաշտի հայությունը բազմացնելու, որպեսզի ան օր մը կարենար նորեն Հայաստան դառնալ։ Գեորգ Զ. Կաթողիկոսն ալ հայրենասիրական նույն տգիով ուզեց, որ Իր տարագիր զավակները համախմբվին Ս. Էջմիածնի շուրջ և Արարատի շուքին տակ։ Շեշտելե հետո մեր սուգին մեծությունը, ավելցուց, թե մեզի համար մխիթարություն մըն է նաև, որ հայոց պատմությունը կհարստանա մեծ անունով մը։ «Գեորգ Զ. Հայրապետին անունը,— ըսավ,— պիտի արձանագրվի հայոց պատմության մեջ լուսավոր և անջնջելի տառերով։» Ապա Հայաստանյայց Եկեղեցվո զորացման և արժանընտիր Գահակալի մը հաջորդության բարեմաղթություններով վերջ տվավ սրբազանը իր խոսքին։

Իսկ ժամը 10-ին սկսան հասնիլ հրավիրյալները և տեղավորվեցան իրենց աթոռները։ Անոնց մեջ աչքի կդարնեին հունաց, ղպտաց, ասորվոց, հարեշաց եպիսկոպոսները, պապական նվիրակի փոխանորդը, Լատինաց Պատրիարքարանի դիվանապետը, Ֆրանչիսկյան միաբանության սուրբ տեղյաց հանձանձիլ վարդապետը, Անգլիքան եպիսկոպոսարանի ներկայացուցիչը, Հույն Կաթոլիկ Պատրիարքարանի պատրիարքական փոխանորդը, Դոմինիկյաններու վերատեսուչը, Պեր-բլաններու վերատեսուչը, Լութերականներու երեցը, Ֆրերներու կոլեջի վերատեսուչը, իսկ ազգական բարձրաստիճան պաշտոնատարներեն ներկա էին Արևմտյան Հորդանանի Ներքին գործոց նախարարության ներկայացուցիչը, Երուսաղեմի մութասարիֆը, Երուսաղեմի քաղաքապետը, ընդհանուր ոստիկանապետի փոխանորդը, Երուսաղեմի հին քաղաքի ոստիկանապետը և սուրբ տեղյաց քյամաքամը։

Սուրբ պատարագի ավարտումին, մասնավոր պատրաստված սև ժապավենով մոմեր բաժնվեցան հյուրերուն և սկսավ հոգեհանգստյան վեհաշուք արարողությունը՝ հանդիսապետությամբ գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոսի։ Տպավորիչ էր պահը. մինչ դաշնորեն կերգեր դպրաց դասը ղեկավարությամբ դպրապետ Պ. Ս. Գալայճյանի, վերեն, մեծ զանգը ընդհատ-ընդհատ, յուրաքանչյուր զարկին, կխառներ իր արցունքը Տաճարին զմբեթեն դեպի վեր բարձրացող մեղեդիներու, ու զուգակցելով կանչային անհունին մեջ...

Հյուրերը, հակառակ անոր, որ բան մը չէին հասկնար կատարված երգեցողությենեն,

սակայն և այնպես խորունկ երկրաղածութեամբ կհետևեին կատարվող բոլոր արարողութեանց պատարագեն սկսյալ, այնչափ տպավորիչ էր օրվան հանդիսութիւնը։ Այս պաշտոնի կատարումեն ետք, հարդարեալ դաս մտան Սուրբեն սրբազանի կողքին, և հոգեհանգստյան պաշտոն կատարեցին նաև հուն, ղպտի, ասորի և հաբեշ եպիսկոպոսները, յուրաքանչյուրը իրեն հատուկ լեզվով ու եղանակով։ Հուսկ տպա հրավիրյալները վեր առաջնորդվեցան Պատրիարքարանի ընդարձակ դահլիճը, ուր իրենց սրտագին ցավակցութիւնները հայտնելե ետք, հրաժեշտ առին Պատրիարքական տեղապահի փոխանորդ Սուրբեն սրբազանեն։

ԹՂԹԱԿԻՑ
(Երուսաղեմ, 25 մայիս 1954)

(Բեյրութ, «ՁԱՐԹՈՆՔ» օրաթերթ», № 209 (4.901)

---

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԳՈՒՅԺՆ Ի ՖՐԱՆՍԻԱ

Բովանդակ ֆրանսահայութիւնը մայիսի 12-ին իմացավ ամբողջ հայութեան կողմե սիրված ազգընտիր Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետին մահագուժը, որուն արձագանք կհանդիսանային ֆրանսական թերթերը։

Գերագույն Հոգևոր Խորհուրդեն հասած հաջորդական հեռագրերուն բովանդակութեան արդեն իսկ տեղյակ պետք է եղած ըլլաք, որով ավելորդ կհամարեմ կրկնութիւններ ընել։

Վեհին վախճանման լուրը առնելուն պես, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակութիւնը կոչ մը ուղղեց՝ հրավիրելով Ֆրանսայի բոլոր հայ եղեկեցիներու մարմինները մայիս 10-ի կիրակի օրը մատուցանել հատուկ տուրբ պատարագ և հոգեհանգստյան պաշտոն՝ ողբացյալ Հովվապետին համար։

Այսպես, Փարիզի Մայր եկեղեցին պատարագեց վերոհիշյալ նշանակված օրը Տ. Թովմաս ավագ քահանա Մինասյան, նախագահութեամբ Տ. Անուշավան աբեղա Զրդջանյանի։

Արֆորվիլի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցվո մեջ՝ Տ. Պարգև քահանա Մերճանյան։

Արնուվիլի Վարագա Ս. Խաչ եկեղեցին՝ Տ. Ադդե քահանա Փալլակյան։

Շավիլի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ Տ. Նսայի քահանա Ալթունյան։

Լիոնի շրջանը Ս. Աստվածածին եկեղեցիին մեջ՝ Տ. Վռամշապուհ քահանա Ղարիպյան։

Դեսինի Ս. Աստվածածին եկեղեցիին մեջ՝ Տ. Թորգոմ քահանա Քոստիկյան։

Պոն դը Շերրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիին մեջ՝ Տ. Վարդան ավագ քահանա Ժամկոչյան։

Վալանսի Խորակառույց եկեղեցիին մեջ՝ Տ. Սահակ քահանա Պապիկյան։

Գալով Մարսելի շրջանին, քաղաքին Ս. Թարգմանչաց Մայր եկեղեցին՝ Տ. Սեբոքեն ծայրագույն վարդապետ Մանուկյան։

Բոմոնի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ Տ. Հմայակ քահանա Համբարձումյան։

Սեն Ժերոմի Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցին՝ Տ. Սահակ քահանա Շամլյան։

Սենթ Անթուանի Ս. Թադեոս եկեղեցին՝ Տ. Ներսես քահանա Կատարինյան։

Ս. Կարապետ եկեղեցին՝ Տ. Հայկազուն քահանա Բանթիկյան։

Սեն Լուիի Ս. Հակոբ եկեղեցին՝ Տ. Պսակ քահանա Հայրապետյան։

Նիսի Ս. Աստվածածին եկեղեցին՝ Տ. Աստոմ քահանա։

Այսօր, կիրակի 23 մայիս, Վեհափառին օծման և թաղման օրը կրկին ֆրանսահայ բոլոր եկեղեցիներուն մեջ կատարվեցան հետ սուրբ պատարագի մասնավոր արարողութիւններ[1] նվիրված հայ ժողովուրդի սիրեցյալ մեծ Հովվապետի խնկելի հիշատակին։

(Կոստանդնուպոլիս, «ՆՈՐ ԼՈՒՍ»,
1 նուեմբեր 1954 թ., № 968)

---

1. Ինչպես կիմասցվի՝ մայիս 23-ին, Ֆրանսայի մեջ իմացված չէ, թե օծումն ու հուղարկավորութիւնը հետաձգված է մայիսի 27-ին։— Խմբագր. «ՆՈՐ ԼՈՒՍ»-ի։

# ՎԱՀԱՆ ԹՈՇԻԿՅԱՆ

Սույն թվականի հունիսի 14-ին, Կարսի հիվանդանոցում, 74 տարեկան հասակում վախճանվեց պոլսահայ մամուլի բազմավաստակ և լավագույն ներկայացուցիչներից մեկը՝ «նոր լուր»ի խմբագրապետ Վահան Սարգսի Թոշիկյանը։ Նա արևմտահայ հայտնի բանաստեղծ-գրականագետ Թորոս Ազատյանի հետ գալիս էր Էջմիածին՝ մասնակցելու նրչանկահիշատակ Գեորգ Զ. Կաթողիկոսի թաղման արարողություններին, սակայն ճանապարհին, անակնկալ, վախճանվում է Կարսի թյուրքական հիվանդանոցում։ Հանգուցյալի խնդրանքի համաձայն, նրա մարմինը փոխադրվում է Կոստանդնուպոլիս և մեծ հանդիսավորությամբ թաղվում Շիշլիի հայոց գերեզմանատունը։ Ըստ մամուլում եղած տեղեկությունների, թաղման արարողություններին նախագահել է գերաշնորհ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Կարապետյանը։

Վահան Թոշիկյանը ծնվել է 1880 թվականին Կոստանդնուպոլսում, Գնայը կղզում (Մարմարայի Իշխանաց կղզիներից մեկը)։ Նախնական կրթությունը նա ստանում է նույն կղզու հայոց դպրոցում, ապա շարունակում Սկյուտարի Բերբերյան գիշերօթիկ դպրոցում, որն ավարտելուց հետո նվիրվում է գրական հրապարակախոսական աշխատանքների։ Գրքի կամ մամուլի աշխատանքը Սկյուտարում կապված է զրկանքի, ստրապանքի, անգամ՝ քաղցի ու հալածանքի հետ։ Այդ ամենը, անտրտունջ, հանձն է առնում ողբացյալ Վահան Թոշիկյանը և պատվով կատարում մինչև իր կյանքի վերջին օրերը։

Թոշիկյանը 52 տարի անընդհատ աշխատակցում է «Մանգումէի էֆիտաս», «նոր կեանք», «ժամանակ», «Վերջին լուր» թերթերին և «Լոյս» շաբաթաթերթին։ 1907—1909 թվականներին հրավիրվելով Զմյուռնիա, նա ստանձնում է նախ «Արշալույս», և ապա «Արձագանք» թերթերի խմբագրապետությունը։ Հետագայում, վերադառնալով Կոստանդնուպոլիս, նա մինչև 1922 թվականը աշխատակցում է «ժամանակ» և «Վերջին լուր» թերթերին։ 1922 թվականին նա հիմնում է «նոր լուր»ը և 32 տարի շարունակ, մեծ համբերությամբ և սիրով, շարունակում այն մինչև իր ողբերգական մահը։ Իր այս դժվարին աշխատանքում նրան միշտ օգնելիս է եղել իր կյանքի ընկերը՝ գրականագետ տիկին Հայկանուշ Մառքը։ Թոշիկյանը, լավ ըմբռնելով հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու շահերը, միշտ պաշտպանել է Հայ Եկեղեցու միասնականությունը՝ Մայր Աթոռ Էջմիածնի գլխավորությամբ։ Նա իր խմբագրած թերթում անողոք պայքար է մղել հանուն Հայ Եկեղեցու դարավոր իրավունքների, Ազգային Սահմանադրության և Էջմիածնի ավանդական ու նվիրական շահերի։ Թոշիկյանը անհունորեն սիրում էր Էջմիածինը, Հայ Եկեղեցին և իր հայրենի երկիրը։

Մեղք, որ նա չտեսավ Էջմիածինը, չտեսավ Հուսավորչի նվիրական Գահը և այն հողը, որին տենչում էր, որի կարոտով ու պապակով տոչորվում էր երկա՞ր, երկա՞ր տարիներ։

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը երբե՛ք չի մոռանա իր եկեղեցաբեր և հայրենասեր ազնիվ որդու հիշատակը։

# ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Կարճատև հիվանդությունից հետո, 1954 թվականի հուլիսի 25-ի առավոտյան, դադարեց բաբախելուց մեր ամսաթերթի շնորհալի թղթակից Աղավնի Մեսրոպի Մեսրոպյանի սիրտը։ Թաղումը տեղի ունեցավ ամսի 27-ին, Երևանի գերեզմանատանը։ Հուղարկավորությանը մասնակցում էր հարգող բարեկամների և ծանոթների մեծ բազմություն, որոնք եկել էին իրենց վերջին հարգանքը մատուցելու հանգուցյալին։

Աղավնի Մեսրոպյանը ծնվել է 1891 թվականին, Կոստանդնուպոլսում, քահանայի ընտանիքում։ Իր նախնական ու միջնակարգ կրթությունն ստանալով Կոստանդնուպոլսի Էսայան վարժարանում, 1906 թվականին Աղավնին իր ծնողների հետ փոխադրվում է Լոնդոն, որտեղ և շարունակում է իր երաժշտական կրթությունը և 1911 թվականին ստանում երաժշտական բարձրագույն վկայական՝ որպես առաջին կարգի դաշնակահարուհի։ Լոնդոնում նա միաժամանակ հետևում է նկարչական կուրսերին։

Վերադառնալով Կոստանդնուպոլիս, 1911-ից, Աղավնին իրեն նվիրում է երաժշտական-մանկավարժական աշխատանքների՝ դասավանդելով որպես դաշնակահար ուսուցիչ ազգային վարժարաններում։ Էինելով ստեղծագործ աշխույժ ու խանդավառ բնավորության տեր, նա միաժամանակ ցուցաբերում է եռանդուն հասարակական գործունեություն։

Որպես երաժիշտ դաշնակահար, Աղավնու վրա շքեղագարդային նշանակություն է ունենում նրա ծանոթությունն ու մտերմական կապը հայ ժողովրդական երգի հանճարեղ վարպետ Կոմիտասի հետ։ Իր դաշնամուրային նվագակցությամբ Աղավնին հաճախ է մասնակցություն ունեցել Կոստանդնուպոլսում Կոմիտասի կազմակերպած համերգներին։ 1919 թվականին, ամուսնանալով Բագրատ Համբարձումյանի հետ, Աղավնին անցնում է Թբիլիսի, որտեղ և հաստատվում է մինչև 1931 թվականը։

Սովետական կարգերի հաղթանակի առաջին փակ օրերից անցնելով Գեղարվեստի աշխատողների արհեստակցական միության շարքերը, և որպես հիմնադիր անդամներից մեկը Թբիլիսիի Հայկական արվեստի տան, Աղավնին ծավալում է հասարակական լայն գործունեություն։ 1931 թվականից փոխադրվելով Երևան, Աղավնին դառնում է Երևանի Ռադիո-կոմիտեի արևելահայկական երաժշտության մենակատար դաշնակահարուհին, որպիսին նա շարունակում է մնալ մինչև իր կյանքի վերջին տարիները։

Երևանում իր բնակության մոտավորապես երկու տասնյակ տարիների ընթացքում Աղավնին միաժամանակ տարել է արդյունավետ մանկավարժական աշխատանք՝ հասցնելով բազմաթիվ աշակերտներ։

1946 թվականից սկսած, սրտային հիվանդության պատճառով, Աղավնին թեև հետզհետե հեռանում է իր այնքան սիրած դաշնամուրից, սակայն իր մեջ հորդող արվեստագետի եռանդն ու ստեղծագործական ավյունը փոխադրում է նկարչական ու գրական ասպարեզները։

Աղավնին թողել է մի շարք նկարներ, որոնցից իրենց վարպետությամբ աչքի են ընկնում «Հոգեկորույս Կոմիտասը», «Հայկական պանթեոնը», «Ինքնը», «Թբիլիսին» և այլն։ 1947 թվականին Հայպետհրատը լույս ընծայեց Աղավնու «Կոմիտաս—հուշեր» փոքրիկ բրոշյուրը։ Ունի ձեռագիր հուշերի մի հավաքածու՝ Գրիգոր Զոհրապի, Երվանդ Օտյանի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Ավետիք Իսահակյանի և ուրիշների մասին։

Աղավնու թողած ձեռագրերի մեջ առանձին ուշադրության արժանի է նրա «Կոմիտաս—հուշեր» ան-

համեմատ ավելի արժեքավոր ու ծավալուն աշխատությունը, որ նա պատրաստել է իր վերջին երկուերեք տարիների ընթացքում՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության բաժանմունքի երիտասարդ գիտաշխատող Գասպար Գասպարյանի աշխատակցությամբ։ Աշխատությունը արդեն արժանացել է Հայպետհրատի գեղարվեստական բաժնի դրական գնահատականին և մտել 1955 թվականի հրատարակչական ծրագրի մեջ։ Այդ կլինի ամենանվիրական ավանդը, որ նա թողնում է ի հիշատակ այն խանդաղատալից վերաբերմունքի, որ նա տածում էր դեպի հայ ժողովրդական երգը, դեպի այդ երգի խոշորագույն վարպետ Կոմիտասը։

Աղավնին մնկն էր այն բացառիկ կանանցից, որոնք իրենց բազմակողմանի գեղարվեստական շնորհներին զուգակցում են հասարակական լուրջ գործունեություն։ Իր հարազատ եղբոր՝ սփյուռքահայ հայտնի գրող Լևոն Մեսրոպի միջոցով, վերաբերի էջերում լույս տեսած «Բաբրիկեր մեր ալխարենն» իր նամակներով, Աղավնու անմիջական ու համեղ գրիչը հանդիսանում էր կենդանի կամուրջներից մեկը, որ կապում էր սփյուռքահայ հայրենաբաղձ հայ ժողովրդի հետաքրքրությունն ու սերը Սովետական մեր ծաղկող Հայրենիքի պայծառ առօրյայի հետ։ «Բաբրիկների» այդ շարքում հավետ կբարեխնն Աղավնու անկեղծ սերն ու նվիրվածությունը մեր հարազատ ժողովրդի և մեր Սովետական Հայրենիքի նկատմամբ։

Աղավնու պայծառ հիշատակը միշտ վառ կմնա ինչպես իր արվեստագետ պաշտոնակիցների ու քարեկամների, այնպես էլ նրա «Բաբրիկներ»-ից ու հոդվածներից հոգեպես սնվող սփյուռքահայ հայրենաբաղձ քնթերցողների սրտերում։

# ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ

## ՊՐՈՖ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ «ՄԻ ԷՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ» ԽՈՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ*

Անդրկովկասյան ժողովուրդների եղբայրությունը սկիզբ է առել խորը անցյալում և սերտ համագործակցության հոգի վրա կոփվել ու ամրացել է տասնյակ դարերի ընթացքում։ Անդրկովկասի բախտակից երեք ժողովուրդները՝ ադրբեջանցիները, հայերը և վրացիները, դարեր շարունակ միասին են պայքարել ազատության և անկախության համար, միասին են աշխատել ու ստեղծագործել և միասին ճաշակել իրենց վիճակված և՛ դառնությունը, և՛ ուրախությունը։

Անդրկովկասի ժողովուրդների հարաբերությունների պատմության մեջ բացառիկ կարևորություն է ունեցել այն ժամանակաշրջանը, երբ եղբայրական երեք ժողովուրդները համատեղ պայքարի են դուրս եկել պարսկա-թյուրքական հարստահարիչների դեմ և աշխատել են թոթափել օտարերկրյա լուծը ողջ ժողովրդի գործուն օգնությամբ։

Ներկա ուսումնասիրությունը՝ «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» խորագրով. նվիրված է այդ պայքարի պատմության մի փոքրիկ հատվածին և ժամանակագրական շրջանակով ընդգրկում է 1723—1728 թվականների պատմական փրկարարությունները։

Անդրկովկասի ժողովուրդները պարսկա-թյուրքական տիրապետության արյունոտ ժամանակաշրջանում (17—18-րդ դ. դ.) ենթարկվեցին լուսնված հարստահարության. ժողովրդից գանձվող քաղաքական և ծանր հարկերը, ինքնիշխան դարձած ֆեոդալների կամայականությունները, ազգային ճնշումը, սիստեմատիկ կրկնվող ասպատակությունները, երկրի անապահովությունը և այլն, հիմնովին քայքայեցին Անդրկովկասի տնտեսական կյանքը և ժողովուրդներին կանգնեցրին ֆիզիկական ոչնչացման փաստի առաջ։ Սակայն Անդրկովկասի ազատասեր ժողովուրդները՝ հայերը, վրացիները և ադրբեջանցիները սարսափելի հնազանդությամբ չտարան օտարերկրյա լուծը—նրանց կյանքի և մահու պայքար մղեցին հանուն իրենց ազատության և անկախության։

Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական ոգեշնչումների առաջ, սակայն, կային մեծ խոչընդոտներ։ Առաջին մեծ խոչընդոտը՝ Թյուրքիան էր, որ անգլո-ֆրանսիական կառավարությունների հրահրմամբ, աշխատում էր օգտվել պարսկաստանում Սեֆյան դինաստիայի կազմալուծված վիճակից՝ գրավել Վրաստանը և Ադրբեջանը ու դուրս գալ Կասպից ծով՝ մշտական վտանգի տակ պահելու ռուսական սահմանը։ Թյուրքիան միաժամանակ ցանկանում էր նվաճել Հյուսիսային Կովկասը, որտեղ նա վտահելի հենարան ուներ ի դեմս Դաղստանի մի շարք թյուրքական ֆեոդալների և նրանց օգտագործել ընդդեմ Ռուսաստանի։

Սուլթանական Թյուրքիայի այս նվաճողական ձգտումներին ծանոթ էր ռուսական արքունիքը և, բնական է, նա չէր ցանկանում, որ Թյուրքիան հաստատվի Կասպից ծովի ափին՝ մշտական սպառնալիք հանդիսանալով իր հարավային սահմանի վրա։

Ռուսական քաղաքականությունն Անդրկովկասում համընկնում էր Անդրկովկասի ժողովուրդների ձգտումներին։ Անդրկովկասի ժողովուրդներն իրենց հայացքը որոշակի ուղղել էին դեպի հյուսիս, դեպի Ռուսաստան։ Ըստ որում, դեպի Ռուսաստան էր ուղղված, հիմնականում, բոլոր խավերի ներկայացուցիչների հայացքը և, իհարկե, ամեն մեկը ելնում էր իր դասային և դասակարգային շահերից։

Մեզ հասած վավերագրերից երևում է, որ Պետրոս I-ի պատվիրակ Իվան-Կարապետը ժամանելով Հայկական Սղնախները, սերտ հարաբերության մեջ է մտել Վրաստանի քաղաքական ղեկավար շրջանի հետ և աշխատել է անել կարելին՝ ամրացնելու վրաց և հայկական ղեկավար շրջանում գոյություն ունեցող ռազմա-քաղաքական դաշինքը և ավելի սերտացնելու հայերի և վրացիների հարաբերությունները Ռուսաստանի հետ։ (Հայ-վրացական ռազմա-քաղաքական այդ դաշինքի մասին մանրամասն խոսել է Լիսցովը իր «Персидский поход Петра I» խորագրով արժեքավոր աշխատության մեջ)։

Պատվիրակը Հայկական Սղնախներում գտնված ժամանակ գրագրություն է մտել Վրաց Վախտանգ թագավորի, նրա որդի Շահնավազ խանի և Մահմադ Ղուլի խանի հետ և նրանցից տեղեկություններ ստացել Վրաստանի դրության մասին։ Այս գրագրությունը, ինչպես Վախտանգ թագավորի սուրհանդակ Նիկոլոս Մահակաձեի պատվիրակին Վրաստանի մասին տված տեղեկությունը, որը գրի է առնվել, հասել են մեզ և արժեքավոր վավերագրեր են ինչպես եղբայրական Վրաստանի, այնպես և Անդրկովկասի ժողովուրդների Ռուսաստանի հետ ունեցած հարաբերությունների պատմության համար։

Նշված վավերագրերից առանձնապես արժեքավոր է պատվիրակի մի նամակը Վախտանգին, որից երևում է, որ Պետրոս I-ը մտահոգված է եղել Վրաստանում ստեղծված կացությամբ և մեծ հետաքրքրությամբ հետևել տեղի ունեցող իրադարձություններին։ Ուշադրության արժանի է Գան Նասրի յուզբաշու մի

---

* Պրոֆ. Ա. Աբրահամյանի ներկա աշխատությունը լույս է տեսել այս տարի ու բարձր գնահատության արժանացել սովետական հայագիտության կողմից։ Անհրաժեշտ ենք համարում այստեղ տպագրել այդ աշխատության համառոտ ամփոփումը։— Խմբ.։

նամակն այն մասին, որ՝ «Վախտանգի, Շահնավազի, Մամիամդ Ղուլի խանի և մեր հայոց խոսքը մեկ է— նի դ ողորմածությանն ենք սպասում», այսինքն՝ ռուսական զորքի Անդրկովկաս գալուն ենք սպասում։

Վախտանգ VI-ի ու նրա որդի Շահնավազի Ռուսաստան տեղափոխվելուց հետո, նրանց և Սղնախների քաղաքական շրջանի միջև համագործակցությունը՝ Անդրկովկասի ազատագրման խնդրում չի դադարել։ Վրացական թագավորը և դահաժառանգը շարունակել են սերտ փոխհարաբերություններ պահպանել Անդրկովկասի հետ և ակտիվ միջնորդություններ են արել ռուսական արքունիքում այս կամ այն խնդրում։ Տեղացիները հաճախ նրանց միջնորդությանն են դիմել ռուսական արքունիքին ուղարկած իրենց դիմումների մեջ։

Նորահայտ վավերագրերը գալիս են անհերքելի հաստատելու այն իրողությունը, որ Արևելյան Հայաստանի բնակչությունն ևս նիմանկանում ունեցել է օրոշակի ռուսական «հյուսիսային» օրիենտացիա։ Ըստ որում, այդ օրիենտացիան ընդհանուր է եղել հայ հասարակական լայն շրջանի համար։ Պարզվում է, որ քաղաքական ղեկավար շրջանը գրություն է ուղարկել Ղարաբաղ՝ Ավան, Թարխան և Միրզա յուզբաշիների վրա և խնդրվել նրանց հայտարարել Պետրոս I-ի պատվիրակին, որ տեղի հայ բնակչությունը «հյուսիսից (այսինքն՝ ռուսներից) է ակնկալում իր փրկությունը»։

Հայտնաբերված մի վավերագրից երևում է, որ Արևելյան Հայաստանի շրջաններից Գեղարքունիքի բնակիչներն ևս, Սղնախների մելիքների օրինակով, 1724 թվականի մարտի 16-ին հավատարմագիր են կազմել՝ ռուսական արքունիքին հպատակ դառնալու և նրան «հավատարմությամբ ծառայելու մասին և Իվան-Կարապետի միջոցով այն ուղարկել են արքունիք։ Նշված հավատարմագիրը հասել է մեզ։

Ինչպես պարզվում է, փոր նշանակությամբ, Երևանի հերոսամարտից պակաս չի եղել Լոռվա ճակատամարտը թյուրքական բանակի դեմ, որը տեղի է ունեցել 1724 թվականի ապրիլ-մայիս ամիսներին և որի մասին, դժբախտաբար, ոչ մի տեղեկություն չի պահել հայկական մատենագրությունը և ոչ էլ այն արժանացել է հայագետներից որևէ մեկի ուշադրությանը։

Նորահայտ վավերագրերը գալիս են հաստատելու սերտ բարեկամական այն կապը, որ գոյություն է ունեցել Սյունիքի ազատագրական շրջանի և Վրաստանի ու Ռուսաստանի միջև։ Պարզվում է, որ Պետրոս I-ի պատվիրակը անձամբ եղել է Սյունիքում և ամեն կերպ աշխատել է նպաստել նրա զինական ուժի կազմակերպմանն ու հզորացմանը։

Պատվիրակը Սյունիքում եղած ժամանակ իր հետ ունեցել է Պետրոս I-ի հրովարտակը, որի հետ ծանոթացրել է տեղացիներին և նրանց ռուսական հպատակության տակ վերցրել։ Պատվիրակի հետ Սյունիքում եղել են Սղնախների զորքերը, որոնք օգնության են գնացել սյունեցիներին նրանց պայքարի ծանր օրերին։ Իսկ այս բոլորից հետևում է, որ Սյունիքի պայքարը առանձնացած չի եղել Հայաստանի և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումներից, ինչպես գնդում են որոշ հայագետներ, այլ կապված է եղել նրանց հետ։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի մի վավերագրում պահվել են արժեքավոր տեղեկություններ Սյունիքի ազատագրական շարժման ականավոր ղեկավար Դավիթ-Բեկի անձնավորության մասին։ Նշված վավերագրից երևում է, որ Դավիթ-Բեկը գեղարքունեցի է, սերվում է Աստվածատրյան ցեղատոհմից։ Նրա հայրն է հանդիսացել Ալիխանը, նա ունեցել է Մխիթար անունով մի որդի, որի զավակներից մեկն է եղել ռուս բանակի փոխ-զնդապետ Ստեփանոսը։

Թյուրքական բանակի անմիջական սպառնալիքի տակ, Ղարաբաղի մելիքական շրջանները սկսում են ավելի համախմբվել, ամրանալ և միասնական ճակատ են կազմում ընդհանուր թշնամու դեմ։ Ղարաբաղի հայությունը արդ թափով նախապատրաստվում է դիմավորելու թյուրքական ներխուժանը։ Ինքնապաշտպանության գործի կազմակերպման ուղղությամբ մեծ աշխատանք են կատարում նաև կաթողիկոս Հասան-Ջալալյանը և Պետրոս I-ի պատվիրակ Իվան-Կարապետը։

Թյուրքական բանակը Ղարաբաղի վրա հարձակումն սկսում է 1725 թվականի գարնանը։ Թյուրքերը մտադիր էին կարճ ժամանակում գրավել Ղարաբաղը, մտնել Շամախի և այնտեղից դուրս գալ Կասպից ծով։ Սակայն ղարաբաղցիները ցուցաբերում են անօրինակ խիզախություն թյուրքական կազմակերպված բանակին դիմադրելու գործում։ Ղարաբաղի լեռնցիները, համախմբված, ծառայել են թյուրքական բանակի դեմ և թույլ չեն տվել նրան առաջ շարժվելու։ Ընդորում, նրանց թյուրքական կազմակերպված բանակին դիմադրեցին բազմաթիվ հակատամարտերում և մի շարք տարիներ։

Թյուրքական առաջին զորամասը փորձում է Ղարաբաղ մտնել 1725 թվականի մարտի 1-ին։ Այդ զորամասը, որը բաղկացած էր 4.700 հոգուց և ղեկավարվում էր Շահին, Սայահ և Ալի փաշաների կողմից, անցնում է Գանձակի հարավից և մտնում Վարանդա։ Տեղացիները հանկարծակի գալով, զրում են, որ չեն կարող դիմադրել իրենցից ուժեղ և թվապես գերակշռող թշնամուն, կեղծ հպատակություն են ցույց տալիս, ապա եկած զորամասը հարյուրյակներով բաժանվում գյուղերի վրա, մի գիշերվա մեջ բոլորին կոտորում. 4.000 հոգուց մի քանի հարյուր մարդ հազիվ է հաջողվում փախչել ազատվել։ Ղարաբաղցիներն ազատում են բավականին թվով գերիներ։

Ղարաբաղի հայությունը թյուրքական բանակի դեմ շարունակում է իր հերոսական կռիվները ամբողջ 1726 թվականի ընթացքում։ Ղարաբաղցիների՝ թյուրքերի դեմ 1726 թվականին մղած կռիվներից առանձին ուշադրության արժանի են հոկտեմբերի 10-ի և նոյեմբերի 15-ի ճակատամարտերը։ Ճակատամարտերի ժամանակ ղարաբաղցիներին հաջողվել է թյուրքական բանակից կոտորել մինչև 800 հոգի, որոնց թվում նրանց հրամանատարը՝ Դրխշիմի աղային։

Նոյնահայտ այլ նյութերից երևում է, որ Ղարաբաղի պայքարը թյուրքական բանակի դեմ, իրոք, հանդիսացել է լուրջ իրադարձություն, հարուստ՝ անօրինակ սխրագործություններով։ Ղարաբաղի հայությունը տարիներ շարունակ կռվել է թյուրքական կազմակերպված հսկա բանակի դեմ և բազմաթիվ հաղթանակներ տարել։

Գեներալ Դոլգորուկովը ռուսական արքունիքին ուղարկած իր մի զեկուցագրում զարմանք է հայտնել, որ՝ «Միայն Աստված է պահպանում հայերին, թե չէ մարդկային խելքից բարձր է հասկանալ, թե դեռ ինչպես են դիմանում այդքան զորեղ թշնամու առաջ»։

Սղնախների հայ զինվորության խիզախությունն ու անվեհերությունը թյուրք հափշտակիչների դեմ պատկերացնելու համար, հետաքրքիր է Մարտիրոս անունով մեկի 1726 թվականի հունվարին Դերբենդի պարետին ուղարկած հետևյալ տեղեկությունը. «Թյուրքական փաշան Դանձակից դրել է Սղնախների հայերին՝ որպեսզի նրանք ուղարկեն հինգ տարվա հարկը, ասելով՝ «Եթե դրամը ձեզ մոտ պատրաստ է, հանձնեք ուղարկել, իսկ եթե պատրաստ չէ, ապա հանձնեք պատրաստել բոլոր տարիների համար, իսկ եթե չուղարկեք, այն ժամանակ մենք կգանք և ուժով ձեզնից կվերցնենք»։ Սղնախների հայերը պատասխանել են նրան. «Ոչ մոտ դրամ չկա, այլ դրամի փոխարեն ամեն մի մարդու մոտ մի հրացան կա և մի ատր. եթե ցանկանում եք գալ, եկե՛ք, մենք, «Աստծու օգնությամբ, պատրաստ ենք ձեզ դիմավորելու և ձեզանից չենք վախենում»։

Պատվիրակը տեսնում էր Ղարաբաղի հայության ծանր, հուսահատական վիճակը, նա զգում էր, որ Ղարաբաղի մի բուռ հայությունը ի վիճակի չէ պաշտպանվել թյուրքական կազմակերպված բանակներից, ուստի և իր զեկուցագրերում անվերջ պահանջում էր ռուսական արքունիքից՝ շտապ ուղարկել օգնական զորք։ Նրա կարծիքով, նման օգնությունը, թեկուզ և փոքր չափով, կարող էր բարոյական խոշոր նշանակություն ունենալ. տեղացիները, ոգեորված այդ օգնությամբ, ավելի համարձակ դուրս կգային թշնամու դեմ և ավելի հաստատակամ կկռվեին։

Սակայն Անդրկովկասի ժողովուրդներն այդ ժամանակ Ռուսաստանից օգնություն չստացան ոչ թե այն պատճառով, որ ռուսական արքունիքը չէր ցանկանում օգնել Անդրկովկասի ժողովուրդներին, այլ որ անգլո-ֆրանսիական կառավարող շրջանները այդ ժամանակ հանդես եկան Անդրկովկասի ազատագրական շարժումները խանգարողի դերում. նրանք ստեղծեցին բոլոր տեսակ խոչընդոտներ՝ խանգարելու ռուսաց օգնությունը Անդրկովկասի ժողովուրդներին։

Ազատասեր Անդրկովկասի ժողովուրդները շարունակեցին իրենց պայքարը թյուրք-պարսկական դավիչների դեմ իրենց ազատության և անկախության համար հետագայում ևս։ Սակայն 18-րդ դարում լիրագործվեց Անդրկովկասի ժողովուրդների դարավոր իղձը՝ թոթափելու օտարերկրյա լուծն իրենց ուսերից։

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին տեղի ունեցավ 19-րդ դարի առաջին երեսնամյակում։— Այդ՝ Անդրկովկասի ժողովուրդների պատմության մեջ շրջադարձային նշանակություն ունեցող կարևոր իրադարձություն էր։ Պատմական այդ իրադարձության շնորհիվ Անդրկովկասի ժողովուրդներն ազատվեցին ֆիզիկական ոչնչացումից, տնտեսական զարգացման լայն ուղու վրա կանգնեցին և, ամենից կարևորը, իրենց բախտը կապեցին ռուս ազնիվ ժողովրդի բախտին՝ հաղորդակից լինելով ռուս առաջավոր գաղափարներին և ռուսական մեծ կուլտուրային։

Անդրկովկասի միացումը, սակայն, սոցիալական ու քաղաքական ազատություն չբերեց Անդրկովկասի ժողովուրդներին, այդ հնարավոր եղավ միայն Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայից հետո, սովետական կենսաբեր արևի տակ։

Բ.